

6 .07. 2013

891.71

2-23

mm

ԱՆԿԱՅԻՆ ԶԱՆԻՎՈՎ


19 NOV 2007
22 JUN 2007

ՀԵՌԱՎՈՐ ՔՈՒՅՐԵՐ

ՔԱՏՄՎԱԾՔՆԵՐ

3014

1010
42229



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ

ԿԱՆԱԶ ՍԱՐԸ

I

— Ի՞նչ պատահեց քեզ, Ձերա: Ի՞նչու դու այդպես շուտ վերադարձար արոտատեղից: Ի՞նչ վրձերներ են անասունները: Դե՛, պատասխանի՛ր:

Հազիվ շունչը քաշելով, յերիտասարդ սենյակեղունին, ավելի ու ավելի վրդովվելով, սկսեց.

— Հա՛յր, յես, ինչպես միշտ, այս անգամ ել արածեցնում եյի մեր զբերուններին ավերակ վիզարայի՝) հետևը: Արևն ստիպեց ինձ ստվերի տակ թաքնվել, վորտեղից յես հետևում եյի կենդանիներին: Հանկարծ այն արմավենիների հետևից, վորոնց ստվերում յես հանգստանում եյի, մի թեթև խշխշոց լսվեց: Սկզբում յես ուշադրություն չդարձրի՝ կարծելով, վոր վանականներ են ման գալիս և աղոթագրքերի համար կտրտում են արմավենու նեղ և յերկար տերևները: Խշխշոցը շարունակաբար ստատկանում եր և հանկարծ...

Այստեղ աղջիկն սկսեց լաց լինել:

Նա սև, ձիթապտղայերանգ, մետաքսա-

Պատ խմբադիր—Արամ Հայրյան Լեզվական խմբադիր—Խ Այվազյան, Թարգմանիչ՝ Զ. Հովհաննիսյան. Սրբագրիչ—Զ. Սառիկյան. Գլավ. հտ № 8458 (բ). Հրատ. 2288. Պատվեր. 394. Տիրաժ 3000 Հանձնված է արտագրության 10 փավորի 1934 թ. Ստորագրված է տպագրության 20 մարտի 1934 թ.

նման մազերը, վոր հագիւլ եյին պահում կրի-
այի վոսկրե վարսակալները, թափվեցին մինչև
գետին:

— Ի՞նչ պատահեց քեզ, Ձե՛րա: Շարունա-
կիր պատմել: Պիտի չտապել գնալ անասուննե-
րի հետևից, յեթե վոչ՝ այն ծուլլ տամիլները
կքշեն մեր կենդանիներին:

— Լավ, արտասանեց աղջիկը, թուխ ա-
փով սրբելով դէռ արտասուքով լի աչքե-
րը. — Ինձ վրա մի մարդ հարձակվեց: Հա՛յր, յե-
թե դա վագր կամ մի թունավոր ոճ լիներ, յես
այնպես չեյի վախենա: Դեռ մանուկ հասա-
կումս դու ինձ սովորեցնում եյիր՝ չվախենալ
գաղաններից, բայց մարդուց, այդ մարդուց
յես վախեցա:

Նա անդլիացի յեր...

— Շո՛ւն. ի՞նչ եր ուզում նա... Ո՞ր է քո
սանրը... հանկարծ հարցրեց Դատորը՝ Ձերայի
հայրը:

— Անդլիացին տարավ յուր հետ, բայց
յերգվում եմ Բուդդայի ատամով, հա՛յր՝ նրան
միայն իմ սանրը հասավ:

Բայց մի՞թե մայրդ քեզ չեր աւել, վոր դու
պիտի պահպանես սանրդ այնպես, ինչպես կու
սակաս պատիվդ:

Ձերոն լուռ եր:

— Լսիր, խիստ հրամայեց Դատորն աղջ-
կան, — դու՛ ինչ ել վոր լինի, պիտի հետ բե-
րես քո սանրը: Սպիտակ շունը հիմա կպարծե-
նա, վոր նա...

— Հա՛յր, ահա՛ մեր անասունները — ընդհա-
տեց նրան Ձերան:

Ձերունների մի փոքրիկ հոտ, կարճահա-
սակ, միասապատ կենդանիներ, յոթը-տասը
գլուխ միայն, — իրենց կարճ յեղջյուրները ցած
ուղղած, սրընթաց վազում եյին դեպի խոսող-
ները:

Արեվի ճառագայթները սահեցին կենդա-
նիների մորթու գույնզգույն բծերի վրա: Նրա-
նի՞ց արդյոք, վոր Ձերան ուրախացավ կենդա-
նիների վերադարձին, թե հոր խոսքերը, վոր
նրան վրեժխնդրության եյին կանչում, ստի-
պեցին աղջկան հիշել հին պատմությունները՝
հարազատ ժողովրդի վաղեմի առաքինություն-
ների մասին, յերբ նա ինքն եր կառավարում
Յեյլոնը — առյուծների կղզին — Ձերան բացական-
չեց.

— Հայ՛ր, կարող ես ինձ նետել ընձառ-
յուծների առաջ, վոր պատառտեն, յեթե յես
իմ սանրս չզտնեմ:

II

Մայիսի սկիզբն եր:

Այն գյուղը, վորտեղ Դատորի խրճիթն եր,
քնկած եր կղզու մայրաքաղաք Կոլումբոյի ա-
րեւմտյան կողմում:

Խրճիթը մի փոքրիկ կավաշեն տնակ եր,
տուանց լուսամուտների, հողե հատակով և ար-
մավենու տերեւներով ծածկված տանիքով:
Հատակին հարդե խսիր, մի քանի ինքնադործ

թասեր, չլաճե դդում՝ ջրի համար: Ահա յերեք որ ու գիշեր ե անցել արդեն, վոր սենդաբեզինները նստած եյին իրենց խրճիթներում:

Փչում եր մուսոնը²⁾:

Դեռ մի քանի որ առաջ, տեղացիք դդում եյին քամու մոտենալը: Ծովի վրայի վորոտները փոխվեցին տարորինակ սպառողական հանգստի: Շատ չանցած, փոթորկի սև ամպերն իջան ցամաքի վրա, և մի սարսափելի, վաղուց չտեսնված առատահոս անձրև տեղաց:

Ամպի վորոտները լսվում եյին անընդհատ մեկը մյուսի հետևից: Անասունները, վորոնք քչել եյին նեղ, կեղտոտ դոմերը, ցնցվում եյին ամպերի վորոտից և ամեն բոպե բռնկվող կայծակից:

Ձերունները, վոր վոչ ստվեր են սիրում և վոչ ջուր, ավելի ցած եյին իջեցնում իրենց միշտ կռացած դնչերը:

Արևադարձային անձրև եր տեղում:

Փոքրիկ գետակները, վորոնց վրայով խաղալով թռչում եյին յերեխաները, վաղուց արդեն դուրս եյին յեկել արիերից և կատաղի հոսանքով դեպի ովկիանոս եյին նետվում:

Բրնձի դաշտերը, քառակուսի մարգերը, վոր առաջ պայծառ, կանաչ զմրուխտի մատղաշ նորընձյուղներ եյին, հիմա ծածկված եյին ջրով, և յեթե մի քանի որ ել այդպես շարու-

նակվեր, բնակիչները կմատնվեյին սովամահության:

Ահադին չոր ջրամբարները, վոր, ըստ ավանդության, կղզու դեռ առաջին տերերն եյին զառույցել, լցված եյին ջրով:

Միայն ձկնորսները, վորոնց խրճիթները ցրված եյին ծովի մոտ, համբերությամբ սպասում եյին հեղեղի վերջանալուն. նրանք պիտեյին, վոր մուսոնը նրանց հարուստ վորս կբերի:

Դեռ շարունակվում եր այդ անընդհատ անձրևը, դեռ վորոտում եր ամպը և սարե կայծակը հազար ու մի կտոր եր անում գետին վախված յերկինքը, սարե կայծակը³⁾ Ձերան արդեն վաղում եր դեպի վիզարան:

Յևտկադուրան—կախարդող քուրմը, վոր ապրում եր գյուղի հեռավոր ծայրում, շատ զարմացավ, յերբ մի կանացի ձայն կանչեց նրան.

— Բխայի⁴⁾, ներս թող ինձ:

— Ինչ գործ ունես դու այստեղ, Ձերա, այսպիսի յեղանակին—հարցրեց կախարդողը, թքելով արնանման կարմիր թուփը:

Նա բեռել եր ծամում, տեղացիների սիրելի ծամոնը—կոկսի մի կտոր՝ պղպեղի տերեվով փաթաթած:

Ձերան պատմեց քուրմին յուր վիչն ու հոր հրամանը:

Ձեռքդ մեկնի՝ր կրակարանին և կրկնի

իմ հետևից պիրիտի կախարդական խոսքերը, — հանդիսավոր կերպով ասաց քուրմը:

Ձերան խոնարհությամբ հպատակվեց:

— Ձի ծաղկում ծառն առանց տերեւիլի, չորանում է մարմինս, ինչպես ծառը...

Ում տանը հանգիստ չկա, անտառի յե նման այդ տունը: Ո՛ր, խարի, ո՛ր սիրվա:

— Ուզնի՛ր ինձ կորցրածս վերադարձնելու, վերոյհետև մեծ ես դու... Հետո քուրմը վառած կրակարանի վրա բռնելով մեխը և Ձերային անծանոթ լեզվով կախարդական խոսքեր ասելով, խփեց մեխը ծառին: Դրանից հետո նա մեխին կապեց դեղին դափրանով ներկած թելը և նորից Ձերային անհասկանալի խոսքեր ասելով, թելը հանեց:

— Կարող ես գնալ և վոչվոքից չվտխենալ:

Ուրախությունից իրեն կորցրած, աղջիկը սլացավ դեպի յուր խրճիթը, չղգալով վո՛չ անձրեվը և վո՛չ ել ովկյանոսից փչող քոմին:

III

Այսօր Դատորի ընտանիքում, և վոչ միայն նրա, այլ և ամբողջ գյուղում տոն է, Մանարի Դատորի վորդին, վորին բոլորը վաղուց կորած եյին համարում, վերադարձավ տուն:

— Դու բոլորովին փոխվել ես, Մանա՛ր, քեզ ճանաչել չի կարելի: Յե՛վ բոլորովին սպիտակների նման ես հագնված:

Սինգալեզիների ազգային զգեստի գոտու

ճոտ ամրացրած՝ մինչև կրունկները հասնող յերկար շրջազգեստի, բաճկոնի և դլիխի մարմա չէ ծածկոցի փոխարեն, Մանարը հագել եր նա— վաստու հագուստ և վոր ավելի դարմացրեց նրա հայրենակիցներին, նա վոտնաման ուներ՝ ամուր, դեղին կոշիկներ:

— Պատմի՛ր, ո՞ւր եյիր կորել:

— Այն ժամանակից, յերբ թողեցի մեր տունը, յես նավաստի դարձա անգլիական ապրանքատար մի չոգենավի վրա: Ճիշտ է, մինչ այդ յես աշխատում եյի Կոլումբոյում իբրև բռնակիր, նավահանգստում, մարգարիտներ եյի վորսում... ծանր աշխատանք եր այդ, բայց նավի վրա յել թեթև չեր: Սակայն, յես ամեն բանի սովորեցի և տեսնում ես՝ ի՞նչ արիտղա յեմ դարձել:

Յե՛վ նրա ամբողջ ընտանիքն ու ամբողջ գյուղը չեյին դադարում հիանալ՝ նայելով նրա ծովի աղաջրով այրված դեմքին:

— Յես յեղել եմ հեռու յերկրներում: Շատ ովկյանոսներ և ծովեր եմ ման յեկել, շատ քաղաքներ եմ տեսել: Յես յեղել եմ և այն յերկրում, ուր մշտական ձյուն է...

Ինչե՛ր չեմ տեսել և լսել այնտեղ: Այն յերկիրը կառավարում են ահա այսպիսի նավաստիներ և մեզ նման հասարակ հովիվներ: Այնտեղ մի մեծ մարդ կա, վորն ասում է, թե մենք ել՝ սենգալեզիք, պիտի մեր յերկիրը կառավարենք:

— Ի՞նչ ես ասում, մի՞թե դա կարելի բան
է:— Լավեցին շուրջը զարմացած ձայներ:

— Ի՞նչ վոր լսել եմ, այն ել ասում եմ:

Ձերան, լայն բացարած աչքերով և բերանով, ազահուլթյամբ լսում վեր յեղբոր ասած ամեն մի խոսքը:

Յերբ դրացիները հեռացան և Մանարի հայացքը պատահաբար ընկավ քրոջ ձեռքում սեղմած թելին. նա հարցրեց.

— Այս ի՞նչ է, Ձերա:

Աղջիկը պատմեց վրդովվելով Մանարին բոլոր պատհածի մասին:

Մանարն այլևս չեր հավատում քուրմերին և կախարդներին: Բայց նրա մեջ բռնկվեց անգլիացուց վրեժ առնելու ցանկությունը՝ քրոջ խայտառակության համար:

— Սպիտակ չո՛ւն, նա ինձանից չի ազատվիլ:

Ձերան հոգնել էր բազմաթիվ տպավորություններից: Յեղբոր պատմածը մեծ մարդու մասին, ընկել էր նրա սիրտը...

IV

— Ժամանակ է, Ձերա, վեր կաց. — զարթեցրեց նրան Մանարը:

Ձերան վեր թռավ հատակին փռած խորի վրայից և վազեց դեպի յեղբայրը:

— Արեմն արդեն ծագել է, իսկ դու ծուլ: Ղեռ քնած ես, կատակ եր անում քրոջ հետ Մա—

նարը:— Ա՛յ, թե քո պետը լիներ մեր նավի յենթասպան, նա քեզ ցույց կտար, թե թավալելն ինչպե՞ս կլինի:

Շտապ ուտելուց հետո, Մանարն ու Ձերան դուրս յեկան տնից:

Հիանալի առավոտ էր:

Առավոտվա թեթև անձրեվից նոր լվացված և արեվի առաջին ճառագայթներից չորացած կոկոսի արմավենիները սիրալիր վողջունում էին ճանապարհորդներին:

Թեթև լեռնային քամի յեր փչում:

Կինջինայի լայնատերև ծառերը պատահում էին ճանապարհի սմբողջ տարածության վրա, հայրենի գյուղից մինչև կղզու մայրաքաղաքը— Կոլումբոն, Մանարի և Ձերայի ճանապարհորդության վերջնակետը:

— Դու մեզ մոտ յերկա՞ր կմնաս, — հարցրեց աղջիկը յեղբորը:

— Կմնամ մինչեւ թեյի յեկրորդ բերքահավաքը, իսկ հետո հետ կդառնամ դեպի նավ: Ընտելացել եմ յես ընկերներիս, հիանալի տղաներ են: Նրանք զանազանություն չեն դնում սեփի յեմ սպիտակի միջև, վորովհետև բոլորս ել միատեսակ աշխատում ենք: Այ, մեր նավապետը և նրա յենթասպան— նրանք զազաններ են: Մենք, հասարակ նավաստիներս, շատ ենք տուժում նրանցից: Մի փոքրիկ զանցառություն— իսկույն պատժում են:

— Իսկ վո՞րտեղ է հիմա ձեր չոգենավը:

— Նա հիմա ուժոնտի յէ, նորոգում են, հետո

ելի կմտնի Կոլումբո, այն ժամանակ, հայդա, Մանար... Վիրա պոմալն... Մայն... Ստոպորի... Ստոպ...

Ինչե՞ր ես ասում,—զարմացած հարցրեց Ջերան,— անգլիկերե՞ն ե։

— Դրանք ծովային հրամաններ են, խենթ։

Կեսուրին, յերբ արեւը ավելի կիզիչ դարձավ, ճամբորդները ջրվեժներից մեկի մոտ, վորը հաճախ է պատահում Կոլումբո տանող ճանապարհին, հագեցրին իրենց ծարավը, լվացին փոշոտած վրտքերը և նստեցին արմավենիների ստվերում։

— Դու կարծում ես, վոր այդ թելը կոգնիքեղ՝ հետ առնել անգլիացու դողացած կանաչ սանրը.— մի փոքր անց, հարցրեց Մանարը։

— Այո, կարմրատակեց Ջերան.— այդ ինձ ասաց Յակադուրա քուրմը, իսկ նա սուրբ մարդ է և Բուդդան միշտ կատարում է նրացանկությունները։

— Յակադուրան սուրբ մարդ է... մտահոգ յերկարացրեց Մանարը և սուլեց։

— Նա բժշկեց մի շիվահար կնոջ. նա ոգնեց մի անգամ մեր դրացի կնոջը՝ գտնել կորած սափորը...

— Իսկ յես քեզ ասում եմ, Ջերա, վոր մենք ինքներս պիտի աշխատենք հաջողություն ունենալ։ Յակադուրան մեզ վոչ մի բանով չի կարող ոգնել։

Ահա իմ բռունցքներս և այս բանը,—Մանարը խփեց գրպանին, վորտեղ ատրճանակ էր

պահած,—կոգնեն մեզ քո կանաչ սանրը դրանիւ և անգլիացուն պատժել։

Ջերան հիացած, փաթաթվեց յեղբորը։

— Փառք Բուդդային, Մանա՛ր, վոր դու այսպիսի ժամանակ յեկար։

— Տուր ինձ այդ թելը,—ժպտաց Մանարը, ձեռքը մեկնելով։

— Վոչ, վոչ վոչ մի կերպ։ Դու կարող ես ինձ վրա բարկանալ, բայց թելը յես քեզ յերբեք չեմ տալ. նա պիտի ոգնի ինձ ամեն բանում, առանց թելի հաջողություն չի լինի։

— Ինչպես կուգես, Ջերա, քո դործն ե։ Միայն ասում եմ, վոր թելն այստեղ նշանակություն չունի։ Առանց նրան ել մենք ամեն ինչ կանենք։

Աղջիկը բացասական կերպով գլուխը չարժեց և այնպես ուժգին, վոր յեղբայրն ասաց նրան կատակով։

— Կամաց, Ջերա, յեթե վոչ՝ գլուխդ կընկնի։ Այն ժամանակ սանրն ել պետք չի լինի։

Արևն արդեն մար էր մտնում։ Պղպեղ հիշեցնող արեւը կարծես մեկնում էր հեռու լեռների։

Սկսեց արագությամբ մթնել։ Ստվերներն արդեն ընկնում էյին իրար հետեից, յերբ Ջերան և Մանարը հասան Կոլումբո։

Համադյուղացիների մոտ, վոր մի քանի տարի առաջ տեղափոխվել էյին մայրաքաղաք, նրանք գտան գրկաբաց ընդունելություն։

Մյուս առաւելոտ Մանարն արթնանալով,
տեսավ քրոջը, վորն այս անգամ իրենից վազ
եր վեր կացել:

Ձերան նստած եր յեղբոր վոտքերի մոտ և
թափ եր տալիս նրա վրայից փոշու յուրաքանչե-
ւ յուր հատիկ: Այսպես են վերաբերվում կանայք
իրենց հորը, ամուսնուն և յեղբորը՝ ցույց
տալու իրենց հարգանքը:

Արթնացած Մանարի հարցը. «այդ ինչ ես
անում», վոր անսպասելի յեր Ձերայի համար,
չփոթեցրեց նրան:

— Վեր կաց, Մանար, տեսնո՞ւմ ես, հիմա
յես եմ ստիպված քեզ արթնացնելու: Իսկ յես
չատ քիչ եմ քնել. մենք համարյա ամբողջ
գիշերը խոսեցինք:

Մի թեթեւ բարձրանալով թաթերի վրա,
հենվելով խորին, Մանարն արագ՝ նավաստի-
ների նման, վոտքի յելավ:

Մի քանի րոպեյից հետո նա բոլորովին
պատրաստ եր:

— Իսկ դու կճանաչե՞ս անգլիացուն, չե՞ր
վոր նրանք շատ նման են իրար:

— Անհանգիստ մի լինիր, յեղբայր, այդ
անգլիացուն յես միշտ կճանաչեմ:

V

Ի՞նչ գեղեցիկ ե տներ են: Այս ի՞նչ ե, հիմա
նում եր Ձերան մի տեսածով, նա սուտիկ
անգամն եր տեսնում քաղաք:

— Այս րոպեյիս մենք գտնվում ենք այն-

տեղ, վորտեղ ապրում են միայն սպիտակները:
Տեսնո՞ւմ ես, ինչ լավ տներ ունեն այդ շները:
Շրջապատված այգիներով, պուրակներով,
փոքրիկ տնկած անտառներով, փոված եր յեվ-
րոպական թաղամասը:

Այստեղ գլխավորապես ապրում էյին ան-
գլիացիք, հոլանդացիք, ֆրանսիացիք, պորտու-
գալացիք: Իսկ տեղական մասը... ծուռ ու
նեղ նրբանցքներ՝ լցված կեղտոտ խրճիթնե-
րով:

Այն ժամանակ, յերբ ոտարյերկրացիների
բնակարանները բաղկացած էյին բազմ-
աթիվ սենյակներից և տանտիրոջ հրա-
մայողական «բոյո» (տղա) ճշոցին՝ հաճախ
վազելով գալիս եր սպիտակած մազերով ծե-
րունի, վոր պատրաստ վեր կանչողի հենց առա-
ջին հրամանը կատարելու, տեղացու բազմա-
մարդ ընտանիքը տեղավորվում վեր մի վողոր-
մելի խրճիթում, վոր շատ քիչ եր տարբեր-
վում գյուղական շինություններից:

Մի փոքրիկ կրակարան, վոր տեղացի-
ներին ծառայում եր իբրեւ խոհանոց, անտանելի
ծխում ե և խրճիթների բնակիչները ստիպված
են չնչել այդ տոխ ծուխը:

— Ինչպես դուր յեկավ քեզ քաղաքը,
Ձերա:

— Յես յերբեք այստեղից չեյի դնա,
այնպես լա՞վ ե աստեղ, — բացականչեց աղջի-
կը:

Մի պահ մտածելուց հետո, ավելացրեց.

— Յես միայն կխղճայի մեր սիրելի գեբուներին, ստիպված կլինեյինք նրանց շատ հեռու արոտատեղեր քշելու: Ո՛ր, միայն թե յես գտնեյի կանաչ սանրս—անսպասելի բացա-կանչեց աղջիկը:—Այն ժամանակ յես բոլորովին յերջանիկ կլինեյի...

Ժամացույցով աշտարակը, վորը կանգնած էր քաղաքի յերկու գլխավոր՝ Չատամի և Թագավորական փողոցների խաչավորման կետում, հիացրեց աղջկան, վոր յերբեք նման բան չեր տեսել:

— Այս ի՞նչ է, Մանա՛ր.

Այդ ժամացույց է, ժամանակն է ցույց տալիս:

— Իսկ այն ի՞նչ փայտ է, վոր շարժվում է այնտեղ:

Մանարն ուսը թոթվեց:

— Հետո բոլորը կպատմեմ, գնանք: Դժվար է այստեղ գտնել այդ անգլիացուն...

— Դե, Ձերա, հիմա յես կճանապարհեմ քեզ Վանդիյենց մոտ, յեթե վո՛չ՝ դու կմոլորվես և ճանապարհը չես գտնի:

— Իսկ սա՞նրը, — կարողացավ միայն բացականչել աղջիկը, դարձապես: Ինչո՞ւ համար մենք յեկանք այստեղ:

— Թո՛ղ, դատարկ բան է, Ձերա. լսիր ինձ. Ի՞նչ սանրի ժամանակ է:

Գնա Վանդիի աղջկերանց հետ խոսիր, չե՞ վոր նրանք քո ընկերուհիներն են յեղել:

— Յես նրանց հիմա յել քո սիրում... բայց

Ի՞նչ կասի հայրս, յեթե մենք վերադառնանք տոանց սանրը գտնելու:

— Մեծ բան է, կգտնենք, թե վո՛չ: Յես նորը եզնեմ քեզ համար, ավելի գեղեցիկը:

Ձերան լուռ եր:

Գնանք ավելի արագ, յեթե վո՛չ կեսոր կդառնա և արեվը մեզ փառավորապես կխորո-վի:

Բրոջն ուղեկցելով դեպի հյուրասեր Վանդիի համեստ տնակը, Մանարը վերադարձավ հետ:


«Միամիտ աղջիկ, նա կարծում է, թե մենք յեկել ենք քաղաք իր կանաչ սանրի համար. — քմծիծաղ տվեց Մանարը:— Սակայն, միանգա-մից մոռացնել տալ իմ հայրենակիցներին սնո-տիսպաշտութունը, իհարկե չի կարելի, մանա վանդ կանանց, վորոնց մեղանում նայում են ինչպես ինչ—վոր ցածր եյակների վրա:

Այս մտքերի մեջ ընկղմված, իր համար համարյա աննկատելի, Մանարը մոտեցավ փոք-րիկ տնակին:

— Հյուսիսային հյուր. — ասաց նա պայմա-նական խոսքերը և ծեծեց յերկաթե շերտով ժլատորեն պատած, վաղուց ժանդոտած փայ-տաշեն դուռը:

Դուռը բացվեց և Մանարը մտավ լամպա-րանման բանով աղոտ լուսավորված մի փոք միկ սենյակ:

— Վողջույն— ընկերներին, — ասաց յե-կողը, մթության մեջ հաղիվ նշմարելով խրճիի բնակչի յերեսերը:



— Վողջույն հյուսիսային հյուրին, նաաիր,
ընկե՛ր.— լավեցին վողգեվորված ձայներ:

Վերջապես Մանարի աչքերն ընտելացան
մթուժյանը և նա պարզ կերպով կարողացավ
տարբերել խոսակիցների դեմքերը:

— Կա՛սի, այդ դո՛ւ յես, թանկագին լարե
կամ.— բացականչեց Մանարը:

— Մանար, հնչեց պատասխանը:

Բարեկամները համբուրվեցին:

— Ինձ ասել եյին, վոր դու կենդանի չես,
Կասի:

— Ինչպես տեսնում ես, յես դեռ կենդա-
նի յեմ, իսկ իմ յեղբորս... հիշո՞ւմ ես, Մա-
նար, զվարճախոս Ձերգին...

— Ի հարկե, ինչպես չեմ հիշում:

— Նրանք գնդակահարեցին նրան՝ բռնա-
կիրների գործադուլը ղեկավարելու համար:

— Փա՛ռք հերոսին:

— Իսկ դու, հեռվի՞ց ես գալիս:

— Այո՛, չըջել եմ ամբողջ աշխարհը:

— Ամբողջ աշխա՞րհը...

— Յեղա նաև Խորհրդային Ռուսաստա-
նում:

— Խորհրդային Ռուսաստանո՞ւմ: Ինչ յեր-
ջանիկ ես, Մանա՛ր, իսկ մենք բոլորս, ահա՛,
դեռ միշտ նստած ենք նույն տեղում:

— Թանգագին ընկերնե՛ր, ձեր աշխատան-
քն այստեղ ավելի պետք է, քան մի վորևե ու-
րիչ տեղ: Իմացե՛ք, վոր բոլոր յերկրների բան-
վորները, և առաջին հերթին ուսս բանվորնե-

րը, հետեվում են ձեր պայքարին: Լեռնագործ-
ների գործադուլի ժամանակ յես Անգլիայում
եյի, յերբ վառելանյութի բացակայության
պատճառով Լոնդոնը պատրաստ եր մթության
մեջ ընկղմվելու: Մեր շուգենավը մի ավելորդ
չարաթ կանգնեց նավահանգստում, վորովհե-
տեմ պահասեց ածուխը: Յեղել եմ և Յավա
կղզում, յերբ ապստամբած մալայեցիներն ու-
գում եյին քչել իրենց դարավոր կեղեքիչ հո-
լանդացիներին, թեև այդ ապստամբությունն
անողաքարար ճնշեցին, սակայն նոր խռովու-
թյան ժամը հեռու չէ: Ձին ժողովրդի կռիվը
յեկվոր անգլիացիների և ամերիկացիների դեմ
հաջողությամբ դարգանում ե... Շուտով այդ
դատարկապորտ ոտարյեղերացիներին դուրս
կլվնդեն Ձինաստանից:

— Շուտ լիներ, չո՛ւտ:

— Ընկերնե՛ր, յես վողջույններ եմ բերել
Ձեզ Անգլիայի և Մովեսաական Ռուսաստանի
բանվորներից և Ձինաստանի ու Յավայի ձեզ
նման բանվորներից: Գիացե՛ք, վոր ձեզ ճնշող-
ների դեմ կատաղի կռվում դուք մենակ չեք:

— Բերե՞լ ես դու մեզ համար լրագրեր,
Մանա՛ր:

— Վո՛չ, յես վոչ մի կերպ չեյի կարող այդ
անել, քանի վոր ճանապարհին հաճախակի
խուզարկություններ եյին լինում և վախենում
եյի բանտարկությունից: Մեր թշնամիները
վերջնականապես գլուխները կորցրել են և
նրանք ամեն տեղ դավադրություն են տես-

նում: Ստեփան, ընկերներս՛ր, միք հուսահատվի՛ր: Յավայում ինձ մի քանի թերթիկներ են տվել, նրանցից մեկը յես պահել եմ՝ մյուսները զգուշության համար պատռեցի:—Ահա նա:

Յեվ խոսողը ձեռքը տարավ կողքի զրպանը. խշխշաց այդ ցանկալի և թանգազին թղթի կտորը—վողջույն հեռավոր, սակայն մոտիկ և հարազատ մալայեցի բանվորներից, վորոնց յերկիրը ներկվել եր թուխ արյան հեղեղներով:

— Ի՞նչպես ե ձեր բնակարանների դուռ-թյուռը, ընկերներս՛ր,—հարցրեց Մանարը:

— Ահա յերրորդ անգամն է, վոր փոխում ենք: Դժվա՛ր, շատ դժվար է աշխատել այս պայմաններում: Ամեն րոպե կարող են բանալ:

— Այստեղից ո՞ւր ես ուղեվորվելու, Մանար, գնանք միասին,—առաջարկեց նրան Կասին:

— Լա՛վ: Մեկնելուց առաջ դարձյալ հղամ. դուցե վորևէ հանձնարարություն կունենաք:

— Անցիր մեզ մոտ, անպայման անցիր, ի հարկե, հանձնարարություններ ել կլինեն, և բացի այդ՝ դեռ քեզ հետ շատ բաների մասին պիտի խոսենք:

Մանարն ու Կասին դուրս յեկան խրճիթից:

Տեղացի վոստիկանը կարմիր գլխարկով, մուգ գլեխտով, դեղին մետաղե կոճակներով, դռուց կապած կարճ սև փայտով, վոր նրա

միակ ցենքն եր կազմում—արդեն շատ հեռու յեր մնացել, յերբ մեր բարեկամները նավահանգիստ հասան:

Նավահանգստի բազմաթիվ պանդոկներից մեկի դռան մոտ Մանարան առաջարկեց՝

— Մտենք Կասի՛, նստենք մի փոքր:

Նրանք մոտեն պանդոկ և դրավեցին ծայրի սեղանը:

— Վիսկի՞¹⁵⁾ և դարձյալ վիսկի՛—բաժակը խփում եր սեղանին մի անդլիացի— թող բոլորն իմանան, վոր յես Ռիչարդ-Դարկսոնս, կանանց սրտերի հաղթողն եմ: Ահա թե ինչ ե ընծայել ինձ գեղեցկուհի սենգալեզուհին:

Հարբած անդլիացու ձեռքը ձեղքեց ամբողջ աշխարհի ծխախոտի ծխով լի պանդոկի խեղդող ոդը՝ կանաչ վոսկորի սանրով:

— Ահա հաղթություն— շարունակեց անդլիացին, թեև նրան այլևս վոչ վոք չեր լսում —նոր տնակարներին տեղ փնտել և հանդիպել գեղեցկուհի սենգալեզուհու այդ... և անդլիացին շրխկացրեց լեղվով:

— Վիսկի՛ և դարձյալ վիսկի՛, —ավելի ուժգին խփեց նա սեղանին:

Պանդոկի հաճախորդներից ամեն մեկն զրադված եր իր դործով և միայն Մանարն եր, վոր վոչ մի չչուկ բաց չթողեց անդլիացու առածից:

— Կասի՛, հաղիվ լսելի ասաց Մանարը, —մենք աչքաթող չպիտի անենք այդ շա-

Մանարը կարճառուս պատմեց նրան Ձե-
րայի հետ պատահածը:

— «Վա՛յերկարացրեց Կասին, ծխի քու-
լաների միջից լավ նայելով անգլիացու դեմ-
քին:

— Այո՛, դա Դարկսոնն է, թեյի տնկա-
րանների տերը:— Հենց այդ սրիկայի համար
գնդակահարեցին մեր յերկու ընկերներին,
նույն թվում նաև իմ յեղբայր Ջերգին: Հիմա
նա յեւ մեր ձեռքից չի պրծնի: Բայց, այ թե
քանն ինչ է, Մանա՛ր. Դարկսոնը շատ լավ է
ճանաչում ինձ և այդ պատճառով եւ, մեր ընդ
հանուր գործի համար, յես խուսափում եմ
այլուրիսի մարդկանց հետ պատահելուց:

— Հասկանում եմ, Կասի: Կաշխատեմ այն-
պես անել, վոր ամեն բան կարգին լինի:

— Իսկ յես կհետեւեմ քեզ և պետք յեղած
դեպքում կգամ քեզ ոգնության:

Տնկարանատերը որորվելով վերջապես
դուրս յեկավ պանդոկից:

Փողոցի մոտակա ծոման կետում, Մանա-
րը մտեցավ անգլիացուն:

— Յես լսել եմ՝ ձեզ թեյի գործի մաս-
նողեսներ են պետք, — դիմեց Մանարը անկա-
րանատիրոջը:

— Այո՛, դու այդ վո՛րտեղից գիտես:

— Ինձ ձեր գրասենյակումն ասացին:

— Լավ, վաղն անցիր իմ կառավարչի
մոտ:

Վոչ մի կերպ չցանկանալով տնկատիրոջը

ձեռքից բաց թողնել, Մանարը նրան շարունակ
հարցեր եր տալիս:

Մեծ քանակությամբ խմած վիսկին անգ-
լիացուն շատախոս եր դարձրել, նա չնկա-
տեց եւ, թե Մանարը ինչպիսի ճարպիկու-
թյամբ հեռացնում եր նրան քաղաք տանող
գլխավոր ճանապարհից և առաջնորդում՝ դեպի
հակառակ կողմը:

Կասին անընդհատ հետևում եր նրանց:

Ահա և քաղաքի ծայրը:

Ջրվեժը բարձունքից թափվելով, ճյուղա-
վորվում եր մանր առվակների, վոր վազում
եյին դեպի ովկիանոս: Սուրճի նվազ թփերը,
փոքրիկ կարմիր պտուղներով, ցրված եյին
այն անդունդի ափին, վորի յեզրին մոտե-
ցուն Մանարն ու անգլիացին:

Խմած վիսկու ազդեցության տակ անգլիա-
ցին նորից հանեց սանրը և հիանում եր նրա-
նով:

— Անպիտա՛ն, յես քեզ ցույց կտամ, ինչ-
պես վերավորել սենգալեզցիներին. — տնկարա-
նատիրոջ համար անսպասելի, գոչեց Մանա-
րը: — Մարդասպան, գող:

Պատասխանի փոխարեն անգլիացին հանեց
ատրճանակը:

Մանարը դեռ զենքը չհանած, գնդակն ան-
ցավ նրա գլխի վրայով:

Ատրճանակի մասին այլևս մտածելու ժա-
մանակ չկար, ամեն մի վարկյան ձգձգելը, մա-
հա

նադրույ տմի գըլ Դ գտմի գըլ յրադարտեա մի
Կասիին:

Շատ և շատ անգամ եր պատահել Կասիին
տեսնել, թե ինչպէս ընծառյուծները վրա յեն
հասնում զերուին, բայց այդպիսի թուիչք նա
յերբեք չէր տեսել:

Նրանք թափալում եյին գետնին, անդլա-
ցին և սենգալեզցին, տնկարանատերը և նա-
վաստին՝ իրար մատներ կոտորաւելով: Նրանք
աշխատում եյին իրար կպչել, իրար կոկորդ
կրծել և յերկուսի բերանից ել դուրս եր ծո-
րում, արյունոտ փրփուրը:

— Թափալիւր դրան դեպի ձորը, դեպի ձո-
րը, դեպի ձորը, դուռում եր Կասին:

Մանարի բերի փայլից նա հասկացավ,
վոր այդ բոպէյին պիտի նրանց վիճակը վո-
րոյի:

ձարպիկ և ստեպ հարվածներով նախա-
տին դլորեց ուղղակի դեպի ձորը տնկարանա-
տիրոջը, վորը շնչում եր թթված վիսկիի
և փտած ատամների հոտով:

Անգլիացին կարծես զգալով վճռական մո-
մենտի վերջին գոտեմարտը, ավելի կատաղած
եր դիմադրում:

Այսպէս անշարժ պառկած եյին նրանք՝
սենգալեզցին և անգլիացին, նավաստին և տնկա-
րանատերը, և ջեր կարելի ասել, թե վորքան
ժամանակ անցավ:

Յեւ ահա սարսափելի ճիւղ արձակելով և

հոգի հետ միանալով, սենգալեզցին իր բոլոր
ուժը հաւաքեց ու բոթեց անգլիացուն: Անգ-
լիացին թփերից բռնելով, չէր ուզում ընկնել
տնդունդը:

Կասին թռավ դեպի ձորը և վոտով բոթեց
տնկարանատիրոջը... Ներքեվում լավեց թփե-
րի ճթճթոցը և վերջապէս ամեն ինչ լուեց:

Մթնում եր արդեն: Մանարն ու Ձերան վե-
րադառնում եյին տուն:

— Բխայի, բխայի՝ փաղաքշում եր նա
յեղբորը:— Ի՞նչ կանայի յես, յեթե դու չլինե-
իր:

Մանարը չոյեց նրա այտը:

— Իսկ վո՞րտեղ ե քո թելը, Ձե՛րա:

Թե՞լը, այստեղ ե:

Յեւ նա ձեռքը բարձրացրեց, բայց թելը
ձեռքին չէր:

Ձերան դունատվեց.

— Թելը չկա, Մանա՛ր, կորցրել եմ...

Մանարը վոչինչ չպատասխանեց և միայն
իր կոպիտ ձեռքով, վորի վրա դեռ վերքեր
կային, քիչ առաջ յեղած կռվից հետո, սղա-
լեց նրա սեւ, ձյութապտղին տվող մետաքսի
մազերը, վորոնց մեջ կանաչին եր տալիս նվի-
րական սանրը:

1) Վիգարա—բուդդայական տաճար

2) Մուսուճները—ուժեղ քամիք են, վորոնք փչում են Հնդկաստանում
և մ.տալա կղզիների վրա, ձմեռը ցամաքից դեպի ծովը,
ամառը—ծովից դեպի ցամաքը:

3) Այդպէս սենգալեզցիք մանր կոտորում են իրական—ոճին,
վոր սրբ դնեն իրենց սրբելի կերպրի շինքի յերեսը,
պղպղոյ, բանանի և կակոսի կծու արմատներով համեմած:

4) Բխայի—յեղբայր:

5) Վիսկի—վոդկից խմիչք:

ԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ ԱՊՍԱՍԲՈՒԹՅՈՒՆ

I

Այսօր, Վեդոնոն՝ սրճի տնկարանների տեղացի վերակացուն—հայտնեց բանվորներին, վոր թագուհու ծննդյան օրվա առթիվ, աշխատանքը սովորականից չուտ կվերջանա:

— Թող ալլահը պահպանի նորին մեծությանը, Նիդերլանդների թագուհուն, յերկա՛ր տարիներ. — վերջացրեց նա իր կարճ ճառը:

Հետո դառնալով արեվից ամբողջովին այրված մալայացիներից մեկին, վոր վաղ—ման կությունից, ինչպես իր ազգակիցների մեծամասնութունը, աշխատում էր տնկարաններում, հարցրեց.

— Քյարի՛մ, ո՞վ է նորեն մեծությունը, Նիդերլանդների թագուհին.

— Մեզ սիրող մայրը, իսկ մենք նրա հավատարիմ վորդիքը: Մենք պիտի առանց հալաճառելու կատարենք այն ամենը, ինչ նա անձամբ կամ իր նշանակած մարդկանց միջոցով մեզ հրամայի, վորովհետև նա գիշեր և ցերեկ հոգում է մեր բարեկեցության մասին:

— Սիրող մա՛յր, — հեզնորեն յերկարացրեց

բարձրահասակ բանվորը, սրբելով ճակատի դեռ չչորացած քրտինքը:

Վեդոնոն, չար հայացք ձգելով այդ խոսքերն ասողի վրա, նկատեց.

— Սպասի՛ր, Մատի՛ր, մենք դեռ կխոսենք քեզ հետ:

Բանվորը պատասխանի փոխարեն ժպտաց հեզնորեն:

Պատրաստակամ թարգմանը, Վեդոնոյի բարեկամը, նույնպես մալայեցի. յերեսուն տարվա ծառայության ընթացքում բավականին յուրացրել էր իր տերերի լեզուն, բառ առ բառ հաղորդեց խոսակցության առաջին մասն իր մոտիկ կանգնած յերիտասարդ կառավարչին՝ Երիկվան—Ռաուտենին, վորը նոր էր յեկել Ամստերդամից:

Հոլանդացին ժպտալով, ձեռքը մեկնեց Վեդոնոյին, վորը հավատարիմ շան նման նայում էր յերիտասարդ կառավարչի մոխրադույն աչքերին:

— Յերեկոյան անցեք գրասենյակ... կամ ավելի լավ է, իմ բնակարանը, — հրավիրեց Երիկ վան-Ռաուտենը:

«Միթո՞ւ, անցավ Վեդոնոյի մտքով, — նրա վաղեմի յերազը—ստանալ ղեկավարի պաշտոն, մոտ է իրականացման: Ծիշտ է, այդ տեղը միայն ազնվականներին է տրվում, բայց չե՞ վոր դեպքեր են յեղել, յերբ նշանակվել են և վոչ իշխաններ: Պետք է միայն տերերի շնորհին արժանանալ: Նրա՛ Վեդոնոյի հողա-

մասը, չե՞ վոր արդեն մի քանի տարի չարու-
նակ ամենաչատ բերքն է տալիս: Ի՞նչ անենք,
վոր մահացման դեպքերն ել ամենից հաճախ
նրա հողամասում են լինում: Կմեռնեն առա-
ջինները՝ կզան մյուսները: Մեկի փոխարեն՝
տասնյակներ են աշխատանք ցանկանում»:

Վեդոնոյի կինը յերկար անվերջ անձրեվա-
յին ուրերը, յերբ ձանձրացնում են անյերես մո-
ծակները, իսկ ողը լի յե ծանր դուրը շիներով,
յերազների մեջ եր անցկացնում:

— Կդառնամ ղեկավարի կին, ինձ համար
թավչե զգեստ կկարեմ, ավելի լավը, քան
Սեյմինն ե—ղեկավարի կնոջը, անպատճառ ա-
վելի լավը... Ա՛խ, այն պառավ կոտրատվո-
ղը: Նա յերեվի մոռացել է այն ժամանակը,
վոր անցնում եր մի հոլանդացուց մյուսին:
Բարեպաշտ կին, ի՞նչպես չե: Արդեն բարձրա-
ձայն մտածում եր Վեդոնոյի կինը:

— Ա՛յ, յես քեզ ցցւոյց կտամ, անդգամ, թե
ինչ զգեստ կկարեմ ինձ համար: Յեվ նա—քանի
յերրորդ անգամն արդեն— հանեց արկղում
ծածուկ պահած մի թավշյա կտոր և սիրով
չոյեց:

— Բավական է պահված մնաս, հիմա շու-
տով, շուտով...

Մտքերի մեջ ընկղմված, յերիտասարդ
կառավարչի գնալուց հետո Վեդոնոն ուղղվեց
դեպի չորացնելու բաժանմունքը, վորը դեռեղ-

ված եր տնկարանների մոտ. հավաքված սուրճի
պտուղները մի քանի որվա ընթացքում չորաց
նում են արեվի տակ, վորպեսզի ավելորդ խո-
նավությունը վերանա: Աշխատանքն ալստեղ
նորմալ կերպով եր անցնում՝ առանց անկանո-
նության, և դրա համար Վեդոնոն վերադար-
ձավ անկարանները՝ նախապես կոնծելով մի
շիշ թարմեցնող խմիչք:

Արեւը չեր խնայում վոչ մարդկանց և վոչ
փոքրիկ, մշտականաչ ծառերը, վորոնց համար
այնքան արյուն եր թափված:

Դարհնադույն մալայեցիք մեկնում էյին ի-
րենց նիհար, մաշված ձեռները ցածրիկ ծառե-
րին, քաղում հասած պտուղները և դցում ե-
յին կողովի մեջ, վոր կախված եր ձախ ձեռքի
վրա:

Անդադար շիթերով հոսում եր քրտինքը:
Ժամանակ չկար շփելու և քրտինքն ել թափ-
վում եր կողովի մեջ:

Ավելի յեր ծանրանում կողովը, նրանի՞ց
արդյոք, վոր այդ ցածր ծառերի պտուղները
թափոնցել էյին աղի, տտիպ ջրով, թե՞ աշխա-
տանքի վերջն եր մոտենում:

Տեղացի բանվորները հանդիստ չունեյին.
արեւիածաղ և վերջալույս՝ ահա ժամկետի
սկիզբն ու վերջը:

Քանի վերակացուն չի տեսնում՝ ափովդ
արբեր ձակատիդ քրտինքը:

Բռնվեցի՛ր, «ծուլլ անասուն»:

Յեվ մի հնչուն, կոպիտ մարակի հարված

Ինչպէս մարմնին՝ արյունը կ'սառնի՝ քրտինքի՝
հետ:

Կհեռանա վերակացուն— բանվորը ձեռքը
կտանի վերավորված տեղը և կկարմրեն ծանր
կողովի մեջ թափվող պտուղներից շատերը:

Մատիւն իրեն վատ զգաց: Տասնապետի
միջոցով, նա խնդրեց Վեդոնոյին, վոր թույլ
տան իրեն հանգստանալու, խոստանալով՝ վաղն
ավելորդ կողով լցնելու:

— Քնքո՛ւյշ անասո՛ւն: Սրան նայիր, կար-
ծես թե մարդ ե: Մատիւն, բայց աշխատիր—
Հրամայեց Վեդոնոն:

Մատիւնը շարունակեց պահուտել ծառերից
և այլևս վոչինչ չհասկանալով, կանաչ տերեւի-
ներ եր դրամ կողովի մեջ:

Կատաղած վերակացվի մտրակը պատռեց
նրա յերեսը: Մատիւնը յերեքաց և ընկավ—ալ
արյունը առատորեն ներկեց կանաչ տերեւինե-
րը:

— Վոչինչ, չի սատկի, վաղը դուրս բերել
դրան աշխատանքի: Հասան բանվորի թուլա-
ցող խողովթյանը Վեդոնոյի խոսքերը:

«Ձո՛ւր, ջո՛ւր»,—մտածեց ուշքի յեկած
Մատիւնը:

Սակայն վոչ մի տեղ մի կաթիլ ջուր չկար,
իսկ իր հետ բերած ջրի պաշարը՝ վաղուց վեր-
ջացել էր:

Մատիւնը վեր կացավ, նայեց շուրջը՝
անկարաններն ամայի ելին:

Արեւը վաղուց մայր եր մտել, արագու-
թյամբ մոտենում եր տրոպիկական գիշերը:
Գետնից չլմեցնող գոլորշիներ ելին բարձրա-
նում: Անհաշիվ մոծակների տգողոցը պատ-
ռում եր ողը: Ձորերում սկսվեցին շարժվել
սողունները և յեթե Մատիւն այդտեղ մի քիչ ել
պառկած մնար, նա թունավոր ոճերի գոհ
կղանար:

Նրա բնակարանը՝ ցածր արմավենու ճյու-
ղերով ծածկված գետնի յերե ին հազիվ նշմար-
վող խրճիթը, շատ ծանր ճանապարհ եր:

Մատիւնը վճռեց հասնել տուն, ընկնել հա-
տակին փռած խարի վրա և աշխարհիս յերեսին
ամեն ինչ մոռանալ:

II

Նրիկ Վան-Ռաուտենի, Յայա կղզու գետն
քալ նահանգապետի յեղբոր վորդու և սրճի
անկարանների կառավարչի տանը, կենդանու-
թյուն եր տիրում:

Հյուրերը՝ չորս հոլանդացի, կառավարչի
անմիջական ոգնականները և մըստըր Ջեմս
Կալնեյր, Լոնդոնի կայսերական աշխարհա-
գրական ընկերության անդամը, վոր այդ ժա-
մանակ պատահամբ գտնվում եր կղզու վրա
և բավականին լավ տիրապետում եր Փրանսե-
րեն լեզուին:

Հրավիրվածների սահմանափակ շրջանը
քրացնում եր հոլանդացի գիտնական Մարտեն

կրօնսը— Սուժատրա կղզու անխոնջ հետազոտողը, վորի այդ կղզու վրա վերջերս արած նոր գյուտը՝ եգ մարդանման կապիկի մասին, ամբողջ աշխարհի գիտական շրջաններում մեծ հետաքրքրություն եր առաջ բերել։ Մի շարք խոշոր աշխարհագրական ընկերություններ, Սուժատրայում մանրամասն հետազոտություններ կատարելու համար, կազմակերպեցին եփսպեղիցիաներ։

Սպասում էին գեներալ—նահանգապետին, ասանտիրոջ հորեղբորը։

Շատ չանցած, ավտոմիլիի սիրենայի սուր ձայնը տեղեկացրեց հանդիսականներին նրա դալստյան մասին։

Յեւ դեռ յերիտասարդ տանտիրուհին պատշգամբը դուրս չեկած, հրաշալի մոխրագույն «Բենց» ավտոմոբիլը, ամենատիրելին հոլանդական գաղութներում—կտրուկ կերպով կանգնեց ուղղակի մուտքի առաջ, այն ձեւով, վոր գեներալը միայն մի քայլ անելով, կանգնի ասանդուխթի առաջին աստիճանի վրա։

Չիրուխը բերնին նահանգապետից շոֆերը նկատողություն ստացավ։

— Դարձյա՛լ կտրուկ կանգնեցրիր։

Թեեւ հոգու խորքում նահանգապետը շատ եր սիրում մեքենայի այդ ձևով կանգնելը։

Շոֆերը գիտեր տիրոջ ճաշակը, այդ պատճառով եւ հանգիստ կերպով ձեռքը դրեց խցանե գլխաքիլին եւ մեքենան տարավ դեպի դարպար։

Մուտքի առաջ՝ յերկու կողմում զույգ—զույգ կանգնած պահակները վողջունեցին գեներալ—նահանգապետին։

«Այս բոլորը լեյտենանտ Բրանդտի շնորհքն է»—մտածեց գեներալը, հիշելով այդ շրջանում տեղավորված պահապան ջոկատամասի հրամանատարին։

Յերեկույթը բացեց գեներալ—նահանգապետը։

— Պարոններ, կեցցե նորին մեծությունը, մեր սլաշտելի թագուհին, փոքր ազգերի հովանավորողը։

Բոլորը վոտքի կանգնեցին։ Լավեց գավաթները գնդգնդոցը, և խնձույքին մասնակցողները նստեցին իրենց տեղերը միայն այն ժամանակ, յերբ մինչև վերջը դադարեցին փոյլատակող զինին։

Մանր, վոսկեզոծ շրջանակից նայում եր նրանց Նիդերլանդների թագուհին՝ ասողը կրճ.քին, ճոխ սանրվածքով մի կին։

Յերբ ճաշը վերջացրին, տանտիկինը—միակ կինն այդ հասարակության մեջ—գնաց իր սենյակը հանգստանալու։

Վան—Ռոտտենը հրավիրեց հյուրերին իր բաղնիքով սենյակներից մեկը՝ ծխելու, վորովհետեւ իր կինը սիգարի հարբեցնող հոտը չեր տանում։

Բաղկաթոռների մեջ հարմար տեղավոր—

վերով, հյուրերն սկսեցին ծխել: Ծխի ողակները մեկը մյուսին առաջ տալով, ուղղվում էյին դեպի բարձր, տարրերինակ նկարած առաստաղը:

Հանկարծ հյուրերի համար անսպասելի, լավեցին դամեկանդի հնչյունները, թեև ինքը գործիքը չէր յերևում:

Երիկ Վան-Ռաուտենը մտնելով սենյակը, հետ քաշեց չիրման, վորի վրա բացվում էյին հրաշալի ծաղիկներ և հարբած հյուրերի աչքերի առաջ յերեվացին յերկու դույզ վայելչա-կազմ հնդիկ պարերգչուհիներ, վոր յավայական սլար էյին պարում:

— Կարծես ոճեր լինեն, վոր պարում են դերվիշի սրնդի նվազակցությամբ, ասաց Մարտեն Նորնսը, վոչ մեկին առանձնապես չգիմեկով. — ինչպե՞ս են դալարվում:

— Ծի՛շտ ոճեր են—հաստատեց նահանգապետը, ճանապարհորդի բացականչությունը լսելով: — Կեցցես երիկ, դու վաղուց չե՛ ախտեղ ես և արդեն յուրացնում ես տեղական սովորությունները:

Յերիտասարդ տանտերը գոհանակությամբ ժպտաց՝ շողոքորթված իր բարձրաստիճան հորեղբոր մեծարանքով:

— Դու ինձ մեծ բավականություն պատճառեցիր, երիկ, — շարունակեց գեներալը, — յես այն բոպեյիս այնպես եմ ծանրաբեռնված աշխատանքներով, վոր հազիվ ժամանակ եմ գտնում մի ավելորդ սիգար ծխելու...

— Այդ բոլորը վոչինչ, յես ամեն ինչից գոհ եմ... — շարունակեց նահանգապետը: — Դու այն ժամանակ Ամստերդամումն էյիր գտնվում, յերբ Թագուհին ինձ «կաղնու թուփի» չքանչան շնորհեց...

— Դիտեմ, հորյեղբայր, գիտե՛մ: Ինչպե՞ս չիմանամ, յես դրա մասին կարդացել եմ:

— Դե՛, ուրեմն ամեն բան հիանալի կլինե՛ր, յեթե վոքրիկ անխորժություններ չլինե՛յին...

Վան-Ռաուտենը լարեց ուշադրությունը:

— Յես Ձեզ լսում եմ, հորյեղբայր:

Պատասխանի փոխարեն, գեներալը մեկնեց յեղբորորդուն քառածալ մի թուղթ:

Վա-Ռաուտենն սկսեց կարդալ:

Գաղտնի: Նիդերլանդական Հնդկաստանի գեներալ-նահանգապետին. Բեյտենզորդ:

Միջազգային հետախուզող բաժանմունքի վերջին հաղորդագրությունները հայտնում են Արևմտյան Արշիպելագի կղզիներում պատրաստվող ապստամբութան մասին:

Ճշտությամբ վորոշել լինթադրվող ապստամբութան վայրն առայժմ անհնարին է:

Հասունացող ապստամբությունը վորոշակի քաղաքական բնույթ է կրում, հակառակ Սեմերանդի անցյալ տարվա գործադուլի, վոր առաջ էր յիկել միայն անտեսական պահանջներից:

Առաջարկվում է Ձեզ շտապ կերպով միջոցներ ձեռք առնել, գտնել դժգոհ տարրերին և ապստամբության առաջն առնել:

Անհրաժեշտ ե հնարավոր խլրտուճները խափանել հենց ընում, վորվհետև անցյալ տարվա վորձն ապացուցեց, վոր ըմբոստների դեմ հատուկ հաստատած պատժի որենքները հակառակ ազդեցութիւն ունենալայն չափով ողավիք տեղական վարչության աշխատակցությունից, հաշվի առնելով ապորամբության սոցիալական պատճառները:

Ձեռք առած միջոցների մասին շտապ տեղեկացրեք:

— Իսկ քեզ մոտ ինչպե՞ս ե, հանգի՞ստ ե:— Հարցրեց գեներալն յուր յեղբոր վորդուն, յերբ վերջինս կաղացել եր նամակը:

— Կարծում եմ, այո՛: Մեր ընկերության գլխավոր գիրեկտորն ինձ լայն հրահանգներ ե տվել, նա ինձ նույնն ե առաջարկում, ինչ հանձնարարված ե Ձեր նամակում՝ տեղացիների աշխատակցությունը:

— Ի միջի այլոց, յես կանչել եմ ինձ մոտ գլխավոր վեդոնոյին՝ հուսալի մարդ ե և շան նման հավատարիմ: Այսոր յես նրա հետ շատ լուրջ խոսակցություն պիտի ունենամ:

— Միայն մի՛ ցույց տա, վոր դու նրանով չահադրդոված ես,— խորհուրդ տվեց գեներալը:

III

Հոգնածությունը հաղթելով, Մատիւրն հազիվ շարժվում եր իր դեասի¹⁾ ուղղությամբ:

Նրան հիմա չեյին ուրախացնում վո՛չ ահազին չուշանները, վոչ վարդապույն լոտոսները,

վոր բուսնում եյին ճանապարհի յեզրին և օխրալիւր վողջունում եյին ճամբորդին:

«Իմ բախտից լրիվ լուսին ե—մտածեց Մատիւրը՝ հենկլիով բամբուկի ձեռնափայտին, վորը բավականին թեթեւացնում եր նրա ճանապարհը:—Յես ի՞նչ պիտի անեյի, յեթե գիշերվա արեւի որհնված լույսը չլիներ: Իսկապէս այն ժամանակ կշեղվեյի ճանապարհից, վորովհետև գիշերն ամեն ինչ խառնվում ե և ճանապարհ կորցնելն այստեղ շատ հեշտ ե՝ մինչեւ անգամ ինձ նման փորձված մարդու համար»:

Յերբ, Մատիւրի յենթադրությամբ, ճանապարհի կեսն անցած եր և բանվորը գնում եր արդեն գետի հոսանքով, վորը վաղում եր դեպի իր հարազատ դեսսան, գիշերվա անդորրությունը ձեղքեց մի քաղցրահնչյուն ձայն:

— Մատի՛ր,— լսեց ճանապարհորդը և գողաց՝ կարծես գեղին դողախտով բռնված:

Շատ ապրումներ եր ունեցել Մատիւրը. տեսել եր այն հայտնի յերկրաչարժը, վոր մինչև հիմքը քանդեց Բանդոն—Բիրո ամրությունը և յերկու ծովային խորտակումներ, վորոնցից մեկի ժամանակ նա միակ մարդն եր, վոր փրկվեց կործանված շոգենավից: Քիչ բան չեր տեսել նա իր կյանքում, սակայն յերբեք այնպէս չեր վախեցել, ինչպէս այս րոպեյին: Այսորվա դեպքերը և գիշերվա խորհրդավոր լուրթյունը չափից դուրս լարել եյին նրա ջղերը:

«Այս ի՞նչ է, յերազ է, թե իրականութիւն»։—Անցավ Մատիւրի բորբոքված ուղեղով և նա կոշտացած ձեռքը քսեց յերեսին, վորի վրա չորացել էր, Վեդոնոյի անխիղճ հարվածներին գոյացած արյունը։

Կանչող ձայնը կրկնվեց։

— Վո՛չ, ուրեմն յերազ չէ։

— Մա—տի՛ր։

— Յես այստեղ եմ, արի ճանապարհի վրա, — ձայն տվեց Մատիւրը, դեռևս չճանաչելով կանչողի ձայնը։

— Գալիս եմ. — լսվեց ուրախ մոտիկից, և մի քանի վարկյանից վերջնականապես հոգնածութիւնից և վրդովմունքից ուժասպառ յեղած բանվորը գտնվում էր բարձրահասակ, թուխ աղջկա գրկում։

— Իեյթենա՛, — կարողացավ բացականչել նա. — Իեյթենա, ցանկալի հարսնացու, — կրկնում էր Մատիւրը։

— Նստի՛ր, հանգստացի՛ր։ Հոգնած ես յերեւի։ Ա՛յ, ա՛յ, ա՛յ։ Արյո՛ւն. ամբողջ յիւրեադ արյան մեջ է։ Նստի՛ր, թանգազինս։

Իեյթենան բռնով ջուր վերցնելով, լվաց նրա յերեսը և վերավոր գլուխը։

Ի՞նչպէս յեղավ, վոր դու յեկար այստեղ, ուշքի գալով հարցրեց Մատիւրը։

— Ինձ բանվորներն ասացին, վոր դու մնացել ես տնկարաններում, Վեդոնոն նրանց թույլ չի տվել քեզ տուն տանելու...

Յես ել վաղեցի քո հետեւից։ Ուզում եյի

ավելի շուտ դալ, բայց տիրուհուս մոտ հյուրերը կային և ուշ ցրվեցին... Նահանգապետն էր յեկել... ճաշեցին... մինչև բոլոր ամանեղենը լվացի, մթնեց։ Վաղուց չե՛ վերջացրի և վաղեցի քեզ մոտ։

— Իսկ ինչու մերոնցից վոչ վոք չեկավ։ Ձեմ հասկանում, թե ինչ բան է։

Այն ժամանակ Բեյթենան, կուսնալով Մատիւրի ականջին, կարծես մեկը կարող էր լսել այդ հրաշագեղ տրոպիկական գիշերվա լուսթյան մեջ նրանց խոսակցութիւնը, չչնջաց։

— Բանվորներից վոչ մեկը չի կարող գալ քեզ մոտ՝ նրանց հետեւում են, գյուղից դուրս չեն թողնում։

— Հետեւո՞ւմ են... բանվորներին...

— Այո՛, Մատիւր։ Յես պատահամբ լսեցի իմ տերերի խոսակցութիւնը։ Նրանք ասում էյին, վոր բանվորներն ուզում են ապստամբել։

— Ի հարկե ապստամբել։ Մի՞թե կարելի չէ լռել, յերբ մեզ վրա նայում են, ինչպէս անասունների վրա, դեռ ավելի վատ, մինչև անգամ ջորուն խղճում է իր բանեցնողը։

— Հյուրերը ցրվելուց հետո, տանտիրոջ մոտ յեկավ Վեդոնոն, հենց նա...

— Անիծվի նա, — ընդհատեց հարսնացվին Մատիւրը։— Մալայեցի յե, բայց յեվրոպացուց վատ է...

— Յես ել չկարողացա սպասել, մինչև

Վեդոնոն դուրս գա, — չարունակեց Բեյթենան,
չտապում եյի գալ քեզ մօտ... ճանապարհ...

Լուսնի լուսով տեսնում եր Մատիրը հարս-
նացվի թանգազին դիմագծերը, ինչպես ցերե-
կը: Յավայի կանայք համարվում եյին ամենա-
զեղեցիկները կղզու վրա, Բեյթենան ամենա-
զեղեցիկն եր իր ընկերուհիների մեջ:

Մատիրի և Բեյթենայի ընտանիքներին կա-
պում եր յերկար տարիներ ընկած թշու-
նը:

Աղջիկը տասնհինգ տարվա մեջ եր
մտել, ահա յերեք զարուն ե, վոր հարուստ
փեսացուները նրան առաջարկություն եյին ա-
նում: Բեյթենան բոլորին մերժում եր, վորով-
հետև ուզում եր ամուսնանալ Մատիրի հետ,
վոր թեև չքավոր եր, բայց վորին ինքը սի-
րում եր:

Իբրև աղախին ծառայելով նախկին կառա-
վարչի մօտ, նա նրա կնոջ խորհրդով մնաց
իր տեղում՝ յերբ նշանակվեց նորը:

Ամեն ամսվա ոտճկից հետ գցելով մի
փորրիկ գումար, Բեյթենան յերազում եր այն
որվա մասին, յերբ նա Մատիրի հետ կարող
կլինի ապրել:

Հիմա, յերբ նրանք գնում եյին միասին,
խիտ քննականությամբ ծածկված ճանապար-
հով, լուսնի լուսով, կարծես արծաթով պա-
տած՝ Մատիրը և Բեյթենան ամուր սեղմվել
եյին միմյանց:

Առանց թեվերի բլուզ, գոտիով չըջագ-

գեստ, մի քանի չնչին զարդեր վոտքերին
կախված, — այդ բոլորը ծանոթ և թանգ եր
Մատիրին:

— Բեյթենա՞:

— Յե՛ս:

— Մի քիչ նստե՞նք:

— Մի՞թե դու արդեն հոգնեցիր, Մատի՛ր:

— Վո՛չ, հենց այնպես:

Նրանք նստեցին: Հեռո՛ւ հետեվում մնա-
ցին տնկարանները, հեռու-հեռու գնաց ծանր
որը և թվում եր այդ յերջանիկ բոպներին,
թե չկա նրան վերադարձ, այդ անիծված ցե-
րեկվան:

Ցանկալի յեր, վոր չծագի արեվը և չստի-
պի լուսածեղին գնալ աշխատանքի...

IV

— Միայն փամփուլտներն են պակաս, —
բացատրում եր գյուղից դուրս շատ հեռու հա-
վաքված բանվորներին Բանտամը՝ Մատիրի
և տնկարաններում աշխատող տեղացիներին
չատերի յերկրացին: — Փամփուլտներ գտնենք,
այն ժամանակ հաղթությունն ապահովված ե:

Կարծես չկային այնպիսի զրկանքներ, վոր
Բանտամը կրած չլիներ: Դեռ վաղ մանկու-
թյան որերում, նա կորցրեց իր ծնողներին, վո-
րոնց իր աչքի առաջ ծեծելով մեռցրին պուն-
գուտան²) հավաքող տեղացիները:

Մինչև այսօր նա հիշում եր ծեծի դաժան պատկերը և մինչև հիմա չի կարող մոռանալ նրա չարչարողներին ուղղած հոր անեծքները:

— Յեթե վոչ յե՛ս, ուրեմն վորդիս վրեժ-խընդիր կլինի ձեզնից և ձեր վորդիներից...

Մեռնող մայրն անդադար կրկնում եր մի-յովնույն խոսքերը.

— Մենք ինքներս վոչինչ չունենք, սոված ենք.

— Դրան հետեւում եր յերկար Հառա-չանք. — ախ—վախը:

Հագիւլ ինն տարեկան եր դարձել Բանտա-մը, վոր մտաւ աշխատելու տնկարանները և յերբ մի քանի ժամանակից հետո հերթական դործադուլը բռնկվեց, նա շատ ծառայու-թյուններ մատուցեց բանվորներին:

— Այս տղան լուրջ մարդ կդառնա, — ա-սում եյին բանվորները և իրավացի եյին. վոչ մի գործադուլ առանց Բանտամի մասնակցու-թյան չեր անցնում:

Դանդաղ անցնում եյին ստրկական աշխա-տանքի ծանր տարիները, վոր յերբեմն լուսա-վորում եյին ապստամբությունների կայծակ-ներով:

Բանտամը յերկար ժամանակ այստեղե-րում չեք յերևում: Անցյալ տարվա ճնշված ապստամբությունից հետո նա ստիպված եր փախչել Յավայից, պահվելով մեկնող նավի ներքնահարկում: Մի ամբողջ տարի Բանտա-մը թափառում եր զանազան նավահանգիստ-

ներում: Մի քանի անգամ անհասկանալի հրաշքով հաջողվում եր նրան խուսափել վոս-տիկանությունից, վոր հետեւում եր կասկա-ծելի անձնավորություններին:

Յավա կղզու կառավարությունը իրավացի կերպով համարում եր Բանտամին մի շարք ապստամբությունների կազմակերպող, իրենց վտանգավոր թշնամիներից մեկը և մեծ գումար եր նշանակել նրա գլխի համար: Նա, ով Բան-տամին կառավարությանը կհանձներ՝ կենդանի կամ մեռած, կստանար հազար վոսիկ:

Այդ հայտարարությունը, վոր տրված եր կղզու յերեք գլխավոր լեզուներով, կպցրած եր ամեն տեղ, իսկ զինվորական ուղանավը, վոր պտտվում եր Յավայի վրայով, հատուկ պատ-վեր եր ստացել ցրել այդ թուղցիկները:

Հիմա Բանտամը, քաջ հեղափոխականը, վորը հաճախ զարհուրելի ծեծ եր կերել, իրեն բոլորովին ապահով եր զգում այդ չքավորների մեջ, վորոնք վոչ թե հազար վոսիկի, այլ այդ-ան բրնձի հատիկ չունեյին, — իրենց խաղա-տելիքը:

Բանտամը գիտեր, վոր բանվորները սարի նման կպաշտպանեն նրան և աշխարհիս յերե-սին վոչ մի բանի համար չեն մատնի նրան, իսկ անհաջողության դեպքում, նա ատրճա-նակ ուներ:

— Կենդանի անձնատուր չեմ լինի: Վե-ցին կսպանեմ, յոթերորդ գնդակն ինձ: Ավելի լավ և սեփական ձեռքով մեռնել, քան այդ դա-զանները օլատառոտեն:

Բանտամն այդ ժամանակ հիշում եր մի ու-
րիչ հեղափոխականի վիճակը, իր ընկերներին
մեկին, նույնպես մալախեցու, վորին հոլան-
դացիք գտել էյին արնաքամ դրուժյան մեջ,
սկզբում մի փոքր բժշկել էյին, հուսալով, վոր
նա կմատնի իր ընկերներին,—բայց սխալվե-
ցին: Այն ժամանակ նրանք քերթեցին նրա կա-
շին, իսկ դժբախտի գլուխն ամրացրին բամ-
բուկի վրա և մյուսներին ինչպես սպառնա-
լիք, տնկեցին գյուղերից մեկի մոտ:

Այո՛, միայն փամփուռներն են պակաս,—
կրկնեց Բանտամը:—Փամփուռներն են միայն
պակաս,—կրկնեցին հավաքված ընկերները:

Բայց ի՞նչ անենք: Ձենք կարող մենք կռի-
լուրս գալ, մերկ ձեռքերով: Ձենք մենք ունենք
և այնպիսի տեղ ենք պահել, վոր սատանան
ինքը չի գտնի: Այ, փամփուռների հարցն
ե միայն դժվարը:

— Մենք ինչպես ել լինի, պիտի դուրս
գանք կռվի: Մենք վոչինչ չենք կորցնում:
Թող մեզ բռնադատողներն իրենց արժանի պա-
տիժն ստանան: Բավական է, վոր մենք ապա-
տամբենք, հարեվան գյուղերը կհետեվեն մեր
որինակին... Բատավիայի բեռնակիրները
կպաշտպանեն մեզ... Այսպիսի պայմաններում
ապրին անհնարին է: Մենք խեղդվում ենք,
ընկերներ,...

Հեղափոխականի վառ ճառը բորբոքեց ներկա
յեղուկներին:

— Զանազանություն չկա՝ մալախացի յե
նա, թե սպիտակ,—չարունակեց Բանտամը,—
մեզ ճնշող ամեն մեկը, արժանի յե մահվան:

— Նա ճիշտ է ասում,—պնդեցին բանվոր-
ները:

— Ճիշտ է, ընկերներ:

— Շարունակի՛ր, շարունակի՛ր, Բանտա՛մ,
քո խոսքերը մեզ ուժ են տալիս:

— Խոսքերով չի կարելի կերակրել նույ-
նիսկ բենգալյան սարյակին,—որինակ բերեց
Բանտամը ժողովրդական առածը:—Մեզ փամ-
փուռները պետք են ավելի, քան ջուրը վար-
դագույն լոտոսին: Մեզ պետք են փամփուռ-
ները, ինչպես ոգը խեղճող մարդուն: Բեյթա-
նան՝ կանգնած Մատիրի մոտ, ազահությամբ
լսում եր Բանտամի ամեն խոսքը:

Նրա մտքերն այն ժամանակ չափից դուրս
լարված էյին և յերբ Բանտամը հարցրեց.—
«ընկերներ, փամփուռներն ի՞նչպես ձեռք բե-
րենք». Աղջիկը դուրս պրծավ առաջ: Բայց դեռ
մի ձայն չհանած, Մատիրն զգալով նրա տրա-
մադրությունը, պահեց նրան:

Մի քանի վայրկյան լռությունից հետո
Բանտամը շարունակեց.

— Մենք պիտի միասին գործենք, ընկեր-
ներ: Ժամանակը չի սպասում: Հենց այս գիշեր

վրա կտանք զինանոցին և փամփուշտները
կհափշտակենք:

Հետո նա մոտեցավ ներկա յեղողներին մե-
կին առանձին և հայտնեց հանդիպելու տեղը,
վորտեղից արդեն բոլորով միասին կգնան զի-
նանոց:

Ամենայն հաջողություն ցանկանալով ըն-
կերներին, աղջիկը գնաց դեպի կառավարչի
տունը: Վորոշ ժամանակ այնտեղ մնալուց
հետո, նա ուղեվորովեց պայմանավորյալ տե-
ղը, վորտեղ նրան պիտի սպասեյին Մատիրն
ու Բանտամը և յերկու բանվորներ:

Բեյթենան գտավ այնտեղ միայն իր փե-
սացվին և բանվորներից մեկին. վոչ Բանտա-
մը, վոչ մյուս բանվորը դեռ չկային:

— Սակայն, Բանտամն ինչո՞ւ չկա:

— Գուցե, նա մի գործով զբաղված է:

— Վո՛չ, նա խոստացավ անպայման այս-
տեղ լինել:

— Մի բան պատահած չլինի՞ նրա հետ:

— Մի փոքր ել սպասենք, իսկ հետո մեկ-
մեկ հեռանանք այստեղից՝ վոր վոչ վոքի ու-
շադրություն չգրավենք:

Յերեքն ել մոլորվել էյին՝ զանազան յեն-
թադրություն անելով. ինչ կարող էր նշանա-
կել այս ուշացումը, վոր Բանտամին նման
չէր, յերբ մոտիկից մի վոտնաձայն լսվեց և
ստիպեց ներկա յեղողներին՝ ահանջները
սրել: Մի քանի վայրկյանից նրանց մոտեցավ

դավադրությանը մասնակցող մի տեղացի:
Բանվորը գունատ եր:

— Բանտամը ձերբակալված է, — հազիվ
արտասանեց յեկողը:

— Կամ այսօր, կամ յերբեք: Յեթե մենք
այս գիշեր զինանոցը չգրավենք, ամեն ինչ
կորած է, — ասաց բանվորներից մեկը:

— Ափսոս Բանտամը: Սքանչելի ընկեր է:
Հիմա նրան կտանջեն նրանք: Հազիվ թե
կենդանի ազատվի նրանց ձեռքից, — նկատեց
Բեյթենան:

— Յերբ են նրան բռնել, հարցրեց Մա-
տիրը յեկողին:

— Առավոտյան Բանտամն ինձ հաղորդեց,
վոր պատրաստվում է գալ այստեղ, այդ խո-
սակցությունից մի փոքր անց, յես պատահեցի
Ղարիբին, իմ դրացուն, նա հայտնեց ինձ այդ
լուրը...

— Նրանք վո՞րտեղից իմացան, վոր Բան-
տամը մեր մեջն է:

— Յեկողն ուսերը շարժեց:

— Յերեի մեկը հայտնել է Վեդոնոյին, —
նկատեց սկզբում այդտեղ գտնվող բանվորը, —
իսկ Վեդոնոն նոր կառավարչի կրունկներն է
լիզում, մեր արյունով է ուզում նրա շնորհը
չահել... Ահա, թե ինչու Բանտամին ել բան-
տարկեցին...

— Շուտով մեզ ել կհասնեն:

— Ուրեմն կամ այսօր, կամ յերբեք:

Դյուղը հեռվից յերեւում եր' համարյա բոլորովին կանաչով ծածկված: Համառ բամբուկներն անկարգ ցրվելով, դեղնին եյին տալիս, ծուռ-մուռ շավիղների յեզերքին անկանոն պատի նման կանգնելով ցած խրճիթների մոտ:

Մի քանի տեղ փաթաթվող պատառուկներ ճյուղերն այնպես եյին հյուսվել միմյանց, վոր անհնար էր անցնել այդ խիտ թփերով ծածկված տեղերով, առանց նրանց զալարուն թփերը կոտրելու:

Մուր սրած սեվախի—կեռ դաշույնի հմուտ հարվածով կտրած ճյուղերը շարունակում եյին զալարվել գետնի վրա, կարծես կամենում եյին բռնել նրան իրենց կաշող շոշափուկներով:

— Հետեվեք ինձ, ընկերներ'ր,—ձայնը ցածրացնելով, հազիվ լսելի շշուկով ասաց բանվորներից մեկը,—յես գիտեմ ծածուկ մուտքի տեղը, այնտեղից մենք կկարողանանք հասնել զինանոց: Դավադիրներն ի նշան համաձայնության, շարժեցին իրենց տուգունները և բանվորները մեկը մյուսի հետեվից դիմեցին առաջ:

— Ձգույ՛, —անցնում եր մեկից մյուսը: Վերջապես առաջ գնացող բանվորը պառկեց դեռ նոր յեկած անձրեւներից խոնավ գետնին:

Մյուսները հետեւեցին նրա որինակին: Բոլորին մոտ՝ կապույտին եր տալիս պահի կերպարանքը:

— Զանաչում եմ այդ վաղրին,—ասաց Մատիւրը,—անցյալ տարի սա մերոնց չատ ել չեր խնայել:

— Դրանք բոլորն ել միատեսակ են,—նկատեց առաջնորդը:—Մնացեք այստեղ, իսկ յես աննկատելի կմոտենամ նրան:

Գետնի հետ ձուլվելով, բանվորը սողաց դեպի պահակը...

Վեց աչք հետեւում եյին դանդաղ սողացող առաջնորդին. այդպես՝ հայացքը մեխած, հետեւում ե սանձահարողը հնազանդ ոճին:

Պահակը դեռ կանգնած եր իր տեղում, յերբ բանվորն անլսելի մոտեցավ նրան:

Մնացողներն այլևս չեյին կարող անգործ մնալ, նրանք շարժվեցին առաջ: Արագ վոտքի կանգնելով, առաջնորդը խլեց պահակից հրացանը և զցեց փափուկ գետնի վրա...

Յերբ բանվորներն ու Բեյթենան մոտ վազեկն զինանոցին, պահակի դիակն ընկած եր գետնին:

— Դե', ընկերներ'ր, գործի անցեք: Մինչեւ նոր պահակի փոխվելը մենք պիտի զինանոցից ձեռք բերենք վորքան կարելի յե շատ փամփուշտ, նաև չի խանգարի վերցնել զենքեր... Բեյթենա, թռիւր մեզ մոտ և կանչիր այստեղ յերկու մարդ ել, այն ժամանակ ավելի շուտ կվերջացնենք, ժամանակը չի համբերում:

Բանվորներն ամենայն զգուշությամբ, մեկը մյուսի հետեից դուրս ելին բերում փամփուշտներով ծանր արկղները: Ամուր կերպով ամենաթանգագին բոլոր պարաններով կապելով, կրում ելին իրենց մեջքի վրա գինանոցից դուրս, վորտեղ դրանց համար հատուկ տեղեր պատրաստած: Յերկու զինված բանվոր պահպանում ելին փամփուշտները: Մի քանի տասնյակ հրացաններ, վոր պահված ելին պահեստում, նույնպես տեղացիները գրավել ելին:

Չնայած, վոր ժամանակը ուշ էր, գյուղի բնակիչները բոլորը վորտեղի վրա ելին:

— Յեղբայրներ, գնանք Բանտամին ազատելու:

Այդ կոչը, վորին ձայնակցեցին մնացածները, միացրեց ապստամբողներին: Զինված բանվորների մի փոքրիկ խումբ շարժվեց դեպի պահականոց:

— Առաջ, առաջ ընկերներ, հետ մի՛ մնաք: Ամեն րոպեն թանգ է մեզ համար: Այլ կերպ նրանք կկարողանան Բանտամին սպանել:

— Գուցե նա արդեն կենդանի չէ:

— Ստատանան տանի վհատությունը: Գնա՛նք...

— Գնա՛նք, գնա՛նք...

Պահականոցի շենքի առաջ կանգնող պա-

հակը նկատելով դեպի իրեն շարժվող զինված մարդկանց ամբոխը, տվեց ազդանշանը: Իսկույն պահակների բնակարանից դուրս վազեցին զինվորները և մուտքի առաջ կիսաշրջան կազմելով, սկսեցին կրակել:

Մեկն ապստամբների առաջի կարգերում, ձչաց:

Բանվորները չեյին կրակում:

— Ո՞ւր է Բանտամը: Ազատեք նրան. տվեք մեր ընկերը:

— Զորախումբ—կրա՛կ, — լսվեց ի պատասխան այդ դիմումի, և մի քանի բանվորներ ընկան գետին:

— Կրակե՛ք, ընկերներ:

Ապստամբների կողմից հրացանձողություն սկսվեց:

Ավելի ու ավելի մոտենում ելին նրանք պահականոցին...

Մեկը մյուսի հետեիից ընկնում յին պահակ ջոկատամասի զինվորները, անիծելով հա՛ճակվող բանվորներին:

Լեյտենանտը, վորին ապստամբների յերեման դալը պահականոցի շենքի առաջ, անջատել էր յերկրորդ շիշ գինուց, դուրս գալով ապստամբների առաջ, սկսեց անկանոն կերպով ատրճանակ կրակել:

— Գերի վերցրեք դրան, ընկերներ: Պատանդ — Բանտամի փոխարեն — լսվեցին ձայներ:

— Ապստամբել հանդգնեցի՞ք անդգամներ... յես ձեզ բոլորիդ կսպանեմ — դարձնա-

դույն ապստամբներ... Որորվելով գոռգոռում
եր լեյտենանտը—ատրճանակից կրակելով:

— Կարիք չկա դրա հետ խոսելու. դրմի՛
և պատրաստ ե. Լեյտենանտն ընկավ գետին,
կարծես բարեվում էր բանվորներին: Նրա
ատրճանակը յերկու մնացած զնդակներով ան
ցավ ապստամբողներից մեկի ձեռքը:

Յերբ բոլոր պահապանները, վոր պահում
էին պահականոցի շենքը, սպանված էին և
բանվորները խուժեցին պահականոցի ներսը՝
Բանտամին փրկելու, մի նվազ ձայն, վոր կար-
ծես գալիս եր ցածից, գրավեց նրանց ուշա-
դրությունը:

— Կամա՛ց: Մեկը հառաչում է: Չլինի՞
Բանտամն ե:

Այս ու այն կողմը ցրելով անկյուններում
գրած կանաչագույն վրանների կտորները,
դուռն տանջված Բանտամին: Նրա ամբողջ դեմ-
քը շերտավորված եր և արյունակալած տեղե-
րով ծածկված: Բանվորներն ողնեցին Բանտա-
մին բարձրանալու: Նա հաղիվ եր կանգնում
վորքերի վրա: Մի քանի վայրկյանից հետո
Բանտամի ուշքը զնայ: Զո՛ւր, ջուր բերեք չու-
տով, — ձայն տվեց Բեյթենան, վոր կանգնած եր
հեղափոխականի մոտ:

Շատ չանցած, Բանտամն ուշքի յեկավ:

— Ինչպես են մեր գործերը: Զենք, փամ-
փուշտներ կա՞ն: Շնորհավոր հաղթություն,
ընկերներ՝—յեղան նրա առաջին խոսքերը:

Ապստամբները հրճվանքով վողջունեցին

Բանտամին: Նրանք ել չէին հարցնում, թե
ինչպես ե պատահել, վոր նա ընկել ե այստեղ
և ինչպես են նրան տանջել: Բանտամի տեսքն
ու այժմյան դրությունն ապացույց էին ար-
դեն:

— Ընկերներ՛, միք վողեվորվի հաղթու-
թյամբ: Ամեն տեղ պահակներ կանգնեցրեք:
Ապստամբության մասին հայտնեք հարեվան
զյուղերը... Ողնություն հասցրեք՝ զենքով
և փամփուշտներով:—Իրար հետևից խոսքեր եր
չպրտում Բանտամը:

Ապստամբներից մեկի ողնությամբ Բան-
տամը դուրս յեկավ շենքից: Ովկյանոսից փչող
թարմ, աղոտ քամին և գիշերվա մաքուր ողբ
հետ բերեցին այսորվա անողորմ տանջանք-
ներից կորցրած ուժերի մի մասը:

— Դու հանգստացիր, Բանտա՛մ, — լալե-
ցին ձայներ, — քո ողնությունը դեռ պետք կլի-
նի, իսկ մենք հիմա կզնանք Վեդոնոյի մոտ:

— Վեդոնոյի մոտ, Վեդոնոյի մոտ:

— Նա մեր ամենաչարակամ թշնամին ե:

— Վեդոնոն յեվրոպացիներից վատ ե:

— Ո՞վ ե այդտեղ, — հարցրեց Վեդոնոն,
յերբ յեկող ապստամբներից մեկը դուռը ծե-
ծեց:

— Բաց արա՛ առանց խոսելու:

Վեդոնոն լսելով հրացանաձգությունը,
յերբ բանվորները գրավում էին պահականո-

ցը, տանը թողեց վախից կիսամեռ կնոջը և վազեց նախազգուշացնելու կառավարչին՝ բռնկված ապստամբության մատին: Հետո վերադարձավ տուն:

Երբիկ Վան-Ռաուտենը հրամայեց իր տրամադրության տակ գտնվող զինվորներին՝ ամեն հնարովոր միջոցները ձեռք առնել՝ իր տունը պաշտպանելու համար: Զինվորները շտապ խրամներ փորեցին և կառավարչի տունը յերկաթե լարով շրջապատեցին:

— Ո՞վ ե այդտեղ, — կրկնեց վոչ այնքան համարձակ ձայնը դռան հետևից:

— Բաց արա, հետո կիմանաս:

Լռություն:

— Ձեռ բաց անի, ամեն ինչ ջարդ ու փոշուր կանենք:

Ատրճանակը պատրաստ պահած, Վեդոնոն կամաց քաշեց յերկաթե փակը, վորով ներսից փակվում եր դուռը. հետո արագ շարժումով բաց արեց դուռը և անսպասելի կրակեց յեկողների վրա:

Այս անգամ ատրճանակը դալտճանեց Վեդոնոյին, գնդակը չվացնելով անցավ դռան մոտ կանգնած բանվորների գլխների վրայով:

— Ա, ա՛, կրակում ես, չո՛ւն: Աղաղակեց ապստամբողներից մեկը և հրացանն ուղղեց դեպի Վեդոնոն:

Արձակած գնդակը տեղն ու տեղը սպանեց Վեդոնոյին — սրճի տնկարանների վերակացվին,

բանվորների նման մալայեցուն, վորը դավաճանել եր նրանց և անցել յեկվորների կողմը:

— Վերջ չանը:

— Չվերկենա հանկարծ:

— Հիմա արդեն վերջն ե:

Մի անկյուն մտած, սեղանի առաջ, վորի վրա անթիվ աստվածների նկարներ եյին դրած, ընկած եր նոր այրիացած կինը:

Ի տեր աստվածների, ձեռք մի տաք, — աղաչում եր նա:

— Ինչ աստվածների, գոռաց մի յերիտասարդ բանվոր, — թող նրանք հիմա քեզ ոգնեն, մեզ ել վոչ մի աստված պետք չե:

— Ավելի լավ ե, ցույց տուր վո՞րտեղ ե դբած ուտելեղենը, թե չե մեր ընկերները բավականին սովածացել են:

— Վոչինչ չկա, յերդվում եմ Բուդդայով, վոչ մի պաշար չունենք:

— Հենց այն ե՝ հավատացինք քեզ. ավելի լավ ե՝ ինքդ ցույց տուր, յեթե վոչ մենք կքանդենք, բոլորը կգտնենք, բոլորը կվերցնենք:

Ճշարով և վողբարով, կինը յեկողներին տարավ մառանը, վորտեղ շատ մթերքներ եր պահված:

VII

— Ինչպե՞ս յերևում ե, այս անգամ գործն ավելի լուրջ ե...

— Ի՞նչ կա:

— Սրճի տնկարաններում ապստամբու-

թյուն ե... Բանվորները գրավել են զինանոցը, ջարդել են պահակներին ջրկատամարը և հարձակվում են կառավարչի տան վրա:

— Լավ լուրեր են, ինչ ասել կուզի. կորուստները մե՞ծ են:

— Սպանված են Լեյտենանտ Բրանտը և քառասուն յերկու զինվոր... պահակ ջրկատամարի մնացորդները յեվրոպացիներին են պաշտպանում...

Բեյտենզորգի կայարանի գլխավոր ռադիստն իր ոգնականների հետ խոսակցությունը վերջացնելով, զանգահարեց գեներալ նահանգապետին, վորի հետ ռադիստն միանում եր ուղիղ հաղորդիչով:

— Շտապ ընդունեք ռադիոն:

Հուզված տեղեկությունները՝ Երիկ Վան-Ռաուտենի ստորագրությամբ, վերջանում եյին կոչով՝

«Ղեկավարական ոգնություն, յեթե վոչ կորած ենք»:

Գեներալ-նահանգապետն առանձնապես անհանգստացած եր իր յեղբորվորդու և նրա յերիտասարդ կնոջ վիճակով, կարճ հրամաններ եր արձակելով քաղաքապահ զինվորներին հրամանատարին:

— Բոլոր մեքենաները մորիլիգացիայի յենթարկել, վոչ մի զննչություն: Սակայն, սովորեցնելու կարիք չկա: Հիշեք անցյալ տարվա ապստամբությունը: Այն ժամանակվա խաղաղացումը, ծաղիկներ կլինեն, այս տարվանի

հետ համեմատած: Այնպես չե՞, գնդապետ: Հրամանատարն զգաստ կանգնեց:

— Գյուղերը կրակի մատնել... Քարը քարի վրա չթողնել...

Շուտով պաշարվածները խրախուսիչ ռադիո ստացան Բեյտենզորգից ուղարկած ոգնության մասին...

Երիկ Վան-Ռաուտենը հայտնեց իր զինվորներին այդ ուրախ լուրը և անձամբ իր կողմից մեծ գումար խոստացավ:

— Բացի այդ, յես կխնդրեմ գեներալին՝ ձեզ բոլորիդ բարգեվատել մեղալնեքով՝ դադարեցնելով պատվական ծառայության համար, — ավելացրեց կառավարիչը:

— Մինչև վերջը կպաշտպանվենք, — պատասխանեցին զինվորները:

Փոքրիկ բլրի վրա, դեպսայի հետեվը, կանգնած եր Բանտամը՝ ուշադրությամբ նայելով հեռու անցնող ճանապարհի վրա:

Այդ ճանապարհը բաժանվում եր մի շարք շավիղների, վոր տանում եյին այս ու այնտեղ ջրված տեղական գյուղերը:

Նախորդակին սաստիկ անձրև եր յեկել և մարդիկ, վորոնց Բանտամն ուղարկել եր շրջակա գյուղերն՝ իրենց յեղբայրներին հրավիրելու, շտապ ոգնություն հասցնելու ապստամբներին, ընկղմվում եյին ծոր տվող ցեխի մեջ,

վայր եյին ընկնում, բռնում եյին կաշող, վոր լորվող պատատուկներէց, կտրում նրանց և նորից ընկնում գետին:

— Անիծված անձրեւ, անիծված, յեղանակ,—հուզվում եր Բանաւամբ:

— Վորքան ժամանակ պիտի կորցնեն մեր պատվիրակները, վոր գոնե ամենամոտո գետալին հասնեն:

— Ղարի՛բ, կանգնի՛ր, և յերբ ճանապարհով գնացող մարդիկ տեսնես, ինձ իմաց տուր:

— Պատրաստ,—նավաստու նման, պատասխանեց գլինված մալայեցին, վոր կյանքում կարողացել եր յերկու անգամ ճանապարհորդել աշխարհի շուրջը:

Ապստամբները, կառավարչի տունը շրջապատելով, դանդաղ առաջ եյին գնում:

«Համառ ասիացիք» — մտածեց զորախմբակի հրամանատարը — հիմա քաղաքապահ զորքի ամենամեծը: — Գալիս ե, գոնե վախենան: Յեթե Բեյտենդորդից մեզ ոգնություն չհասնի, մենք կորած ենք: Այդ այնպես պարզ ե, ինչպես այն, վոր յես Բիլլ Գերման եմ, նորին մեծության Վիլգելմինա՝ Նիդերլանդների թագուհու մնացորդ պահակ ջոկատամասի զորախմբակի հրամանատարը»:

Անընդհատ հրաձագությունը յերկու կողմից հանկարծ դադարեց:

Չղային ցնցում անցավ պաշարվածների թիկունքով:

Տարորինակ հուզմունք պաշարեց հարձակվող ապստամբներին:

Այդպիսի հանդարտության բոլորներ՝ յերկար հրաձգությունից հետո, առանձնապես եւ ազդում կովող կողմերի վրա:

Ամեն մեկը դրանցից կամենում ե ընդհատել այդ վրդովեցնող լուությունը և... չի կարող...

Պաշարվածները, ոգտվելով հանդարտությունից, կարգի յեն դցում իրենց խանդաված շարքերը...

Հեռո՛ւ, հեռո՛ւ, սուր սուլոցը, ավտոմոբիլների սիրենաների, ճեղքում եյին խոնավ ողբ:

— Փամփուշտնե՛ր, փամփուշտնե՛ր, չղթա կապեցեք, ընկերնե՛ր. — Լսվում եր մերթ այս տեղ, մերթ այնտեղ Բանտամի հանգիստ ձայնը, թեև ներքուստ նա վրդովում եր, վոր ոգնությունն ուշանում ե:

Հրացանաձգության համար տեղ բռնելով, ապստամբների չղթան վայրկյան առ վայրկյան պատրաստվում եր հարձակումն սկսել:

— Ի՞նչ ե, Բեյթենա, չուտով կսկսենք նորից կրակել. — դարձավ Բանտամն աղջկան, վոր կանգնած եր չղթայում Մատիլի կողքին:

— Ի հարկե, կկրակենք, — ժպտաց Մեյթենան, հրացանը սեղմելով, — հաբադատ ձեռքը յերբեք չի խաբի...

1) Դեսսա — փոքրիկ գյուղ:

2) Պուշկովտան—բնակիչների կողմից պարտադիր
կարգով միջերջների հանձնումը:

3) Տուգուն—արմավենու տերևներից գործած
գլխարկ:

4) Վազր—ախպես յավայացիք անվանում են
խվրոպացիներին:

Դ Ա Ո Ւ Դ Ա

1. Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Յերկու փոքրիկ աղջիկ «Հարսանիք» եյին
խաղում,—արեւելքի յերեսանների ամենասիրե-
լի խաղերից մեկը:

Նրանք Համարյա Հասակակից եյին և ա-
մեն կերպ կամենում եյին լուրջ յերեւալ:

Ինչպես մեկը, այնպես ել մյուսը մի քանի
անգամ ներկա եյին յեղել իսկական Հարսա-
նիքներին և հիմա նրանք ճշտությամբ կրկնում
եյին այն բոլորը, ինչ տեսել եյին կյանքում:
Այլեւի մեծը՝ փեսան եր', ավելի փոքրը—
Հարսը:

Թեթե քամին զզում եր նրանց փոքրիկ
Հյուսերի սև մազերը, սահում եր թուխ մար-
մինների վրայով և սլանում հեռու դեպի ցած-
րիկ յեղեգնյա խրճիթները:

Սաղի ամենատաք ժամանակը լավեց մի
բարկացած ձայն:

— Արի տուն, ծո՛ւյլ:

Յեւ ամենամոտիկ խրճիթից դուրս յեկաւ
մի կարճահասակ կին՝ կալե սափորը ձեռ-
քին:

— Այդպես ել գիտեյի, այդպես ել գիտե-
յի, դու դարձյալ անզոր՝ ման ես դայի, Դաու-
դա՝ թավաները մաքրե՞լ ես, ձրիակե՛ր:

— Այո, մորաքույր, — հետեւեց յերկշոտ պատասխանը:

— Իսկ ջրի ո՞վ պիտի գնա. Յե՞ս պիտի գնամ, ինչ է:

Աղջիկն ահով, ծեծի սպասելով, մոտեցավ յեկողին և նրա ձեռքից վերցրեց սափորն ու շարժվեց դեպի գետակը, վորակողից ամբողջ դյուղի բնակչութիւնը ջուր եր վերցնում:

Գետակի շուրջը կեղտոտ եր. ջուր վերցնելու տեղից մի փոքրիկ հեռու անասուններին ջուր խմացնելու տեղ եր պատրաստված: Ուղում ինքնազործ մտրակները շրխկացնելով և թանձր փոշու սյուներ բարձրացնելով, հովիվները գետակի մոտ Ելին քշում տնային կենդանիների հոտերը:

Վոչխարների մայրը խառնվում էր ջորիների առանձնահատուկ ձայներին:

Դառուղայի թողած ընկերուհին, դեռ կանգնած եր նույն տեղում: Նա սպասում եր, վոր Դառուղան հետ կնայի, բայց աղջիկը վախենալով կնոջից, վոչ մի անգամ յետ չնայեց:

Միայն այն Ժամանակ, յերբ գետակի ճանապարհին գտնվող բլուրը վերջնականապես աչքից ծածկեց Դառուղանին, աղջիկը ձեռքը դրեց չրթունքներին և համբույր ուղարկեց նրան:

— Չհամարձակվես այլևս Դառուղայի հետ խաղալ, — դարձավ կինը աղջկան. — Դառուղան մութացկան է, մենք իբրեւ վողորմածութիւն,

պահում ենք մեզ մոտ դրա մօրը: Դառուղան պիտի աշխատի և վոչ թե խաղա:

Փոքրիկ Ռադխան վոչինչ չպատասխանեց այդ խոսքերին և վազեց տուն:

Նա խղճաց Դառուղային, վոր յերկու տարով մեծ եր իրենից: Դառուղայի հետ հետաքրքիր եր խաղալ, բացի այդ, նա այնպիսի հեքիաթներ ե պատմում, վորոնց նմանը գյուղում վոչ վոք չգիտեր:

«Ի՞նչու ինձ չի կարելի նրա հետ խաղալ».
անցնում ե փոքրիկ յերեխայի գլխով, և Ռադխան վճռեց այդ հարցով դիմել մօրը:

— Դառուղան — աղախին է, նա հայր չունի: Ամենակարող Վիշնուն խլեց նրա մօրից ամուսնուն, նա անարգ կին է և իրավունք չունի ամուսնանալու:

— Ո՞վ, Դառուղան իրավունք չունի ամուսնանալու, նորից հարցրեց Ռադխան:

— Դե՛, վո՛չ է, նրա մայրը:

— Իսկ Դառուղա՞ն:

— Կտար դու ել ինձանից այդ աղջկանով. — աղաղակեց մայրը:

— Չհամարձակվես նորից նրա հետ խաղալ, նա քո թայը չէ: Մի մոռանա, վոր քո հայրը բոլորից հարգված մարդ ե գյուղում, իսկ Դառուղան մութացկան է: Նրա մայրը հնարավորութիւն չունի իր համար մինչև անգամ մի պտղունց բրինձ գնելու:

Ռադխան լուռ լսում եր մօր խոսքերը:

— Վիշնուն գիտե՛ ում պատժել և ում

բախատալոքութիւն բերել: Ավելի լավ է զնա
ամենակարողի առաջ փայտիկ վառել:

Յեւ մի քանի վայրկյանից հետո խրճիթը
լցվեց անուշահոտութեամբ, վոր բուրում եր
Վիշնույի փոքրիկ բրոնզյա արձանի առաջ վառ
վող փոքրիկ փայտի կտորից:

Փոքրիկ Ռադխան, ձեռքին դանդաղ վառ-
վող փայտիկը բռնած, աղոթում եր իր հա-
մար, վոր Վիշնուն վողորձած լինի զեպի Դա-
ուդան ու նրա մայրը, վոր նրանք բրինձ
ուռենան, չա՛տ, չա՛տ բրինձ, վոր Դաուդայի
մայրը յերկրորդ անգամ պմուսնանա, վոր
այն ամենաչար կինը, վոր Դաուդային ուղար-
կեց չրի, նրան չնեղացնի:

Այդ մտքերի մեջ ընկղմած, փոքրիկ
Ռադխան չնկատեց, թե ինչպես կրակը դան-
դաղ մոտենալով նրա քնքույշ մատներին, հան-
կարձ կալավ նրանց և ստիպեց աղջկան ցա-
վից ճչալ:

2. ՄԱՅՐԸ

Միապաղաղ ու դանդաղ անցնում էին
որերն իրար հետևից. այդպես դանդաղ ու զգուշ
ձկնորսը քաշում է ուռկանը լճից, վախենալով
անհանգստացնել իր վորսը, փախցնել նրան և
զրկվել համեստ պարենից:

Տոն որերից մեկն եր, այն ընտանիքը,
վորոնց մոտ ապրում էին Դաուդան և իր
մայրը, պատրաստվեց տաճար գնալու:

Բոլորը հագան իրենց ամենալավ զգեստ-
ները, կանայք և աղջիկները, զարդարեցին ի-
րենց ձեռքերը և վոտքերը մատանիներով, ո-
ղերով և մանյակներով:

— Իսկ դու ինչո՞ւ չես հագնվում. — դար-
ձավ Դաուդան մորը. — Միթե չես ուզում
զնալ բոլորի հետ: Ձե վոր այսօր այնպես մեծ
տոն է, վոր ամբողջ գյուղը շտապում է զնալ
հոնդեսին:

— Մերելի Դաուդա, տեսնում ես, բոլորը
տանական զգեստներ են հագնում, իսկ յես բա-
ցի այս շորերից, վոր վրաս են, ուրիշը չու-
նեմ:

— Իսկ ինչո՞ւ չես հագնում քո զարդա-
րանքը:

— Յես այն եւ չունեմ:

Կամենո՞ւմ ես յես այն զգեստները հա-
նեմ հենց այս բոպեյիս, — չեր դադարում աղ-
ջիկը:

Այն ժամանակ մայրն իր ծանր աշխա-
տանքից կոշտացած ձեռքով շոյեց աղջկա
կտուցը տվող սև մաղերը և ասաց.

— Յես, իրավունք չունեմ, Դաուդա,
դարդանանք կրելու, յես, — դժբախտ կին եմ,
վորովհետև մեծ Վիշնուն խից ինձնից ամուս-
նուս: Նա դժվարութեամբ եր արտասանում
այս խոսքերը. յերևում եր, վոր շատ ծանր
եր նրա համար դորձի իսկական եյութունն
աղջկանը լուսաբանել:

— Յես ամեն ամիս պիտի պաս պահեմ,

վոր ամենակարողի գութը շարժեմ, — շարու-
նակեց նա:

Դառուղան ինքն ել գիտեր մեր ծանր
դրության մասին՝ ամուսնուն կորցնելուց հե-
տո:

Դառուղան հորը պարզ չեր հիշում: Նա
մոտ յերեք տարեկան եր, յերբ հայրն իրենց
գյուղին մոտ շենքերից մեկի կառուցման ժա-
մանակ մեռավ: Յերիտասարդ այրին մի քա-
նի ամսվա ընթացքում տերտերի շեմքերը մա-
շեց, հույս ունենալով դոնե մի փոքրիկ գու-
մար ստանալ, վոր կարելի լիներ կերակրել
իրեն և իր անչափահաս աղջկան: Սակայն
նրա բոլոր անթիվ յերթեվեկությունները վոչ
մի ոգուտ չունեցան և նա ստիպված յեղավ
տեղավորվել հանգուցյալ ամուսնու աղքա-
կանների մոտ:

Շենց վոր արեւ ծագում եր, վեր եր կե-
նում Պարբաթին՝ Դառուղայի մայրը, վորի
վրա յեր տան ամբողջ գործերը:

Յեւ այնուամենայնիւ, յերբ հիշում եր
այն ժամանակները, յերբ նա զանազան տե-
ղեր ու իշխանավորների մոտ եր գնում, Պար-
բաթին ավելի թեթեւ եր շունչ քաշում, հիմա
պետք չեր յերկար ժամեր, որեր, շաբաթներ
նստել ծխախոտի ծխով լի սենյակներում,
սպասելու այն բարձրաստիճան մարդուն, վո-
րից կախված եր իր ամբողջ կյանքը: Պետք
չեր պարապմունքների վերջում ամեն անգամ
լսել նույն խոսքերը.

— Վաղն արի:

Յեւ ահա հենց այս խոսքերն եյին, վոր
վերաբերում եյին վոչ միայն Պարբաթին,
այլ և մյուս ինքրատուններին, վորոնք համբե-
րությամբ նստած ժամեր, որեր և շաբաթներ,
սպասում եյին, հույս ունեյին, թե վաղը, գու-
ցե վաղը նրանց իղձերը կկատարվեն և նրանք
կստանան վաղուց սպասված ոգնությունը:

3. ԱՀՌԵԼԻ ՀՅՈՒՐԸ

Կիզիչ ամառ եր:

Արեւ այնպեւ եր այրում, վոր սովոր հըն
դիկներն անգամ տոչորվում եյին:

Շրջանը, ուր գտնվում եր գյուղը, տանջ-
վում եր յերաշտից: Իզուր բրահմիններն ան-
թիվ աղոթքներ եյին վերառաքում վիշնուին.
ահա յերկրորդ շաբաթն եր՝ անձրեւ չկար:

Ամեն ուր վաղ առավոտ վեր կենալով,
մարդիկ աչքները հառած նայում եյին յեր-
կընքին, բայց, ավա՜ղ, նա կապույտ—կապույտ
եւ, առանց մի ամպիկի, մրցում եր կապույտ
ովկյանոսի հետ, վորն ընկած եր գյուղից հե-
տու:

Բրնձի բողբոջները, վոր ուրիշ բույսերից
ավելի պահանջ ունենալով ջրի, չորացել ե-
լին և բնակչությանը սով եր սպառնում:

Հանկարծ բռնկվեց խոլերան:

Բրահմինները հավաքում եյին խելացոր
չքավորներից վերջին կողերները՝ շարժելու

Վիշնուի գութը, բնակիչներին ազութքի էյին հրավիրում:

Միայն մի յերիտասարդ հնգիկ, վոր յերկրի մեծ քաղաքներից մեկնում էր ավարտել բժշկական դպրոցը, գիտեր աղետի իսկական պատճառը:

Նուրբան գյուղ էր մտել հնգիկներէ սըրբազան գետի՝ Գանգեսի ափերից:

Ահուրի հյուրը շատ զոհեր տարավ:

Հնգիկ բժիշկը միակն էր, վոր այդ ծանր որերին բնակիչներին ոգնություն էր հասցնում:

Նրա յերկու ոգնական բուժակներին, նույն պես հնգիացի, վոր անձնուրաց խնամում էյին հիվանդներին, տարավ մահը...

— Մայրի՛կ, մայրի՛կ, յես քեզ մենակ չեմ թողնի, ինձ տար հետդ, ազադակում էր Դաուդան, ձեռքերը կոտրատելով. — մայրի՛կ, սիրելի մայրիկ, — յես առանց քեզ ի՞նչ պիտի անեմ:

Արտասուքը թափթփում էր աղջկա աչքերից, քամին խաղում էր նրա թափթփված մազերի հետ. անչափ ծանր էր նրա համար:

Պարբաթին վոչինչ վեր լսում:

Յերկու առողջ հնգիկ, վորոնց բժիշկը համոզել էր ոգնել իրեն այդ գործում, փաթաթեցին մեռածին եծանագին գործվածքի մեջ և դուրս տարան խրճիթից:

Դաուդան գերեզմանատնից տուն վերադառնալով, ընկավ խորի վրա և այնքան գլու-

խը ավեց գետնով, մինչև՝ բոլորովին ուժասպառ յեղավ:

Բոլոր աշխատանքը, վոր ընկած էր հանգուցյալ Պարբաթի ուսերին, մնաց նրա աղջկա վրա:

Դաուդան վոչ մի բույե հանգիստ չուներ: Նա նիհարել էր և սկսել էր հազալ ու արյուն թքել:

Չար հորաքույրը հանգիստ չեր տալիս դժբախտ աղջկան:

— Գնա մորդ մոտ, նա սպասում է քեզ: Կամ.

— Բեզ հիվանությունն էլ չտարավ, անիծվեա դու, ճիհակեր:

Կինը խլել էր Դաուդայից այն սակաթիվ դարդերը, վոր դեռ մնացել էյին նրա մոտ. դա ավելի մեծ հարված էր, քան հորաքրոջ անհաշիվ ծեծն ու ապտակները:

Գիշերները, վաղուց անպետքացած նախասենյակում պառկած խորի վրա, Դաուդան ծառուկ հանում էր անկյունում պահած իր վերջին գարդերը, — փոքրիկ ապարանջանը և մանյակը գույնզգույն հուլունքներով և հիանում էր նրանցով:

Դաուդան իրեն հարսնացու յե յերեակայում, վորի մոտ յեկել է սիրած մարդը՝ առջարկություն անելու:

Յեվ ահա մի անգամ, չգիտես ինչու համար, մի գիշեր հորաքույրը մտավ նախա-

սենյակ հենց այն ժամանակ, յերբ Դաուդան
իր զարդերն եր նայում:

Վոչ լացը, վոչ աղաչանքը, վոչինչ չաղ-
դեց հորաքրոջ վրա:

Դաուդան զրկվեց իր վերջին և միակ ու-
րախությունից:

4. ՀԱՐՍՆԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Աչունը մոտենում եր:

Դաուդան, ինչպես միշտ, վերադառնում եր
գետից՝ ջրով չի սափորը ձախ ուսին դրած:

Սրճիթի մոտ նրան դիմավորեց հորա-
քուրը:

— Յերբ ջուրը կտանես, Դաուդա, արի
ինձ մոտ,—ասաց հորաքույրը. և նրա ձայնը
այնպես անսովոր հնչեց աղջկա աղանջին, վո՞ր
Դաուդան վախեցավ:

«Ի՞նչ կարող ե նշանակել այս»—մտածեց
նա:

Սափորը սովորական տեղը դնելով, Դա-
ուդան վազեց հորաքրոջ մոտ, դեռ գլխի չընկ-
նելով, թե բանն ինչումն ե:

— Դու արդեն մեծ աղջիկ ես,— սկսեց
հորաքույրը,— դու արդեն տասնյերկու տա-
րեկան ես, ժամանակ ե ամուսնանալու:

«Մի՞թե պիտի վերջանան իմ տանջանքնե-
րը» — մտածեց Դաուդան, բայց վոչինչ չա-
սաց, միայն սիրտը ուժգին զարկեց եփանա-

դին շորերի տակ. կարծես թակարդի մեջ ըն-
կած սարյակ լինեք:

Ինչո՞ւ յես լռել, Դաուդա,— շարունա-
կեց հորաքույրը, ամեն աղջիկ՝ քո հասակին
պիտի յերազե ամուսնության մասին: Ահա,
տես, Ռադխան քեզանից յերկու տարով փոքր
ե, նա ել արդեն ամուսնացել ե:

— Ռադխա՞ն,— միայն կարողացավ բա-
կանջել Դաուդան:

Մի քանի ամիս ընկերուհուն չպատահե-
լով, Դաուդան վոչինչ չգիտեր նրա վիճակի
մասին և շատ զարմացավ, յերբ այդ նորու-
թյունը լսեց:

— Դե, Դաուդա:

Լռություն:

— Սակայն՝ քեզ վոչինչ, վոչ վո՞ր չի ել
հարցնի:

Տպավորություններից չփոթված, աղջի-
կը գլուխը կորցրել եր, չգիտեր ինչ աներ և
ինչպես պատասխաներ:

— Գնա, լվացվիր, վերցրու իմ արկղից
զարդարանքները, հյուսիս մագերդ և մնա
տանը:

Դաուդայի ձեռքերը դողում էին, յերբ
նա մագերն եր հյուսում, նա քիչ եր մնացել
մանյակը վայր դրեք: «Ինչ դժբախտություն
կլինեք, յեթե յես հուլունքները կտրեյի»—
տանցավ նրա մտքովը: Նա անց եր կացնում իր
միակ ապարանջանը կամ աջ, կամ ձախ ձեռքի

վրա և մերթ մոտեցնելով, մերթ հեռացնելով՝
երենից, զմայլվում եր այդ զարգում:

Ավելի ուժգին զարկեց Դաուդայի փոքրիկ
սիրտը, վոր նոր եր դիմավորել իր տառնյեր-
կույերորդ գարունը, կամ ինչպես այստեղ
ասում են, բրինձի բերքը, վորովհետև, այս
յերկրում բերքով են վորոչում ժամանակը:

Դու արդեն պատրաստ ես. Դաուդա.—
հարցրեց հերաքույրը՝ խրճիթ մտնելով:

— Այո՛, — պատասխանեց աղջիկը:

— Շուտով մեզ մոտ կգա քո փեսացուն,
իսկ վաղն ել հարսանիք կանենք:

— Հրամեցեք, հրամեցեք, Կորչանդ—մա-
դարաջ²⁾, նա ձեզ սպասում ե:

— Խաղաղություն այս տանը, թող սրհ-
նի նրան ամենակարող Վիշնուն: Հենվելով յե-
ղեղնից կտրած դավադանին, ալեղարդ ծերու-
նին առաջացավ գեպի խրճիթը:

Միտալի բանալով կախած նոր հյուսած
դուռը, հորաքույրը տարավ հյուրին ոննյակ,
վորտեղ վրդովմունքից սառած, կանգնած եր
Դաուդան:

— Ահա և հարսնացուն, Կորչանդ—մա-
դարաջ, դո՛ւր ե գալիս ձեզ:

— Այո՛, աղջիկը հիանալի յե:

— Ուրեմն, արդեւքն ի՞նչ ե: Վաղը հար-
սանիք կանենք:

— Յես համաձայն եմ: Ինչպես և դրա-

անունը. դու ինձ ասել ես, բայց յես արդեն
մոռացել եմ, վերջի ժամանակ հիշողությունս
սկսել ե ինձ դավաճանել:

— Ի՞նչ Եք ասում, Կորչանդ—մադարաջ, կատակ
եք անում: Ամբողջ գյուղը հարգում ե ձեզ,
ինչպես մի իմաստուն մարդու.— շողոքոր-
թությամբ նկատեց կինը և ավելացրեց.—
Դաուդա յե սրա անունը, հարգելի սահիր:

Յեկողը դողացող ձեռքն իջեցրեց իր շեր-
տավոր խալաթի նման շապկի լայն գրպանը,
և այնտեղից բնկույզով լցրած դեղձ հանելով,
մեկնեց գունատված աղջկան:

— Կե՛ր, Դաուդա, թող մեր միաբան կյանքն
այնպես քաղցր լինի, ինչպես այս սպարին³⁾:
Դաուդան հագլիվ ստիպեց իրեն շնորհա-
կալության խոսքեր քամել:

— Ուրեմն՝ մինչև վաղը, գեղեցիկուհի:

Նախասենյակում հորաքույրը հարցրեց
փեսային.

— Իսկ դրամի մասի՞ն ինչպես, մեծա-
նո՛ւն սահիր:

— Ամեն բան այնպես կլինի, ինչպես խոս-
տացա, անհանգիստ մի լինիր:

— Չի՞ կարելի, արդյոք, մի փոքր նախ-
ըրդ ստանալ, մեր ծախսերը շատ են:

Ձրնգացին դրամները և մի քանի արծաթ
ուռայիններ⁴⁾ անցան Կորչանդի շերտավոր գրպա-
նից կնոջ ազահությամբ մեկնած ձեռքը:

Վոչ մի կերպ, մտածեց. Դաուդան, — վոչ մի կերպ — յես ծերունու կինն չեմ լինի. «լավ եմաս, քան ամուսնություն»:

Դաուդայի հույսն՝ իր կյանքն այնպես կարգավորել, ինչպես սրճաք ե, խորտակված եր:

«Վաղը հարսանիքն ե, — մտածեց նա: — Վաղը յես պիտի ծերունու կինը դառնամ: Վորքան ժամանակ կարող ե նա սպրել: Մի տարի, յերկու, հինգ տարի: Յես կմնամ այրի: Նորից գնամ հորաքրոջս մոտ: Նորից անվերջ տանջանքներ»:

Վաղ այրիացած մոր որինակը և նրա տխուր վիճակը ստիպեցին Դաուդային վճռել ամեն ինչ անելու:

Յերբ տանը քնեցին, նա, աղմուկ չհանելու համար, վերցրեց փայտե սանդալները, կամաց քաշեց դռան փակը, նռնյալիսի զգուշությամբ դուռը փակեց և դուրս յեկավ խրճիթից:

Ծներից մեկը մոմոալով վրա հասավ Դաուդային, բայց յերբ ճանաչեց, սկսեց քծնել:

— Գնա դնա տեղդ, Կալու, բոլորը քնած են — քնքուշությամբ շոյեց շանր Դաուդան:

Մաքուր մաքրած թավի նման, դուրս եր դալիս լուսինը կապույտասեմ յերկնքի վրա: Նա, չգիտես ինչու, հիշեցրեց Դաուդային

այսորվա հյուրին՝ Կորչանդին: Նրա համար, արդյոք, վոր նա սպիտակ եր, ինչպես լուսնից ընկնող լույսը, թե՞ վորովհետև նրա անվան մեջ չանդ վանկ կար, վոր նշանակում եր հընդ-վերեն լուսին: Դաուդան այդ չգիտեր:

Բրնձի արտերից փչող վոչ այն քնքուշ քամին, վոր բերում են ծովի հովերը ձմռան ժամանակ, այլ մի տեսակ ցուրտ, խոնավ միջ-չեմ վոսկորները թափանցող, ցնցեց Դաուդային:

«Վերջին անգամն ե փչում քամին ինձ համար, — վերջին անգամն եմ նայում յես լուսնին» — մտածեց աղջիկը:

Նա կամենում եր վերադառնալ, մի անգամ ևս գուրգուրել Կալուին, միակ կենդանի արաքածը, վորին նա պատահել եր այս գիշեր:

— Վո՛չ, ասաց Դաուդան, հանկարծ հորաքույրը կարթնանա, այն ժամանակ ամեն ինչ կորած ե:

Միակ փրկությունը մահն եր՝ հետագա բոլոր տանջանքներից ազատվելու համար: Յերկշուտությամբ շուրջը նայելով, վազում եր Դաուդան գեպի գետը:

Մի փոքր առաջ յեկած հորդառատ անձրեւները շատացրել էյին գետակի ջրերը և այն ծանծաղուտ տեղը, վորտեղ կարելի յեր անցնել վոտքով, հիմա ջուրը ծածկում եր ձեռքերը բարձրացրած հասակով մարդուն:

— Մայրի՛կ, սիրի՛լի՛ մայրիկ, հիշեց Դաու-

ուղան, — ահա յես ել գալիս եմ քեզ մոտ, —
արտասուքն աչքերին առաջ աղջիկը, մո-
տենալով գետին:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄ

Գյուրենեյի, — արհեստավորի կնոջ քունը
յերկար ժամանակ չեր տանում, նա կողքից
կողք եր շուռ գալիս իր խորի վրա, դարձյալ
քունը չեր գալիս:

Գյուրենեյ վեր կացավ, վառեց Վիշնույի
առաջ հոտավետ փայտիկը:

Սաստիկ ծարավ զգալով, մոտեցրեց իր
բորբոքված չրթունքներին սափորը: Սափորը
դատարկ եր:

Գյուրենեյ ծարավը հագեցնելու համար
գնաց գետը՝ ջուր բերելու:

Մոտ ուրեքում Գյուրենեյ պատրաստվում
եր իր միակ աղջկանը՝ Սիտային ճանապարհ
դրելու: Հեռու Բոմբեյ, վորը գնալու յեր ջուր
հակի գործարանը, վորտեղ աշխատում եյին
արդեն իր ընկերուհիներից մի քանիսը:

Ահա թե ինչու, Գյուրենեյ, — մանր արհես-
տավորի կինը, չեր կարողանում աչքերը
փակել:

«Ո՞վ ե այս ժամին այստեղ ման գալիս,
մաածեց նա, նկատելով գետի մոտ յերեվա-
ցող մի ստվեր ե ձայն տվեց:

— Ո՞վ ե այդտեղ:

Ստվերը տատանվելով, կանգ առավ, կար-
ծես չգիտեր ինչ աներ:

Գյուրենեյ ճանաչեց աղջկան ե դարձացավ:
— Ի սեր ամենակարող Վիշնույի, ինձ միջ
թշվառացնի, Գյուրենեյ մորաքույր:

Յեվ աղջիկը ծնկաչոք ընկավ մոտեցող
կնոջ առաջ:

— Բանն ինչո՞ւմն ե, Դաուդա: Պատմիր
կարգին: Դե', վերկաց, խեղճ վորբիկ: Ա՛խ,
դժբախտ Պարբաթի, — շարունակեց Գյուրենեյ, —
մենք միասին ենք մեծացել, ինչ սոսկալի վի-
ճակ եր:

Աղջիկը թավալում եր գետին:

— Վեր կաց, Դաուդա:

Վերջապես աղջիկը վեր կացավ:

— Յե՛ս, վախենում եմ — չչնջաց նա:

— Ումնից ես վախենում:

— Հորաքրոջից ե փեսացվից՝ նույնպես:

— Ի՞նչ փեսացու: Գնանք մեզ մոտ:

Դաուդա, այնտեղ ինչպես կարգն ե, կպատմես:

— Յես ձեզ աղաչում եմ, Գյուրենեյ մորա-
քույր, հանուն իմ հանգուցյալ մոր, ինձ չմառ-
նեք, թե չե յես, միևնույն ե, կիսախեղ ե յե-
թե այսօր չհաջողվեց ինձ գետն ընկնել, յես
այդ կյանք մյուս անգամ, կամ կկախվեմ
թղենու վրա:

Միայն այն ժամանակ, յերբ Դաուդան
մտավ Գյուրենեյի խրճիթը, իրեն ապահով
դրաց:

— Հիմա նստիր ե պատմիր կարգին, թե ինչ
ե պատահել:

Խոսքերը խառնելով, գանգատվում եր
Դաուդան բարի կնոջն իր ծանր կյանքից:

Գյուրնեն միայն շարժում եր գլուխը և
կրկնում:

— Խեղճ Պարբաթի, յեթե դու միայն իմա-
նայի՛ր: Դժբախտ Դաուդա:

— Աղաչում եմ ձեզ, Թանգակին Գյուրնե
մորաքույր, չմատնեք ինձ, — կրկնում եր
աղջիկը:

— Հանդիստ յեղիբ, Դաուդա, վոչ վոք
վոչինչ չի իմանա:

— Իսկ յեթ հորաքույրն ինձ փնտռի՞:

— Իհարկե կփնտռի, միայն... չի գտնի, —
ժպտաց կինը: — Վորտեղից նա կիմանա, վոր
դու ինձ մոտ ես:

Դաուդան յերախտապարտ աչքերով նայեց
բարի կնոջը և վոչինչ չպատասխանեց: Գյուր-
նեյի ժպիտը, նրա փաղաքշական խոսքերը,
այսորվա դեպքը — բոլորը խառնվեց գույնը-
գույն հանգույցում:

— Պառկի՛ր քնի, Դաուդա, ասաց Գյուրնեն,
արեվի լույսին: ավելի լավ գործ կարվի, քան
լուսնի:

Իզուր և Դաուդայի հորաքույրը, մազերը
չաղանցած, վազվզում գյուղում՝ կորած աղ-
ջկանը փնտռելու: Նրա ջանքերն իզուր անցան:
Դաուդան կարծես ջուրն և ընկել:

Վոստիկանը, վորին նա դիմեց, քչեց նրան,
կարծես նա աչնան ձանձրալի մոծակ լիներ:

— Այլևս ուրիշ գործ, բացի աղջկանդ
'հետեվելը' չունեմ:

Այն ժամանակ կինն սկսեց հավատացնել
վոստիկանին, վոր կորած աղջիկն իրենից ավելի
թանկ եր, վոր նա Դաուդային իրենից ավելի
յեր սիրում:

— Հեռացիր, պառավ, յեթե վոչ քեզ
կբանտարկեմ:

Կինը հետ դարձավ և գնաց՝ բուռնցքները
սեղմելով և Դաուդային անիծելով:

— Կորան իմ դրամները, կորան՝ չնարհիվ
այդ անպիտան աղջկա: Անիծվի նա...

Դաուդային պետք չեղավ առանձնապես
համոզելու Սիտայի — Գյուրնեյի աղջկա հետ
Բոմբեյ գնալ՝ բախտ վորոնելու:

Այդ քաղաքում, վոր հայտնի յեր իր բազ-
մաթիվ ջուհականոցներով, Սիտան ծանոթեց
ունեք, վորոնց մոտ կարելի յեր իջնել մինչև
գործի մասնելը և բնակարան գտնելը:

Սիտայի հայրը՝ Շուգրան, մանր արհես-
տավորն ուրախ եր, վոր իր աղջիկը միայնակ չի
գնա Բոմբեյ, այլ Դաուդայի հետ:

— Համենայն դեպս, յերկուսով ավելի լավ
և ճանապարհ գնալ, — ասաց նա, — ձեզանից
մեկը հանգստանալ կուզե, — մյուսը պահապան
կլինի:

Դուք պիտի իրար պաշտպանեք: Կյանքը դըժ-
վարացել է հիմա, մեզ՝ բանվոր յեղաւորներին,
վարացել է հիմա, մեզ՝ բանվոր յեղաւորներին:
Վոչ մի կտոր հող
գյուղում գործ չկա անելու: Վոչ մի կտոր հող

չունեմ, ստիպված եմ մի կերպ կառավարելու:
Մի բուռը բրինձ ունե՞ս — լավ, չես աշխատել —
սոված մնա: Ծանր ե կյանքը հիմա:

Հենց վոր արեվը ծագեց, ճանապարհորդ-
ներն սկսեցին ուղեվորվելու պատրաստություն
տեսնել:

Յերկար չափեց պատրաստվելը: Դեռ
յերեկոյից փոքրիկ պարկի մեջ Գյուրենն
դարսել էր մոտ տասը թխվածք, փոխնորդ և
մի քանի զարդեր — ահա այն բոլորը, վոր պիտի
աղջիկները տանեյին:

Միտայի հայրն այդ դեպքի առթիվ
բրնձե ողի էր ճարել: Մի քանի կաթիլ դեռ-
նին թափելուց հետո, այդպես են սնում
Արեվյելքում, յերբ կամենում են հիշել
ընտանիքի հանգուցյալ անդամներին, կամ
ծանոթներին, — նա դարձավ ընկերուհիներին:

— Սիրով յեղեք և ոգնեք միմյանց:

Նա խմեց ողին և ձեռքը մեկնեց խորին,
կամենալով թխվածք վերցնել, վոր նրանով
ողիի դառնությունն անցնի, բայց թխվածք
չկար, Գյուրենն բոլորը դրել էր պարկի մեջ:

Այն ժամանակ Միտան, նրա ցանկությունը
հասկանալով, վազեց դեպի պարկը:

Հայրը ձեռքով կանգնեցրեց նրան:

— Պետք չէ, Միտա, դուք հեռու ճանա-
պարհ եք գնալու, իսկ մենք մնում ենք այստեղ:
Գյուրենյի ճանապարհի բարեմաղթոցներն

ամբողջ ճանապարհը մայրենի գյուղից մինչև
Խոմբեյ պիտի սարյակի փետուրներից փափուկ
դարձնեյին:

Միտայի հայրն ուղեկցեց աղջիկներին
մինչև ոռաջին պտույտը, հետո դարձավ և
չուտով բլուրը ծածկեց նրան:

Ճանապարհի յերկու կողմը բուսնում
էյին հնդկական կաղնիներ և յուղատու ծառեր:
Հսկայական թղենիք, վորոնց արմատները
դուրս են գալիս իրենց ճյուղերից և տարածվում
անվերջ, աճում էյին այս ու այն կող-
մում: Վայելուչ արմավենիք պարծենալով
մում: Վայելուչ արմավենիք պարծենալով
իրենց մշտական տերեփներով, ձգվում էյին
դեպի առավոտյան յերկինքը: Արեվյելքում,
առանց շառապելու, բարձրանում էր կինամոնա-
գույն արեվը:

Սկսեցին ճանապարհորդները պատահել
մեկին կարիքը քշում ե քաղաք, մյուսին՝ գյուղ:
Գիշերը մեր ճանապարհորդները հասան
գյուղերից մեկը:

— Արի տերեփներ հավաքենք, և մի տեղ
քնենք: — Առաջարկեց Դաուդան:

— Ինչ ես ասում, — առարկեց Միտան: —
Իսկ ոձերից մի՞թե չես վախենում: Բացի
այդ՝ հայրս ինձ նախազգուշացրել է, վոր այս
անտառներում վագրեր և բնձառյուծներ կան:
Նրանք հարձակվում են մերոնց վրա:

Անդրիազոզ համար լավ է — նրանք միշտ
գլխաված են, իսկ մերոնք իրավունք չունեն
զենք կրելու:

— Գնանք, մեկին խնդրենք, մեզ թույլ տա գիշերելու:

Հենց առաջին խրճիթում ճանապարհորդները ապաստարան գտան:

— Բոմբեյը հեռու՞ է յե,—հարցրեց Դաուդան:

— Վաղը լուսարացին դուրս կգաք, յերեկոյան այնտեղ կլինեք:

8. ԳՈՐԾԱՐԱՆ

Տեղական թաղամասի անթիվ, մութ նկուղներից մեկը, վորտեղ մարդ գծվարությամբ կշարժվեր, ներս վազեց Սիտան:

— Շուտ պատրաստվիր, Դաուդա.—ուրախ բացականչեց նա. գնանք գործարան, գործ կա:

Ընկերուհիներն ստիպված էյին մի ամսի չափ տեղի սպասել և հիմա այդպիսի ուրախ լուր ստանալուց հետո, Դաուդան շտապ շալը դրեց գլխին և Սիտայի հետ դուրս յեկավ տանից:

— Ահա և վերջ մեր սովին:

— Այո՛, հիմա արդեն կսարքվենք,—քաջալերում էյին նրանք միմյանց: Վոչ թե գնում, այլ վազում էյին աղջիկները՝ Սև քաղաք կոչված թաղամասով, աղտոտ փողոցներով, ցածրիկ աղյուսից շինված տներով և յեղեղնյա խրճիթներով, վորոնց վրա նայելիս, ընկերուհիները հիշում էին իրենց հարազատ գյուղում թողած խրճիթները:

Ահա և գործարանը,—ասաց Սիտան արագ քայլելուց հեվալով:

— Բարե, Մախինդեր, սա այն ընկերուհին է, վորի մասին յես քեզ ասել եմ:

— Սպասեցեք այստեղ, շուտով կգա վերակացուն, պատասխանեց հնդիկ-բանվորը՝ Սիտայի և Դաուդայի հայրենակիցը:

Նրանք յերկար չսպասեցին, քսան ըոսկանց, վորի ընթացքում բարձր, աղյուսե շենքի դարպասից դուրս յեկավ վերակացուն:

Ընկերուհիները սառեցին նիհար, մոխրագույն ու յոտուղներով անդլիացու առաջ:

— Սրա՞նք են,—հարցրեց վերակացուն:

— Թող վաղը գործի կենան:

Անդլիացին, ձեռնափայտով խաղալով, վերադարձավ գործարան, իսկ հնդկացին սկսեց բացատրել իր հայրենակիցներին, թե ի՞նչ և ի՞նչպես այժմ նրանք պիտի անեն:

Արևը յերբեք չէր յերեվում Սև քաղաքի բնակիչների նկուղներում:

Բոմբեյի յեվրոպական թաղամասում բնակիչները դեռ քնած էյին լինում, յերբ հազարավոր հնդիկ բանվորուհիներ շտապում էյին գործի:

Ընկերուհիներն արդեն ընտելացել էյին իրենց գործարանի շշակին. նրանք զանազանում էյին նրան հարյուրավոր ուրիշ շշակներից, վոր այնքան ատելի էյին յուսարացին և ուրախալի՛ աշխատանքի վերջին:

Սիտայի գնում էյին նրանք արթնացած

փողոցներով և միջավայրացիներով, քչելով իրենց հաղթող քունը:

Գնում էյին գործարան, վորտեղ աշխատանքն լառայժամ տանջանք եր:

Յեվ չի կարելի չզնայ:

— Վո՛հ—յեթե բռնիճը բավականացներ բոլորին:

Գործարանը, վորտեղ աշխատում էյին Դաուդան և Սիտան, համարվում եր ամենախոշորներից մեկը Բոմբեյում: Նա չալեր և թաշկինակներ եր արտադրում, վոր հայտնի էին չըջանից շատ հեռու:

Ի բնե ընդունակ և դիտող, նրանք արագ բմբունցին իրենց գործը:

Աղջիկները շատ ուրախ էյին, վոր իրենց սեփական աշխատանքն ունեն:

Մի փոքր գումար հավաքելով, Սիտան ուղարկեց տուն: Սիտան գիտեր, թե վորքան ծանր է ծնողների կյանքը և դրա համար կամեցավ գոնե մի փոքր մեղմացնել նրանց ծանր դրությունը:

Դաուդան, վոր Գյուրենեյի մասին ամենալավ հիշողություններ եր պահել, նրան գունամոր չալ ուղարկեց:

«Թող ուրախանա ընծայի վրա»—մտածեց նա:

Մախնդերն ել գոհ եր իր յերկրացիների համար.

Տեղավորվեցին...

Ինչպես թափում են ավազե ժամացույցի հատիկները, այնպես մի որինակ անցնում եր վոջնչով: Հիսանգարվող գործարանի կյանքը: Մի անգամ, յերբ աշխատանքն արդեն վերջաՄի անգամ, յերբ աշխատավորներն անհամբեր նալու վրա յեր, և աշխատավորներն անհամբեր սպասում էյին չչալին,—դադգյահների մոտ սպասում էյին չչալին,—դադգյահների մոտ չիտթություն պատահեց: Բանվորուհիներից մեկը, վոր վախենում եր զրկվել տեղից և այդ պատճառով ծածկում եր իր հղիությունը, յերկնեց:

Յերեսայի առաջին ճիշը խառնվեց կատաղած վերակացվի մտրակի չվիոցին և մոր բարձրածայն լացին:

—Մի տես, տեղ դտավ ցնդնելու,—կատաղում եր անդլիացին:—Կորցրեք սրան ախտեղից:

Դաուդան, վոր աշխատում եր դժբախտ կնոջ կողքին, վրա հասավ նրան ոգնելու:

—Դո՛ւ, գթասի՛րտ, կանգնիր դադգյահի մոտ,—մտրակն իջեցնելով Դաուդայի ուսերին, գոռաց վերակացուն:

Դաուդան մոտեցավ իր դադգյահին: Գործն առաջ չեր գնում: Սուր ատելություն բռնկվեց նրա՝ ուրախություն չտեսած սրտի մեջ: Այդպես բռնկվում եր ամուսնը, յերբ սկսում էյին բանեցնել հնոցը:

—Կորցնել սրտն և այս բոլոր դարչելի բաներն ախտեղից,—հրամայեց վերակացուն:

Ատելությամբ լի, վերադառնում եր Դաուդան իր սենյակը:

Ահա յերեք տարի յի, վոր նա աշխատում է այդ գործարանում: Նա շատ բան տեսավ, շատ պատահաններ տարավ, բայց այսորվա դեպքն ընդմիջտ կմնա Դաուդայի հիշողության մեջ:

Նա կամենում էր իմանալ, թե վորտեղ է ապրում այդ անբախտ կինը, վոր այցելի նրան և ոգնի:

«Նվողյալ հարուստներ, — մտածում էր նա. — դուք սոսկալի ծեծում եք կնոջը միայն նրա համար, վոր նա ծնեց: Կարո՞ղ էր նա բնության դեմ գնալ... Իսկ դո՞ւք, ձեր յերեխաների մասին հոգալով, ուղարկում եք նրանց ձեր հայրենիքը, վորովհետև մեր յերկրի ողբ նրանց համար վնասակար է:

Դաուդան դիտեր, վոր յուրաքանչյուր Հնդկաստան ընկնող անգլիացու յերազն է հարձստանալ, մեծ թոշակի արժանանալ և վերադառնալ տուն ու իր կյանքի վերջին տարիներն ապրել ապահով:

— Նղբովի՛ք, — արդեն բարձրաձայն ասաց նա:

Գործարանում հենց նոր պատահած դեպքը խանդարեց նրա անգործը և մանկությունից դյուրագրգիռ Դաուդան յերկար ժամանակ չէր կարողանում զգաստանալ:

Նա դուրս յեկավ փողոց:

Հոկտեմբեր, ծովի վրա կատաղի փոթորիկ էր, վորն արգելում էր նավերին՝ նավահանգիստ մտնել:

— Ո՞վ է. — հարցրեց Դաուդան, դռան դարկը լսելով:

— Յես եմ, — սենյակը մտավ Մախնդե-րը: — Բարե հայրենակցուհի, ինչ լավ է քեզ մոտ:

Դաուդան շողոքորթված նրա խոսքերով, աչքերը ցած գցեց:

— Ձե՞ս ամաչում, — սկսեց կատակով կշտամբել նրան Մախնիկերը. — այսքան ժամանակ ե միմյանց ճանաչում ենք, և դու վոչ մի տնդամ ինձ չես հրավիրել քեզ մոտ:

— Յես միշտ ուրախ եմ քեզ տեսնելու, միայն ներիք, թանգադին հյուրին հյուրասիրելու վոչինչ չունեմ:

— Թո՛ղ, դա չնչին բան է, յես առանց այդ էլ դո՛հ եմ, վոր տեսնում եմ քեզ:

Յեվ նա իր՝ գործից կոշտացած ձեռքերով սեղմեց Դաուդայի թուխ ձեռքը:

— Գնա՛նք, Մախնիկեր, — ասաց նա մի փոքր լուսթյունից հետո:

— Գնանք, յեթե կամենում ես, — ասաց բանվորը, չթողնելով նրա ձեռքը:

... Յես վոչ մի անգամ այստեղ չեմ յեղել տաճարի տոնին. վոչ մի կերպ չեյի կարողանում հաջողացնել: Ամեն անգամ գալիս ես դորձարանից հոգնած, — տրամադրություն ել չի վնում: Յերեվի շատ հետաքրքիր է:

— Ահա կտեսնես: Կեղատոտ, ծուռամուռ փողոցները և նրբանցք-

ները հասցրին նրանց տաճարներից մեկի մոտ, վոր գետեղված էյին քաղաքի ասիական մասում: Ամեն կողմից գալիս եր այստեղ ժողովուրդը՝ տոնի առթիվ յեղած պարերին նայելու:

Ամբոխի մեջ, այս ու այն կողմում թափառում էյին մուրացկանները՝ քայքայված ծերունիներ և մի փոքրիկ աղջիկ, բոլորովին մերկ, վորի միակ զարդարանքը՝ յեռանկյունի ամուլետն եր՝ արծաթե շղթայով կախված կինամանգույն փորին:

Իրենց մասնագիտության պատիվը պահպանելով, վոր զանազանում ե հնդիկ մուրացկաններին իրենց ոտարազգի յնդրայրներից, նրանք առանց շտապելու մեկնում էյին ձեռքերը, ասելով.

— Բախշիչ⁵)—Սահիր:

Ամբոխի միջով անցնելով, վոր բավականին դժվար գործ եր, Դաուդան և Մախինդերը մոտեցան յերաժխտներին, վոր տեղավորվել էյին տաճարի մուտքի մոտ:

Միքանի սրնդահար և ծնծղահար՝ չորս թմրկահարների հետ կողմում էյին որկեստը:

Յերաժխտներն սկսեցին նվազել և ամբոխը միանգամից նետվեց նրանց կողմը՝ աշխատելով որկեստորին մոտ լինել, թեև փչող գործիքները սուր ձայնը և ուժեղացող պղնձե դողանքը լավում էյին հեռու՝ չորս կողմը:

Կարծես մեկի հրամանով, հանկարծ ամբոխը հետ գնաց, մեջ տեղում գոյացավ ա-

ղատ տեղ և մի քանի վայրկյան հետո, մի յերիտասարդ պարուհի, կանաչ և արծաթե, վոսկե թելերով կարած զգեստ հագած, գրավեց ժողովրդի ուշադրությունը:

Պարուհու ձախ քթանցքից կախված էյին մի քանի մարդարտե և աղամանդե ողեր, վոտքերը և ձեռքերը վոսկե ապարաջաններով էյին զարդարված, մաղերի մեջ սպիտակ նարդիղներ էյին յերևում— հնդիկների տաճարների նվիրական ծաղիկը:

Ականջներից մինչև ուսերը կախված արծաթե փականները և սև փոքրիկ կետը, վոր փայլում եր քթարմատին և նշան եր, վոր պարուհին ամենացած դասակարգին ե պատկանում, նրան ավելի գրավեց էյին. դարձնում:

Փոքր ինչ երկար, բայց արտահայտիչ ձեռքերն ողի մեջ զանազան շարժումներ էյին կատարում:

Պարուհին մերթ խաղում եր մի ձեռքով, մերթ լայն դնելով վոտքերը, ծալում եր ծրնկները, կամ ձեռքերը աղդերներին դնելով և դեպի առաջ յերկարացնելով աջ վոտքը, անդադար շարժում եր ուսերն ու դուխը:

Աստիճանաբար տաքանալով, պարուհին վերջապես հոգնեց և նրան փոխարինեց մի ուրիշը՝ թեթև կանաչ զգեստով:

Դաուդան հուզված սեղմվեց Մախինդե-

— Դե՛, ինչպե՞ս է, պարերը քեզ դո՞ւր են գալիս:

— Իհարկե, այստեղ ավելի լավ են պարում, քան դժուարում:

Մոտեցած աղջամուղջը նրանց գտավ արմավենիների տաղավարում, վոր տաճարից մի փոքր հեռու յեր:

— Դաուդա, — ասաց Մախինդերը, լուսթյունը խանգարելով, — մեր գործարանում շատ բանվորուհիներ կան, բայց վոչ մեկն ինձ այնպես դուր չի գալիս, ինչպես դու:

Աղջկեր լուռ եր:

— Յնչո՞ւ յես լռել, Դաուդա:

— Մախինդե՛ր, բազականչեց նա: — Հիչո՞ւմ ես — յերբ պարուհին յերգում եր:

Արի ինձ մոտ և յես կպատմեմ քեզ իմ յերջանկության և դժբախտության մասին, քե՛զ, իմ սիրեցյալին, վոր ինձ կատարելապես հասկացել է...

— Ինձ թվաց, թե նա նայեց իմ սրտի մեջ և կարգաց բոլորը, ինչ վոր գրած է այնտեղ ...

11. ԳՈՐԾԱԴՈՒՆ

Ճանապարհը Սև քաղաքից դեպի ջուհակների գործարանն անցնում եր նավահանգրստի մոտով: Գիշեր և ցերեկ աշխատում էյին այդտեղ ծանր բեռ կրողները՝ բարձրանալով և դատարկելով հսկայական չոգենավերը,

վոր յեկել էյին հեռու յերկրներից, կամ մեկնում էյին յերկրի շուրջը ճանապարհորդելու:

Ժամանակավորապես միայն լուսինը փոխարինում եր հանգստի դնացած արևին, բայց և արծաթե լույսի տակ աշխատանքը շարունակվում եր:

Այժմիում էյին լեբյոդկաները, դուրս նետելով նավթով լիքը բեղոնները, բրնձի պարկերը, յերկաթ, մեքենաներ, շաքար, քարածուխ...

Դրանց փոխարեն ուրիշները — ափից լոցնում էյին չոգենավերի ազահ ներքնահարկերը թանգազին մորթիներ, վրայից վացած զոհի, կամ վորսորդի արյան հետքերը, թեյ կամ սուրճ, վոր կորցնում են յերկար ճանապարհորդության ժամանակ իրենց տեղում ունեցած անուշ բուրմունքը, Գոմշի, յեղջերուի յեղջուրներ, դանդուր ծխախոտ, բորակ, լեղակ, բամբակ, — անվերջ բամբակ:

Լուսնին փոխարինող արևը նույն անընդհատ աշխատանքի պատկերն եր տեսնում, նավահանգիստը՝ հեռու տարածված շենքերով, ինչպես թողել եր. հանգստի դնալու ժամանակ:

Ինչպես միշտ՝ սովորական ժամանակին արթնացավ Դաուդան և ըստ սովորության սպասում եր ծանոթ չչակի ձայնին:

Բայց չչակի ձայնը չեր լսվում:

«Ինչ կարող է նշանակել այս, — մտածեց նա. — մթե յես քնով եմ ընկել...»

Յեւ վախենալով, վոր ուշացել է աշխատանքից, դուրս վազեց սենյակից:

Նավահանգստի մոտով անցնելիս, Դաուդան հափազանց զարմացավ այն անսովոր պատկերով, վոր ուներ նավահանգիստը:

Ամբողջ աշխատանքը նավահանգստում դադարել էր. վոչ մի բեռ բարձող չէր յերևում և միայն հասնելով այնտեղ, վորտեղից նա պիտի շուռ գար դեպի ձախ, Դաուդան նկատեց մի խումբ բանվորներ, վորոնք վողեւորված խումբ ելին ինչ վոր բանի մասին: Նրանց մեջ նա դատավ Մախնդերին: Արյունը տվեց աղջկա թուխ յերեսին:

— Այսպես չի կարող շարունակվել, ընկերներ. մենք կարծում եյինք, վոր վարչութիւնը մեզ ընդառաջ կդնա: Անկեղծ եմ ասում, վոր յես հնքս այն միամիտներից եյի, վորոնք դրան հավատում են: Յեւ ինչ ստացվեց: Վոչ միայն չեն կամենում մեր վարձն ավելացնել այլ մեզանից շատերին ուղում են փողոց նետել: Դաուդան ուշադրությամբ լսում էր այն ամենը, ինչ՝ կատարվում էր:

Յեկրորդ խոսողը բեռնակիրների ներկայացուցիչն էր. մի ամրակազմ, գեր հնդիկ, վորի յերեսին մտրակի սոսկալի հարվածներից հավիտենական հետք էր մնացել, վոր ստացել էր դեռ մանուկ հասակից:

Ընկերնե՛ր, — առանց շտապելու սկսեց նա, — դործարանատերերը կրճատում են արդյունաբերութիւնը:

Հասկանո՞ւմ եք դուք, թե դա ի՞նչ է նշանակում: — Նա նայեց ժողովականներին: — Դանշանակում է, վոր հազարավոր բանվորուհիներ, վոր հիմա զբաղված են ջուհլակի գործարաններում, մեր մայրերը, քույրերը և ամուսինները ստիպված կլինեն զրկվել տեղից և սովամահ լինել:

Ամբոխի միջով առաջին դղրդունն անցավ.

— Ինչպես առաջ, պահանջում ենք ավելայնել աշխատավարձը:

— Իրավունք չունեն վոչ մի մարդ կրքճատելու:

— Թող մեզ հետ չվարվեն, ինչպես անասունների հետ:

— Դուրս՝ բռնակալ անդլիացիներին:

— Իսկ մերոնք ի՞նչով են նրանցից լավ:

— Մերոնց ել՝ նրանց հետ:

— Կեցցե, գիրնի—կամգարը՝):

— Ահա, ընկերնե՛ր, մենք բեռնակիրներու դործագույ հայտարարեցինք, վոր ձեզ՝ բանվորուհիներիդ պաշտպանենք:

Հետ նայելով, Դաուդան տեսավ, իր կողքին և շուրջը կանգնած իր դործարանի բանվորուհիներին: Բացի այդ, կալին շատ անծանոթներ՝ գրացի դործարաններից:

— Ուրեմն մենք ի՞նչ պիտի անենք, — լավեց հանկարծ Դաուդայի ձայնը: Նա մի վայրկյան ինքն ել վախեցավ իր սեփական ձայնից, վորովհետև նա առաջին անգամ էր

խոսում այսպիսի անսովոր պայմաններում և
այդպիսի մեծ բազմության մեջ:

— Բեռնակրի կտրուկ ասած «Գործադուր»
բառը Դաուդային վստահություն ներշնչեց:

— Իհարկե, գործադուր. — ձայնակցեցին
հավաքվածները:

— Մենք յերդվում ենք, ընկերներ, —
չարունակեց բեռնակիրը, — վոչ մի նավ չբար-
ձել և չբազարկել, մինչեւ մեր պահանջները
չկատարեն:

Գործադուր անելը նավահանգստի բեռնա-
կիրների ներկայացուցչի համար առաջին
անգամը չէր: Մի անգամ չէր, վոր ստիպված
էր յեղել դրա համար զանազան ժամանակ բան-
տերում նստել և փոստիկանության հալա-
ծանքներին յենթարկվել:

Սունդերը, — այսպես էր նրա անունը —
հասկանում էր, վոր միայն բոլոր աշխատա-
վորների միացյալ ուժերով կարելի յեր յան-
կացած նպատակին հասնել այս յերկրում, վոր-
տեղ տիրապետում էին յեկվորները՝ միացած
տեղական հարուստներին:

Դաուդայի աչքերն առանձին փայլ էին
տալի և ավելի վստահությամբ էր սեղմվում
նրա հարվածի պատրաստ բռունցքը:

12. ՄԱԼ

Մեկը մյուսի հետեից հավաքում էին
բանվորուհիները գործարանի դարպասի մոտ:
Բարձր աղյուսից շինած շենքը, վոր սովոր-

րական ժամանակ աղմկող փեթակ էր հիշեց-
նում, հիմա լուռ էր:

Բոլորը գալիս էին այդտեղ, կարծես տան
էր և այդ հիշեցրեց Դաուդային՝ հանդիսավոր
որերը դյուղում:

Նրա հիշողության մեջ անցավ իր անխնդում
մանկությունը, հորաքրոջ ծեծերը, մոր մահը,
ամուսնության պատմությունը:

Ինչպես հեռու յեր հիմա այդ բոլորը: Յեւ ել
չի վերադառնա: Ինչպիսի յերջանկություն է
ազատ լինելը: Ազա՞տ, — ընդհատեց նա իր
հիշողությունները: — Իսկ վերակացուն: Իսկ
այն, վոր նա տասը ժամ որվա մեջ պիտի աշխա-
տի և կոպեկներ ստանա:

Իսկ ա՞յն, վոր նա կարող է գրկվել և այդ
կոպեկներից:

Դաուդայի մտորմունքը կտրեց մի սուր
ձայն, վոր լսվեց համարյա իր ականջի տակ:

— Մենք այս րոպեյիս կգնանք դեպի նահա-
նադապետի պալատը: Ով վոր չի կարողացել
դալ մինչև հիմա՝ մեզ կհասնի:

Դաուդան ձանաչեց Մարային, վոր աշխա-
տում էր իր հետ՝ գործարանի նույն մասում:
Մարայի ամուսինը նավահանգստում բեռնա-
կիր էր: Դաուդան գիտեր, վոր նրան անգլիա-
ցիներն են բանտարկել, այդ մասին ասել էր
նրան ինքը Մարան:

Դաուդայի հարցին, թե իսկապես ի՞նչու
էր նա նստած, բանվորուհին հպարտությամբ
պատասխանեց:

— Նա մեր լավն է ցանկանում:

«Լավն է Մարան, — մտածեց Դաուդան, — ե՛ս ձայնն եմ այնպես հնչուն ե դարձել»:

Նահանգապետի բնակված շինության առաջ պահակներ եյին կանգնած:

Ցուցարարները կանգնած լինելով պալատից փոչ հեռու, չեյին կարող ծածկել իրենց վրդովմունքը:

Պահանջում ենք աշխատավարձն ավելացնել, — լսվում եյին ամբոխի աղաղակները:

— Վոչ մի կրճատում:

— Դա մեզ սովամահությունն է սպառնում:

— Հանուն յերեսաների:

— Դո՛ւքս յեկվորներին:

— Կեցցե բանվորազուղացիական Հընդ-կատանը:

Դաուդայի թուխ յերեսը շառաղունեց, յերբ Մարան հայտարարեց.

— Ընկերներ, դուքն ձեզնից մեկը կամհոնում եմի բա՞ն ասել:

Հո՞ծ ողակից դուքս գալով, Դաուդան սկսեց.

— Յես չգիտեմ—ինչի՞ մասին խոսեմ: Կարծում եմ ձեզնից ամեն մեկը նույնն է մտածում, ինչ փոր յես...

Նրա հիշողության մեջ վերականգնեց մի քանի որ առաջ պատահած դժբախդ մոր դեպքը և շրթունքներն ամուր կծելով, այնպես ամուր, փոր արյունոտվեց շուրթերը, Դաուդան շարունակեց:

— Մենք պահանջում ենք, փոր մեզ հետ չվարվեն այնպես, ինչպես անասունների հետ... յերբ կատուն ճուտեր է ունենում, մենք մեր ցնցոտիներն ենք գցում նրա տակը... Մենք խղճում ենք կենդանիներին... Իսկ հիշում եք, ինչպես վերակացուն ծեծեց բանվոր-բուհուն՝ ուշագնացության հասցնելով նրան միայն նրա համար, փոր նա ծնել էր գործա-բանում:

Վրդովմունքից նա չկարողացավ պարզել իր միտքը...

— Հիշում ենք, հիշում ենք, ինչպես չհիշել, — լսվեցին զայրացած ձայներ և մի քանի հարյուր հավաքված բանվորներ մեկնեցին ձեռքերը:

— Յես ուզում եմ ասել.

— Յես ել:

— Յես ել:

Ընկերներ, թողեք Դաուդան խոսքը վերջացնի:

Շունչ քաշելով, Դաուդան կամենում էր վերջացնել իր անկապ, բայց բոլորովին հասկանալի ճառը.

— Մենք պահանջում ենք, փոր անգլիացիք...

Ցույց անողների մեջ առաջ յեկած չիֆ-ությունն արգելեց նրան շարունակելու:

Կրկնապատկված վոստիկանների խումբը, մարակները ձեռքերին, ծեծում եյին անպաշտ պան բանվորուհիներին:

Հառաչանքներ և անեծքներ խառնվեցին
առաժոտյան ողի մեջ:

— Տուր դրանց, կարիք չկա դրանցից քաշ
վելու:

— Մենք դրանց ցույց կտանք գործադուլ
անել:

— Ա՛յ, սրան բռնի, Վոր այստեղ խոսում
եր:

Հենց դա յե սկզբնապատճառը:

Յերկու վոստիկան Դաուդային բռնելով,
սկսեցին նրան ծեծել:

— Տվեք մեզ Դաուդային:

— Յրվեք ձեր աները...

Բայց ցույց անողները չեյին ցրվում:

— Յես քեզ առացի, վոր նա յե ղեկավա-
րը. — առաց մի վոստիկան մյուսին:

— Տար դրան վոստիկանատուն:

Կապած թեվերով, մտրակի հարվածների
տակ գնում եր Դաուդան, առաջը վռչինչ
չտեսնելով:

Սայթաքում, ընկնում եր:

Բանվորուհիների ամբոխը հետեվում եր
նրան. չնայելով, վոր վոստիկանների ծեծը
չեր դադարում:

Վոստիկանատան ճանապարհը գնում եր
ուղեհատից աջ:

Չիմանալով, վոր կողմը պիտի գնալ,
Դաուդան գնաց գեպի ձախ:

Փախչել վճռեցիր. — գոռաց Դաուդային

ուղեկցող վոստիկաններից մեկը և հրացանը
կրակեց մեջքին:

— Դաուդան ընկավ:

Կարմիր արյունը արագորեն վողողեց ճա-
նապարհի ավազը:

Ծովից փչող քամին հասցրեց բանվորու-
հիներին Դաուդայի վերջին խոսքերը. —

— Վռչի՛նչ, ընկերներ, յես միայն սայթա
քեցի...

Շարունակեցեք կռվել:

1) Բրահմին—հնդկական տերտեր:

2) Մադարաշ—սահիր—տեր:

3) Ռուպի—հնդկական դրամ—ուրբի:

4) Սպարի—հոտավետ ընկույզ

5) Բախչիչ, Սահիր—վողորմացեք, տեր:

6) Գիրնի կամգար — կարմիր դրոշ:

ՄԱՀԻՑ ՍԱՐՍԱՓԵԼԻ

1. ՀԱՐԵՄՈՒՄ

Դու կարծում ես, նա եմիրին¹⁾ դո՞ւր կգա:
Հիմա նրան վոչ վոք չի կարող դուր գալ.
Իմ տերն այնպես տարված է այն անիծած դյա-
վուր²⁾ կնոջով, վոր մեր մասին հիշել անգամ չի
կամենում:

— Դու իրավացի յես Մինովար: Փրանսու-
հին նրան պարզապես կախարդել է: Գիշեր ու
ցերեկ նա նրա հետ է անցկացնում: Թող ամե-
նաբարձյալ ալլահը նրան հաջողություն չտա:
Յես կարծում եմ...

— Սպասի՛ր, Դոյաչի, — ընդհատեց նրան
Մինովարը, — հիշո՞ւմ ես Ժանեատային: Մի
ժամանակ եմիրը նրա պատճառով մեզ բոլորո-
վին մոռացել էր:

— Դեհ, լավ եւ յերախտադեա գտնվեց նա
տիրոջ առաջ: Վո՞րքան վոսկի տարավ նա, իսկ
Թանգազին քարե՞ր, միայն քառասուն յերկու
ձևոք մետաղոն զգեստ տարավ:

— Մինովա՞ր, — հանկարծ անկյունից լսվեց
մի յերկչոտ ճայն, վոր խանգարեց յերկու կնոջ
վողեվորված խոսակցությունը:

— Համարյա միաժամանակ պատասխանե-
ցին խոսողները և նրանց պատասխանում հա-
զիվ ծածկված Թշնամության ձայն հնչեց:

— Ծարավը տանջում է ինձ. — շարունակեց
ձայնը:

— Գնա ուղտի մեզ խմիր, — շարախնդու-
թյամբ առաջարկեց կանանցից մեկը, — կրկնա-
կի ողուտ կլինի՝ Թե դողիդ կողնի և Թե ծա-
րավդ կհազեցնես:

Անկյունում կծկված սե գնդիկը, վոր
միայն լուսաբացին Բուխարայի չմարող արե-
վից չի կացրած ճանապարհով հասցրել էյին ե-
միրի հարեմը, խղճալի վողբաց:

Յեթե այդ կանայք, վոր չեյին համարձակ-
վում տղամարդու ներկայությամբ վոչ մի
խոսք արտասանել, յերբեվիցե լսել էյին գուան
ճռուցը, նրան կհամեմատեյին այդ ձայնը հենց
նոր լավող ձայնի հետ:

Այդ ժամանակ Մինովարը, նա Դոյաչիից
բարի յեր, ասաց — յերկու սենյակ կանցնես,
հետո ձախ՝ այնտեղ դրած է բուզով լի սա-
փորը:

Անուշահոտ, սպիտակ հեղուկը Թարմաց-
րեց աղջկան. նա վերադարձավ և խոնարհու-
թյամբ նստեց իր տեղը:

— Վո՞րտեղից քմացար, վոր իմ շանունս
Մինովար է, — դարձավ կինը յեկողին:

Քաջալերված նրանով, վոր իր հետ խոսե-
ցին, աղջիկը պատասխանեց:

— Ձե վոր դուք խոսում եյիք միմյանց հետ:

— Աա՛, դու ահանջ եյիր դնում, անսլուտան, — աղաղակեց Դոյաչին:

— Դե՛, նա հո չեր կարող ահանջները փակել — միջամտեց Մինովարը:

— Ձլինի թե սա մեզ մատնի եմիրին. — չեր դադարում կինը:

— Թո՛ղ նրան, Դոյա՛չի:

— Ձգիտե՞ս արդյոք՝ յերբ կդա Ոչիլ-բեկը, — վերջապես վճռեց հարցնել աղջիկը, զգացված Մինովարի պաշտպանությունից:

— Իսկ ինչի՞դ ե պետք այդ:

— Յես նրա կինն եմ:

— Իսկ մենք կարծում եյինք, վոր քեզ բերել են եմիրի մոտ, արագությամբ առացին նրանք: — Դու այնտեղ չես ընկել, Ոչիլ-բեկի կանայք մեր կողքին չեն: Սակայն, վոչինչ չի նշանակում, կարող ես այստեղ մնալ: Յերբ պետք լինի, Ոչիլ-բեկն ինքը կհիշի քո մասին... Քա՞նի տարեկան ես:

— Տասներկու:

— Մենք ավելի եյինք կարծում: Ապա, վեր կաց կանգնի՛ր... պատվիր...

— Դու լավ կազմվածք ունես: Նայիր, Մինովար, ինչ հրաշալի հյուսեր ունի: Ապա, թող մազերդ... Իսկական մետաքս ե: Անունդ ի՞նչ ե:

— Ջայնեթ:

— Ծնողներ ունե՞ս, — հարցեր եյին տեղում նրանք աղջկա դիմին:

— Յես չեմ հիշում մորս, յես յերեք տարեկան եյի, յերբ նա մեռավ: Չորս տարվա մեջ եյի, յեղարայրներս ինձ վաճառեցին: Նրանք հորիցս հարուստ եյին և այդ պատճառով հայրս չհամարձակվեց նրանց հակառակել: Յերբ իմ ինն տարին լրացավ, ալլահը հորս ել կանջեց իր մոտ:

— Ուրեմն դու վո՞րբ ես. — բացականչեցին կանայք, — ծանր ե հայր չունենալ, ավելի ծանր ե առանց մոր: Կնշանակե չկա մեկը, վոր սավանդ փոխի և վոչ վոք չի վերցնի այն՝ — քո անմեղության վկայությունը — առաջին դիչերից հետո:

Ջայնեթը լուռ եր:

— Ոչիլ — բեկն եմերի սիրելի նախարարն ե, — ընդհատեց լուռթյունը Մինովարը: — Քեզ համար լավ կլինի հարեմում: Յես կարծում եմ դու կդառնաս Ոչիլ-բեկի առաջին կինը:

— Իսկ Դուդրատ խա՞նը. — մտավ Դոյաչին:

— Յերբ միշտ դեղձ ես ուտում, տանձ ել կուզես ուտել. — պատասխանեց Մինովարը:

— Ամեն բանում խոնարհ յեղիր Ոչիլ-բեկին, նայիր նրա աչքերին, աչխատիր նրա ամեն նափոքրիկ ցանկությունը դուչակել: Կատարիր նրա ամեն մի քմահաճությունը: Սովորեցնում եյին աղջկան այդ յերկու կինը: Յերկրորդ տարին եր, վոր նրանք տառապում

եյին հմիրի հարեմում, յերազելով միայն
տիրոջ յերբեմնի փայփայանքների մասին,
նման մուրացիկների, վոր կանգնած են մզկիթի
դռանը ձեռքը մեկնած — աղաչում եյին նրանք
ամենաբարձրին, վոր տերն իրենց սիրո գիշեր
նվիրի: Բայց մզկիթի հավատացյալ հաճախորդ-
ներն հմիրից ավելի առատաձեռն եյին. մանր
գրամները հարյուր անգամ հաճախ եյին ընկ-
անձայն բռնմեջ, քան գլավուր կնոջով տարված
հմիրը դարձնում եր իր անշեջ կիրքը մոռաց-
ված կանանց վրա:

Բազմաթիվ սմբակների դոփյունը խառ-
նվելով սոխակների յերգերին, հարվեց տաք
գիշերվա մեջ, յերբ անցնելով այգու ցանկա-
պատի դուռը, Ոչիլ-բեկը մտավ հարեմ:

— Բիս—իլլա արրախման, արըյամ³⁾ — հեռու
չուրջը տարածվում եյին ձայները, կարծես
վողջունում եյին Բուխարայի ավազի ուլկյանու-
սի նման տարածված յերկրի հրամանատարի
սիրելի նախարարի գալուստը:

Մոխրադույն գառան մորթուց գլխարկը
ծածկում եր Ոչիլ-բեկի քունքերին մոտեցող
աչուներ: Շքախմբի մոտեցումը լսելով, ծառա-
ները դուրս վազեցին և խոնհար գլուխ տը-
տվին հմիրի սիրելուն: Վարդերի բուրմունքը,
վոր հասնում եր Ոչիլ-բեկի հոտոտությանը,
հիշեցրեց նրան Շիրազի հրաշայի այգիները
(պատանի հասակում նա յեղել եր Պարսկաս-
տանի այդ հրաշալիք անկյուններում և բերել
եր իր հեռ Սաադի⁴⁾ անմահ տորերը):

Առավոտյան քամին և հողը Շիրազի—
կրակ են:

Ում վոր նա պատե, այլևս հանգիստ չի
ունենա նա:

Բայց այդ կրակին միացավ մի ուրիշը.
կատաղի ներս խուժեց կիրքը և այդ բոցը լա-
փեց իր ակոյաններին:

Հարեմում նրան սպասում եր Զայնեթը.
միայն տասներկու անգամ ծաղկեցին վար-
դերը, յերբ յերկրներից ամենաբազմազույնը
յսեց նրա տուաջին ճիչը:

2. ՂՈՒԴՐԱՏ ԽԱՆ

Ավելի ու ավելի հաճախ եր ուղարկում
Ոչիլ-բեկը Զայնեթի հետեվից: Նա ձանձրացել
եր հիմա իր մնացած կանանցից, իսկ նորեկի
մեջ հմիրի սիրեցյալին դուր եր գալիս այն
անմիջականությունը և պարզությունը, վոր
տարբերում եր վերջին կնոջը մյուսներից: Նա
թրթում եր նրա կրծքին, ինչպես կաթնուկ,
վորին շարժում եր թեթև քամին, վոր գալիս եր
կամ հեռանում դշլաղների⁵⁾ բնակիչներին յեր-
ջանկություն բերող յերգող առվակներից,
կամ սլանում եր դեպի պղտորած ջրանցքները:

Այդ գիշերները Զայնեթն աչք չեր փակում:
Լուսաբացին Ոչիլ-բեկն առանձնապես
սիրալիր եր և ամենաքնքուշ խոսքերը դուրս
եյին թռչում նրա շրթունքներից, վոր թաց
եյին համբույրներից և շերբեթից, վորի արծա-
թե ամանը միշտ զբված եր անկողնու մոտ:

Ձանրմ, ջանրմ) — պատում եր Ձայնեթին
այդ հնչյունն խոսքը, պահելով նրա մետաքսա-
նման շաղանցած մազերի մեջ, վոր փուվել
եյին Ոչիլ-բեկի յերեսին և թխին եյին տալիս
սպիտակ սավանի վրա:

— Իմ ամենասիրելի կինս, շարունակում
եր նա, փաղաքելով Ձայնեթին, և տասնյեր-
կու տարեկան յերեսայի մեջ արթնանում եր
կինը:

Ի չիղները հագնելով, Ձայնեթը հիանում
եր նրանցով. գույնզգույն կոշիկները — Ոչիլ-
բեկի ընծան, քնքուշ կերպով դրկում եյին նրա
վայելչակաղմ վոտքերը: Նա մի քանի անգամ
անց ու դարձ արեց սենյակում, քայլե-
լով հատակին փուված վաղուց չթափված դու-
ղերի վրա:

Մի սուր ձայն խանդարեց հարեմի փոշոտ
լուսթյունը:

Ձայնեթը ցնցվեց:

— Յես քո բոլոր մազերը կփետեմ՝
նզոված դեխկան, յես քեզ ցույց կտամ, վոր
յես եմ և վոչ թե դու — Ոչիլ-բեկի սիրելի կինը:
Նա քեզ մի ինչ վոր ի չիղներ ե ընծայել, իսկ յես
վորքան ընծաներ ունեմ նրանից — դու յերա-
զումդ ել չես տեսնի, ստոր արարած:...

— Հանդիստ թող, ինձ:

— Տես ե, Ոչիլ-բեկի սիրելի կի՛նը: Ախար
նրա համար յես քո կատվի աչքերը կհանեմ ու

աղբակույտ կնետեմ, հետ ընկած շունն ել չի
լափի նրանց: Թո՛ւհ, դարչելի՛:

Ձայնեթը լուռ եր:

— Անծագում, անցեղ: Ձգվելի դեխկան՝).
իմ ծնողները նշանավոր մարդիկ են, իսկ դու՝
դեխկանի վիժվածք: Պիտի յերջանիկ լինես,
վոր Ոչիլ-բեկի հարեմն ես ընկել: Իսկ նա աշ-
խատում ե նրա սիրելի կինը լինել. — արհամա-
րանքով յերկարացրեց Ղուդրատխանը: — Իս-
կո՛ւյն հանի՛ ի չիղներդ, յես պիտի փչացնեմ
դրանք:

Հայտնի չե՛ ինչով կվերջանար Ղուդրատ-
խանի զայրույթը, յեթե սենյակ չմտներ Ոչիլ-
բեկը, մի բարձրահասակ զինվորական զգեստով
մարդու ուղեկցությամբ:

Ոտար մարդու մոտենալը տեսնելով, կա-
նայք վոտքերը ծալելով, նստեցին գետնին և
վերցնելով գորգի վրա ընկած կոտորները, նրան-
ցով ծածկեցին իրենց յերեսները:

— Դուք խոստացաք ինձ ցույց տալ Ձայ-
նեթին — հարցրեց հյուրը:

— Ամենայն ուրախությամբ, բայց յես
կկատարեմ ձեր խնդիրը, յերբ նա տառնելով
տարեկան կլինի և ինձ մի տղա կպարզելի:

Ձինվորական զգեստով մարդը խոնար-
հեց գլուխը, միաժամանակ չրխկացնելով ըն-
դուն ու խթանները, կարծես ուզում եր ասել.

— Բավական յերկար պիտի սպասել, ցույց
կայն, ինչպես կամենում եք...

Ոչիւրեկը հյուրի հետ անցնելով ալա-
բաստրի շքեղ դահլիճը, փոր զարմացրեց զինվո-
րական զգեստով մարդուն տարրորինակ փոճե-
րի խառնուրդով, մտան մի բարձր սենյակ՝
ամբողջովին պատած հազվագյուտ գորգերով:
Յերկու վոսկե թուր խաչածե զարդարում էյին
պատերից մեկը: Սենյակի ամբողջ յերկայն-
քով գորգ եր փռած, վորի գույներն ամեն բո-
պէ փոխվում էյին, արեւի՞ց եր անդ արդյոք,
վոր ընկնում եր փակ պատուհանների ապակի-
ներից, թե՞ խայտաբղետ գույներէց վրդով-
ված անփորձ մարդու աչքը նորանոր յերանդ-
ներ եր փնտռում:

Վոսկով կռած մատուցարանի վրա ծառա-
ները բերեցին փլավի մի սար և դնելով հտտա-
կի վրա, լուռ հեռացան:

Դեռ ճաշողները ափսեներին՝ ձեռք չտված,
չնչակտուր ներս մտավ կուշտեղին՝ Բուխա-
րայի եմիրի նախարարը:

Նրա դեմքը, մշտական կախ ընկած ալտերի
կարմրությամբ՝ հուզված եր յերևում:

— Ներեցե՛ք, սպասե՛լ տվի ձերդ գերազան-
ցությանը, — ասաց նա՝ դառնալով հյուրին. —
նորին բարձրությունը հրամայեց սալ ձեզ այս
ընծան:

Բուխարայի աստղի խոշոր աղամանդի
ճառագայթները ցանկալի խրճով խփեցին
հյուրի աչքին, յերբ նա բացեց առաջին նախա-
բարի մեկնած արկղը՝ ամենուրեք մեռուքսով
պատած:

— Ծնորհակալ եմ — պատասխանեց ուռս գե-
ներալը, — վաղը յես անձամբ կայցեյեմ նորին
բարձրությանը:

Ոչիւրեկը հյուրասիրության սրենքը կա-
տարելով, հանդիսավոր կերպով ճաշը դրեց
պատվավոր հյուրի առաջ՝ մատաղ դառան
վոսկը՝ ուղը միջին:

Միայն մի քանի մարդ անսահման հեռու
Պետերբուրգում, իսկ այստեղ՝ Բուխարա-
յում — միայն եմիրը, նրա առաջին նախարարը և
Ոչիւրեկը՝ եմիրի սիրելին զխաեյին գեներալի
զալստյան իսկական նպատակը:

Գաղանի խորհրդակցության ժամանակ
պալատում չորս մարդ կար՝ յերեք Բուխարա-
ցի և յեկող ուսուր. պայմանավորվեցին ամեն
ինչի մասին:

Հաղար իննը հարյուր տասն և յոթ թիվն
եր:

Չգիտես ինչու, պատերազմի զանազան ճա-
կատներ նետված փականագործներ, ջուլհակ-
կատներ նետված փականագործներ, հանքահաններ, լեռնա-
ներ, մետաղագործներ, ահա չորրորդ տարին է
գործներ, գյուղացիք, ահա չորրորդ տարին է
վոռոգում էյին իրենց արյունով Գալիցիայի
կանաչած արտերը, պատած դիակներով ծած-
կում Երզրումի ամրոցի սառցապատ, մոտեց-
ման ճանապարհները, արյամբ ներկում էյին
Վիսլայի, Դնեստրի, Դունայի պղտոր ջրերը...

Բանվորների կոկորդները բողոքի առաջին
ալիքն էին գլորում՝
— Բավական ե...

Բաղձալի քարավանով սլանում էին այդ
լուրերը դեպի ճակատ և անցնելով թիկուն-
քի պահեստները, հիվանդանոցները, վիրա-
կապության վայրերը, հազարավոր զանազան
վարչամասեր, թափանցում էին առաջապահ
դիրքերը և տեական ամբուլթյուններն ու շտապ
փորած, անընդհատ կրակե հեղեղի տակ գտնը-
վող խրամները:

Հազար ինն հարյուր տասն և յոթ թիվը
ապստամբության դրոշակն էր բարձրացնում:

3. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՔԱՄԻՆ

Հավատացնում եմ ձեզ, Ոչիլ-բե'կ, մի քա-
նի որից հետո ապստամբությունը Պետերբուր-
գում կձնչեն: Ճակատից շտապ կանչված են զոր-
քերը, նրանք միանգամ ընդմիշտ կվերջացնեն
դժգոհներին:

— Ձե՞ վոր, չի կարելի իսկապես հեղափո-
խություն համարել խառնաշփոթությունը,
վոր առաջացրել են հերթերում կանգնող խոհա-
քարուհիները:

— Ձեմ համարձակվում, ձերդ բարձրու-
թյուն, ձեզ հետ չհամաձայնել, բայց այնու-
ամենայնիվ մենք պիտի զգուշ լինենք:

— Յերեկ թուիչի-բաշին⁸) ինձ գեկուցեց
քարաբանակի դրությունը: Մենք բավական լավ

ենք զինված՝ դիմադրելու մեր թշնամիների
յենթադրվող արշավանքները:

— Ներեցե՛ք, ձերդ մեծություն, վոչ թե
յենթադրվող, այլ հույժ հավանական:

— Դուք հաճե՞լ եք լսել, այսպես կոչված,
մլադոբուխարյան հեղափոխական կուսակցու-
թյան գործունեյության մասին...

— Թողե՛ք, դատարակ բան է, Ոչիլ-բեկ. —
ընդհատեց նրան եմիրը, ձեռքը թափ տալով, —
ինչ կարող են նրանք ձեռնարկել իմ քաջ զորա-
բանակի դեմ... Ճիշտ է, մենք զինված ենք
բանակի դեմ¹⁰) և մեր թնդանոթները նոր
մուլտուկներով¹⁰) և մեր թնդանոթներն ան-
կոնստրուկցիայի չեն, բայց զինվորներն ան-
սահման նվիրված են ինձ և հենց առաջին հրա-
մանով կջնջեն ամեն մեկին, ով հանդգնու-
թյուն կունենա հազար տարով որհնված որեւորների
դեմ գնալ:

— Գաղտնի հաղորդադրերում տեղեկու-
թյուններ կան, վոր մլադոբուխարյանների շար-
վերում կան և ձերդ մեծության զինվորներից:

— Սո՛ւտ է, — զայրացած բացականչեց ե-
միրը: — Սուլայն, յեթե և այդպես է, յես
կհրամայեմ կախել դավաճաններին ըզիստա-
նում¹⁰), վոր այդ հրապարակով ամեն մի անց
ու դարձ անողի մատնությամբ զբաղվելու
ցանկությունը կորչի:

— Թող ավազը՝ որհնի ձերդ մեծությա-
նը. — ասաց Ոչիլ-բեկը, յերկու ձեռքը սրտին
դնելով:

— Ձեզ նման հավատարիմ ծառաներ ունե-

Նալով, Ոչիւ-բեկ, յես բոլորովին հանդիստ եմ:
Միայն իզուր դուք յերբեմն աղպես մտայլ եք
նայում իրերի վրա, Ոչիւ-բեկ: Յես ճանաչում
եմ ուս աղբը, ինչպես իմ սիրելի հնոջ մարմնի
վրա յեղած խալերը: Նա չի կարող դոյություն
ունենայ առանց թաղավորի: Պետերբուրգում
յեղածս ժամանակ յես բախտեալին ծանոթա-
ցա այդ յերկրի կյանքին... վոչ մի պարահան-
դես առանց ինձ չէր անցնում, Ոչիւ-բեկ,
չարունակեց եմիւր, քաղցր հիշողությունների
մեջ ընկղմվելով, — յես այն ժամանակ դեռ կա-
դետ եյի, պաժերի կորպուսում, թաղաժառանգ,
յերբ մեծ իշխանները և թաղավորի պալատա-
կանները պատիվ եյին համարում, իմ՝ իրենց
մոտ հյուր լինելը: Կանանցից, սիրելի Ոչիւ-
բեկ, ազատում չկար: Յեմ, թեև այդ յերկրի
որենքով բազմակնությունն արդելված ե...
— Ներեցեք ձերոյ մեծություն, ձեր խալա-
թը բացվել ե...

— Յես դոռանի սուրբ բառերը՝ չեյի խախ-
տում. «Ձեր կանայք ձեր արտն են, գնացեք ձեր
արտը, յերբ կցանկանաք»: Վնաս չունի, վոր
կանայք իմս չեյին...

Ավելորդ չամիչները փլավը չեն փչաց-
նի, ձերդ մեծություն, — ժպտաց Ոչիւ-բեկը:

Յերկու սայլ երար հանդիպելով նեղ փոք-
րիկ փողուցում, քաղաքից վերադարձող Չայնե
թի և Գյուլնուլի ճանապարհը կտրեցին: Գյուլ-

նուլը՝ Ոչիւ-բեկի հարեմի ծեր ծառայողը, սի-
րեց Չայնեթին՝ նրա հեղ բնավորության համար
և անթիվ քանակությամբ փոքրիկ ընծաների
համար, վոր առատությամբ շնորհում եր նրան
եմիւրի նախաարարի առաջին կինը:

Սակայն, ամենաշատը Գյուլնուլը սիրեց
Չայնեթին նրա՝ իր աղջկան նման լինելու հա-
մար, վորին վաղուց չէր, վոր կորցել եր:

Չայնեթին ել իր կողմից, մայրական
զգլանքի անծանոթ, կապվեց Գյուլնուլի հետ:
Յերկու կանաց մեջ ամուր բարեկամություն
ստեղծվեց:

Մեծ պահանջ զգալով իր գաղանիքները մե-
կին հաղորդելու, յերիտասարդ կինը պատմում
եր պառափին, ինչպես իր հարազատ մորը...

Այդպես ուրեմն, յերկու սայրեր համառու-
թյամբ չեյին կամենում բաժանվել, սայլա-
պաններն առաջարկում եյին միմյանց՝ թեքվել
մյուս կողմը և վորովհետև վոչ մեկը դրանցից
ցանկություն չուներ զիջելու, — մարդիկ, վոր
անցնում եյին այդ փողոցի տարբեր կողմերով,
կանգ առան:

Ոգտվելով ստեղծված ժամանակավոր
խառնաշփոթությունից, Գյուլնուլը կոացավ և
Չայնեթի ականջին շշնջաց:

— Ի սեր ալլահի, վոչ վորքի չասես, վորտեղ
ենք մենք յեղել: Յեթե վոչ՝ մեզ յերկուսիս ել
մահ ե սպանում:

— Հանդիստ յեղիր, Գյուլնուլ, — լավեց հա-
զիվ արտասանած պատասխանը: Այդպես ել

կկանգնեցին սայլերը մինչև այն ժամանակ, յերբ որովա ընթացքում հոգնած արեւը կգնար կարծատե հանգստի: Բայց համբերությունը կորցրած անցորդների ամբոխը միջամտեց սայլապանների վեճին: Կոկորդային հարայ-հրոցով, սուր սուլոցներով, ինքնադուրծ մտրակների հարվածներով, սայլերը վերջապես բաժանվեցին՝ ձոնջալով և իրենց փայտե մասերը ցնցելով:

Մի քանի րոպեից հետո այս այն կողմը ցրված աշխանեքն¹¹⁾ ու չայխանեքը¹²⁾ լցվեցին, այն՝ արեւելքում սովորական տեսարանին մասնակիցները չարախոսելով դրա մասին, ծաղկավոր փխլները լցնելով հոտավետ քյոք չայը¹³⁾, վոր հետո յեւ դառնան բրնձի, բամբակի և ծխախոտի գների, անսովոր լուրերի, վոր Ռուսաստանից եյին գալիս, թարմացնող հյուսիսային քամու հետ:

4. ԱՇՆԱՆ ԳԻՇԵՐԻՆ

Քաղաքից վերադառնալուց հետո, Չայնեթը կամեցավ իր մտքերի հետ միայնակ մնալ: Ամենից շատ Չայնեթը վախենում էր Ոչիլ-բեկի դալուց, վոր կիանգարեր իր միայնությունը, վորին նա հիմա այնպես փայլալուծ էր:

Չայնեթի մտքում կենդանանում էր այսօր վա նրա այցելությունը, մլադորուխարցիների՝ հեղափոխականների, դադտնի կուսակցության խմբերից մեկին:

«Յեթե Գյուլնուլը չլիներ, յես յերբեք չէյի վստահանալ այդ անել.—մտածեց Չայնեթը,—ո՛վ ինձ ցույց կտար խմբի տեղը: Գյուլնուլը լավ կլին ե, բարի, ի դուր չե, վոր յես նրան ասում եմ, թե նա փոխարինել ե իմ մորը»:

Նա շատ ե տանջվել, խեղճ Գյուլնուլը, նրա տղաներից մեկը կախաղանի վրա մեռավ, մյուսը անհետ կորավ, աղջիկը մեռավ...

Չայնեթն ինքն ել հիմա չեր կարող հիշել, թե ինչպես նա այդ պառավ կնոջ հետ սկսեց խոսել հեղափոխական շարժման մասին:

Միայն լուսաբացին հոգնած Ոչիլ-բեկը վերադարձավ հարեմ և ծանրությամբ ընկավ անկողնու վրա, խնդրեց Չայնեթին՝ իրեն անհնդոնու չամել: Չայնեթն ամբողջ ժամանակ ախանջ էր դնում՝ արդյոք նա չի՞ հրամայի, կանչել իր մոտ կանանցից մեկին: Պանդի սարսափից նա կարծեց, թե ինքն արդեն ձանձրացրել ե Ոչիլ-բեկին: Սակայն նրա խոմփոցը չուտով փարատեց Չայնեթի կասկածները:

«Բայց այդ ի՞նչ կարող ե նշանակել».—մտածեց Չայնեթը:

Առավոտը Գյուլնուլն անդադար չուրջը նայելով, մոտեցրեց աջ ափը Չայնեթի վարդագույն ախանջին և չչնջաց:

— Յերեկ եմիւրի մոտ գաղանի խորհրդակցություն կայացավ...

Վո՞րանցից եր խմանում ամեն ինչ նոր վա-
րած կավե յերեսով այդ պառավը, վոր կարծես
ներս եր քաշել որվա հնչյունները և գիշերվա
շուկները՝ Ձայնեթի համար անհայտ մնացած:

Արթնանալով Ոչիլ-բեկը կանչեց Ձայնե-
թին:

— Լավ քնեցի՞ր, սիրելիս, — գուրգուրե-
լով առաջ նա:

— Գոհություն ալլահին, յերեկ յես չառ հոգ-
նեցի... Ինչպես վոր մենք ժողովվեցինք ճա-
շից հետո, այնպես ել նստեցինք՝ մինչև առա-
վոս...

— Իսկ յես քեզ շատ սպասեցի:

— Ռուսաստանում ինչ վոր բուլշեվիկներ են
յերեվացել, դե մենք ել վճռում եյինք, թե ինչ
պիտի անենք: Մեկ ել տեսնես, մեր հեղափո-
խականներն ել շարժվեցին. վատ որինակը վա-
րակիչ է:

Ձայնեթը լուռ եր:

— Նրանք ասում են. — պիտի հողը խլել բե-
զերից և տալ գեթականներին, կանանց վրայից
վերցնել չաղրան, — շարունակեց Ոչիլ-բեկը:

— Ել ի՞նչ կուզենք. ինչպես չէ: Դե՞ռ տես-
նենք՝ ո՞վ կհաղթի: Մենք կկախենք ըմբոստնե-
րին առանց դատի. թող մեռածները կենդանի-
ներից հողը խլեն: Ասացեք, խնդրե՛մ, կանայք
պիտի չաղրաները հանեն: Սայտառակությո՞ւն:
Նրանք չգիտեն Մահմեդի սրբազան խոսքերը
«Ամուսինները կանանցից բարձր են, վորով-
հետև առաջիններին աստված դերադասել է

յերկրորդներից, կանայք պիտի հնազանդ՞ լի-
նին...»։ Իսկ Բուլշեվիկներն ասում են. — Լորչի
չաղրան:

Ոչիլ-բեկը հազաց. նա նայեց ժամացույց-
յին:

— Շուտով յես պիտի գնամ եմիքի՝ մոտ:
Ինձ մի սպասիր վաղ... Անիծված հեղափոխա-
խականներ, — դարձավ նա ինքն իր ընդհատած
մտքին, թող, դոնե, միայն մի կին փորձի չաղ-
րան վայր դնել:

Այդ դեպքի համար ել ղուրանում կա մի
իմաստուն խորհուրդ. «Յեթե կինը մի գարշելի
դործ անի, պահե՛ք նրան ձեր տներում՝ մինչև
նրա մահը...»

— Ինչո՞ւ յես դու շարունակ լուռ, — դար-
ձավ նրան Ոչիլ-բեկը:

— Յես այնքան յերջանիկ եմ, վոր տես-
նում եմ քեզ, Ոչիլ-բեկ, ամբողջ գիշեր քն
քնել, քո գալուն եյի սպասում:

— Դե՛հ, գնա՛, Ձայնեթ, սենյակդ, յես
չտապում եմ:

— Փախչե՛լ, փախչե՛լ: Յես պիտի վճռեմ
այդ անել: Յեվ վորքան շուտ, այնքան լավ:
Հեղափոխականները քաջ մարդիկ են: Նրանք
խոստացան ինձ ուզել: Յես կաշխատեմ
վերցնել իմ բոլոր թանգարժեք իրերը: Մենք
դրանք կվաճառենք և այդ գումարները գործ
կածենք ընդհանուր կարիքների համար: Բա՛րի
Գյուլնուլ, նա մնում է միայնակ: «Յես ծեր
եմ, ինձ քիչ է մնում ապրելու, ասում է նա, —

Թող յերիտասարդներն իրենց համար լավ
կյանք ստեղծեն... Նրանք խոստացան, հենց
առաջին հարմար ներկայացած առթիւն ոգնել
ինձ՝ փախչելու հարեմից.—անցնում եր Զայ-
նեթի մտքով: Չանձրացրել է ինձ այս կյան-
քը. ազատութիւն եմ ուզում: Յեթե միայն
նրանք խմանային, թե հիմա ինչ հարմար ժա-
մանակ է փախչելու. Ոչիւրեկը կվերադառնա
ուշ, բոլոր կանայք նստած են իրենց սենյակ-
ներում: Ա՛յ, ա՛յ, ա՛յ. ինչ հարմար ժամա-
նակ է, ինչ հարմար դեպք: Նրանք ինձ՝ ասա-
ցին: «Նայիր միայն լուսամուտին և յերբ
յերեք անգամ կնկատես գլանակին մոտեցվող
լուցկու բռնկվող լույսը, կնշանակե, ամեն
ինչ բարեհաջող է»:

Միայն մի քանի վայրկյան է տևում աղջա-
մուղջն այս յերկրում, վոր առատ է արեւով և
ծեծեքով: Յեւ աղամուղջից հետո, անմիջա-
պես, աչնան գիշերվա մութը չադրով պատում
է Բուխարայի եմիրի մայրաքաղաքը:

Զայնեթը չէր հեռանում լուսամուտից,
նրա առաջ ապակին հաճելի կերպով թարմաց-
նում եր կնոջ այրվող ճակատը:

Այս ի՞նչ է: Տեսողութան պատրա՞նք է,
թե իրավ. նա յերեք՝ միմյանց հետեից բռնկ-
վող լույս տեսավ:

Հուզված թռչնի նման թափառաց սիրտը և
Զայնեթին թվում եր, վոր նա սլանում է նրա
հետեից մի ինչվոր անդունդի մեջ:

— Գյուլնու՞ւլ, հազիվ կարողացա՞վ ար-
տասանել Զայնեթը — նրանք են...

— Բայց յես մոռացա մնաս բարե ասել
Գյուլնուլին. ձեռքերը թափահարեց Զայնե-
թը, դուրս դալով փողոց:

— Կնշանակե, դու դեռ կպատահես նրան—
ասաց աղատողներից մեկը—այդպիսի նշան կա:

Ոչիւրեկը խելակորույս հետ ու առաջ եր
անում:

Ամբողջ վոստիկանութիւնը վրաքի կը
կանդնեցնեմ: Ամբողջ Բուխարան տակն ու
վրա կանեմ, բայց Զայնեթին կդռնեմ:

Նղովյալ, դավաճան: Հարեմից փախ-
չե՞լ: Վո՞րտեղ է Գյուլնուլը.— կատաղում եր
նա:

— Նա պառկած է իր նախասենյակում.—
վճռեց, վերջապես, պատասխանել կանանցից
մեկը, չհամարձակվելով բարձրացնել աչքերը
բարկացած Ոչիւրեկի վրա:

— Վորտեղ է Զայնեթը,—գոռաց նա վեր-
մակի տակ դողացող պառավի վրա:—Իսկույն
պատասխանիր, յեթե վոչ դատաստանդ կարճ
կլինի:

— Հրամայեցեք գլխատել, վոչինչ չգե-
տեմ: Ամբողջ գիշեր յես դողացել եմ: Միթե
յես չեյի, վոր ձեզ հավատարմությամբ և ճշ-
տությամբ ծառայել եմ:

— Բոլորին կիսեղեմ, — չե՞ր դադարում Ոչիլ-բեկը:

Սոնված կանայք լուռ եյին:

— Ինչո՞ւ համար ես վշտանում, Ոչիլ-բեկ, — ասաց Ղուդրատխանը: Ինչպես վոր կար Ձայնեթը դեխկան, այնպես ել մնաց. — նրա ձայնի մեջ արհամարանք եր լսվում:

Իդուր կատաղած Ոչիլ-բեկը սուրհանդակներ եր ուղարկում միմյանց հետեից. նրանք բոլորը վերադառնում եյին մի պատասխանով.

— Կորել ե Ձայնեթը, կարծես ջուրն ե ընկել:

Վստքի հանած վոստիկանությունը նույն պես չե՞ր կարողանում դանել փախստականին:

Յոթ անգամ լուսինը փոխարինեց արեւին, իսկ Ձայնեթի հետքն ել չերևաց:

Արդյոք կարո՞ղ եր վոստիկանապետը յերբեմիցե ենթադրել, վոր բոլորովին կից եր իր վարչությանը, վոր ահ եր պաաճառում դեխկաններին և այնպես սիրելի յեր բեկերի սրտին, դանվում եր հեղափոխականների խմբերից մեկը:

Հենց այստեղ եր պահվել Ձայնեթն այն աշնան դիշերը, յերբ նա փախա՞վ Ոչիլ-բեկի հարեմից:

Չոր տախտակները, — ուղղակի կափե հատակի վրա — շատ անգամ եյին ստիպում Ձայնեթին հիշել փափուկ մահճի մասին, վոր նա կամավոր կերպով թողել եր՝ նոր կյանքի համար: Մի փոքրիկ, վաղուց չզգված բրդով լցրած ներքնակը, վոր բերել եյին բարեկամները, նա զիջեց ընկերոջը, վորին յերեք որ ու գիշեր տանջում եր տենդը:

— Զիշտ ասա, Ձայնեթ, չես ափոստում քո առավիա կյանքը, — հարցրեց նրա հեղափոխականներից մեկը:

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ, ընկեր Ֆեյզուլյա. — ձեռքերը թափահարեց նա: — Յեթե այդպես լինե՞ր, յես յերբեմիցե կփախչեյի՞՞ այնտեղից...

Գյուլնուլը շատ ե տեսլ ինձ, վոր դուք կավում եք նրա համար, վոր բոլոր մարդիկ լավ ապրեն...

— Վոչ բոլորը, — ընդհատեց նրան Ֆեյզուլյան. — դեխկանները: Իսկ ինչ վերաբերվում ե բեգերին, մենք նրանց համար չենք հոգում, նրանք բավականին ապրել են, ինչպես հաճել են:

— Յես վոչ մի յերջանիկ որ չեմ հիշում, — վրդովված շարունակեց Ձայնեթը, — յես մանկություն չեմ ունեցել: Իսկ հարեմի կյանքը, դա մի՞թե կյանք ե, յերբ միայն մտածում ես՝

ինչպես հաճոյանաս տիրող... խեղճ Գյուլ-
նուլ.— անսպասելի վերջացրեց նա:

— Նրա վորդին հիանալի ընկեր եր... Իգուլը
չեր, վոր հերոսի մահով մեռավ:

— Սական դուք զրույցով տարվեցիք,
բարեկամներ,— լսվեց անկյունից Ահմեդի ձայ-
նը, վոր խմբի ղեկավարն եր— Ժամանակ և
գործի գնալու:

— Բոլոր թռուցիկներն արդեն բաժանվում
են.— նկատեց Ֆեյզուլլան:

— Յեռ հիմա կգնամ Չայնեթի հետ տալա-
րան և ի դեպ՝ ցուց կտամ նրան աշխտեղ գնա-
լու կարճ ճանապարհը:

— Յեվ չմոռանաք զեղ վերցնել Ալիի հա-
մար, դողը խեղճին սաստիկ նեղութուն և տա-
լիս:

Յերկար չքաչեց Չայնեթի աշխատանքը
Բուխարայում՝ մի յերկու ամիս: Աշխատանքն
եղ թեթևներից չեր. մի որ աշխատիր՝ մի շա-
բաթ պահվիր:

Վոստրիկանությունն անհանդուստացած հե-
ղափոխականների գործունեյությամբ, վազ-
վղում եր բոլոր անկյունները և ծակ ու ծու-
կերը՝ հոռաբլով գտնել վոճրադործներին:

Չայնեթը թողեց Բուխարան, յերբ Ռե-
գիստանում, Բուխարայի եմիրի մայրաքա-
ղաքի գլխավոր հրապարակում, վոր տարած-
ված և կավե գորգով, սեվին տվին կախաղան-
ները՝ նոր զոհերով և տանջված սոսկալի չար-

չարանքներից, վորոնց առաջ մահը վոչինչ ե,
ճոճվում եյին հեղափոխականների դիակները:

Կախված եյին նույնպես— յերկյուղ տա-
լու համար— գլխատվածների դիակները, իսկ
նրանց գլխները վոչ թե դարձրած եյին դեպի
սրբադան Մեկկան, ինչպես պահանջում ե Մահ
մեդի որենքը— այլ նրանց, ազաւմների կող-
մից կիսակտցած աչքերն ուղղված եյին դեպի
միջնաբերդի դարպասը:

Աչնան արեւը դեռ չեր չորացրել մահացած
հեղափոխականների մայրերի և քույրերի ար-
տասուքը (յեվ կա՞ արգյոք աշխարհիս յերե-
սին ալղպիսի արեւ, վոր կարող ե այդ անել),
յերբ Չայնեթը յեկավ Ֆերհանա, վոր հպարտ
և իր բամբակով, մետաքսե գործված քներով:

Ֆերհանայումն ել յերկար չմնաց Չայնե-
թը:

Այստեղ լուր անցավ, վոր Բուխարա յե
յեկել առաջի պարտիզանական խումբը և Չայ-
նեթն չտապեց հետ դառնալ մայրաքաղաք:

— Ընկեր պետ.— դարձավ նա հրամանա-
տարին.— յես կամենում եմ մտնել կարմիր
բանակ և կովել բեկերի դեմ— դեխկանների
համար:

Պարտիզանների հրամանատարը, բազմա-
թիվ անգամ միրավորված սպիտակ գվարդիա-
կանների կովում և եսեռների ապստամբու-
թյունը ճամբովի և Յրասլավլի խոտվությու-
նը ճնշողը, հերոսներից հերոսը, վորի տակին
կովի Ժամանակ շատ ձիեր եյին սպանվել, վոր

խմել եր ամենախաղաղ Դոնի, ջրառատ Կու-
բանի միշտ կատաղած թերեքի ջրերը, մի
մարդ՝ կարմիր սատղը պաշտպանողական գույ-
նի սաղավարտի վրա, վորին կարծես վոչինչ
չէր. կարող չփոթեցնել, մի փոքր զարմացավ:

— Սա առաջին դեպքն է Արեւիկեւում,
երբ կինը կարմիր բանակի շարքերն է մըտ-
նում:

— Ի՞նչ ես կարծում, ընկեր կոմիտար:

Յեւ վատասխանի չսպասելով, հարցրեց
Ջայնեթին:

— Իսկ ձի հեծնել, դիտե՞ս:

— Յեւ ձի հեծնել դիտեմ և հրացան կրա-
կել, ընկեր հրամանատար:

— Չորրորդ հարյուրակը. — պահեստա-
պետ, առ սրան զինվորական զգեստ, — հրա-
մայեց հրամանատարը — ընկեր հարյուրապետ,
քննեք գիտությունները:

Անցավ մի տարի:

Ջայնեթը դարձավ հեծազորքի հիանալի
զինվոր, արտադիպազքի միջոցին մաքուր կրտ-
րում եր կալն այնպես, վոր թրի հետքն ան-
գամ չէր յերեւում, նույն ժամանակ նա բարձ-
րացնում եր գեանին դշած դրամը:

Պարտիզանական խմբի հրամանատարը
բացի վարպետներն թրին տիրապետելուց, մեծ
ուշադրություն եր դարձնում նաև հրացանա-
ձգության վրա. պատերազմի փորձը նրան
ցույց տվեց, վոր հեծելազորի զինվորները
նույնքան պիտի դիտենան հրացանի հետ վար-

վելը, վորքան՝ թրի հետ: Յեւ Ջայնեթը շատ
յերջանիկ եր, յերբ նա կարողացավ բոլոր
հինգ ծակոտիները նշանի վրա իր թուխ ձեռ-
քով ծածկել:

Մի քանի կարմիր բանակայիններ, վոր
դեռ բարձրից ելին նայում «կինարմատին».
հարգանք զգացին դեպի նա:

Շուտով Բուխարա եկավ բանվորներից
կազմած մի խումբ, վորոնք նույնպիսի վճռա-
կանությամբ ելին կանգնում քաղաքացիական
կովի ճակատում, ինչպես իրենց զազահաների
սուաջ: Մի ընկեր եկավ Մոսկվայից:

Ջայնեթն անցավ այդ խումբը և դեռ Բու-
խարայի արևի տակ շտաքացած, հերոսական
խումբն շտապ ուղարկվեց Որենբուրգի ճակա-
տը, վորտեղ կազակները, մոլորված իրենց
հրամանատարներով, ապստամբել էին:

Ծանր եր հետախուզի ծառայությունը,
բայց դրա համար ել մեծ եր նրա պատի-
վը. և առաջին գնդակը, և առաջին պարգևովը
նրան են սպասում:

Որենբուրգի այրած տափաստաններով ար-
շավում եր Ջայնեթը — փառավոր գործիքի
ձիավոր հետախուզողը:

Կազակները վայր դրեցին պենքերը, յերբ
հասկացան, թե ո՞վ նրանց թշնամին և բա-
րեկամը: Միացան որենբուրգցիք կարմիր բա-

նակին, համողվելով, վոր հրամատարներն իրենց խաբել են:

Բայց կարո՞ղ եյին հանգստանալ կարմիրները, յերբ Զելյարինսկի տակ անկարգություն եյին անում չեխո-սլովակաների լեզիոնները:

Յեվ առաջին անգամ Զայնեթը տեսավ ոտարյեբկրացի զորքեր: Զորախումբը ջարդեց չեխո-սլովակաների գնդերը:

Կոլչակովեցիների մնացորդները փախան, կարմիր բանակը ջարդեց նրանց: Զայնեթը վերադարձավ Ուզրեկստան՝ հիգյեբորդ գնդի ձիավոր հետախուզողների հրամանատարի պաշտոնով:

6. ՄԵԿԸ ՄԵՐ ՅԵՐԿՈՒՍԻՑ ՊԵՏՔ Ե ԿՈՐԶԻ

Յերեք տարի անցավ այն ժամանակից, վոր Զայնեթը փոխեց հարազատ Բուխարայի տաք ավազները Սիբիրի սառցե դաշտերի հետ:

Յեվ հիմա, նստած իր վաղեմի գաղանի աշխատանքի ընկերոջ՝ Ահմեդի հետ, փոքրիկ չախանաններից մեկում, դվարթ իր հիշողություններն եր պտտում շատ ճակատների մասին, ուր ուղարկում եր նրան, խմբի հետ միասին, հեղափոխության հաղթող ձեռքը:

— Մենք հաճախ շատ դժվար կացության մեջ եյինք լինում, թանդագին Ահմեդ: Հիշում եմ Զելյարինսկի հետևը մեզ դեպի գետն եյին սղմել չեխո-սլովակաները, մթերքի սայլերը

մեզանից կտրված եյին, կարծում եյինք՝ մեր վերջը հասել ե: Խմբի մի մասը գետն անցավ, առանց մի հրացան կրակելու: Մենք վճռեցինք՝ հակառակորդը հեռու յե:

Իսկ չեխո-սլովակները նստած խրամատներում, այնպես իշլավ ծածկվել եյին՝ կարծես հարյուր վերստի վրա վոչ մի կենդանի չունչ չկար, ուր մնաց թե խրամատներ: Անցավ, կնշանակի մեր զորախմբի մի մասը գնում ե առաջ, կարծես վոչինչ բան չկա: Զգիտես փորտեղից դուրս յեկավ հակառակորդը: Այնպիսի կատաղած կրակ բացեց, վոր դիմանալ չեր կարելի, հետ նահանջել՝ տեղ չկար՝ հետևը գետն եր: Նայեց շուրջը մեր հրամանատարը, տեսնում ե— յերկու զորաթևն ել առնիծած չեխո-սլովակները պաշարել են: Վերցրեց հեռադիտակը, նայեց թիկունքը, մեր մըթերքի սայլերն ել եյին խլել անիծածները: Մեր բանը կնշանակի բուրդ եր: Վո՛չ, վոչ ձա՛խ, վոչ հետ: Յեվ հանկարծ դուռաց:

— Առա՛ջ, ընկերներ՛ր: Ուռա՛: Կենդանի անձնատուր չլինենք:

Գնացին մեր տղաները այդ ուռային: Կրակելու ժամանակ չեր, փամփուշտ ել— մեկի մոտ մի կապ եր, մի քանիսի՝ յերկու, վոչ ավել: Սվիններով կոպենք: Հրացանների կոթերով սկսեցին խփել: Մեր ձիավոր հետախուզողները խփեցին նրանց զորաթևից: Նրանք ել սկսեցին աղաղակել:

— Հեծելագո՛րքը:

— Լա՛վ, հեծելազորք եր, մեր խմբում մի քանի ձիավոր հազիվ լիներ: Պարզ ե՛ ասը չատ ե, քան մահը: Դեհ, մենք ել չեխոսլովաներին, ի հարկե, ջարդեցինք:

— Հասկանալի յե, կորցնելու բան չկար: Ընտրությունը մեծ չեր, — նկատեց Ահմեդը:

— Կամ գնդակը, կամ ողակը. — պատասխանեց Չալնեթը: — Իսկ ձեզ մոտ մե՞ծ փոփոխություններ կան, Ահմեդ:

— Ինքզ կաեսնես, Չալնեթ: Կարելի՞ յե արդյոք համեմատել այն, ինչ լսել ես՝ նրա հետ, ինչ տեսնում ես սեփական աչքերովդ, — որինակ բերեց նա առածը:

— Շատ լավ ե. եմիրին ինդրել են նոր բնակավայր գնալ, — ժպտաց Չալնեթը:

— Ինչ տակ կուզի: Միայն մերոնցից չատերը զուր տեղը կորան:

— Պատմիր իձ, Ահմե՛դ, այդ ինչպե՞ս յե դավ:

— Լա՛վ, յեթե չես չտապում:

— Այսօր առավոտյան եմ փոխվել հերթապահությունից և հիմա ազատ եմ:

— Բարի: Եմիրը վճռելով պաշտպանվել մերոնց դեմ, խոստացավ իրեն զինվորներին ամենայն բարիք՝ և երկրային, և յերկնային. «Միայն թե անհավատ բուլշեիկներին ջարդեք, — բոլորը ձերը կլինի: Թալանե՛ք, մորթե՛ք, զվարճացե՛ք դժամուր կանանց հետ: Միայն քչեցեք բուլշեիկներին. — ապում եր եմիրը — և իմ զանձարանը բաց կլինի ձեր առաջ»:

— Նա, իհարկե, զինվորներն նախապես խմացրել եր. այնքան եյին նրանք խմել, վոր հազիվ եյին կանգնում վոտքի վրա:

Կռիվը նշանակված եր առավոտը:

Մերոնք Կազանի յերկաթուղու ծառայողներն եյին...

Մեր ընկեր յերկաթուղային ծառայողները նույնպես քնած չեյին. դուրս բերեցին գնդացիները, մոտեցրին թնդանոթները և սպասում երն. —

Դե՛հ, սկսիր, եմիր:

Հարձակվող զինվորների միակ զենքը — դանակներ եյին, իրենց հին թնդանոթները և հրացանները, վորոնցով կարելի յեր միայն ձկներին խլացնել, նրանք թողել եյին՝ չգիտես ինչո՞ւ, թիկունքում:

Յեվ այդպես ել գնացին՝ դանակներն առամներով բռնած:

Նայեցին մերոնք հարձակվողներին և խղճացին զինվորներին, Հասկացան, վոր եմիրը հարբեցրել ե նրանց, յեթե վոչ՝ ո՞վ լուրջ ժամանակ դանակներով կգնար գնդացիների, թնդանոթների և յերեք գծանիների դեմ:

— Պետք ե նրանց մոտ պատգամավորներ ուղարկել, — թող անձնատուր լինեն — վճռեց հրամանատարը: Ինչո՞ւ իզուր արյուն թափվի:

— Այդպես ել արինք: Միայն՝ ուղարկվածներից վոչ վոր չվերադարձավ. բոլորին մորթեցին և սկսեցին հարձակումը:

Մերոնք սկսեցին կրակել և բոլորին սպանեցին: Ինչ արած: Պատերազմ է:

— Իսկ եմի՞րը:

— Հենց վոր նա իմացավ, վոր ել վոչ մի հույս չկա, — փախավ:

— Միայնակ:

— Վոչ, վերցրեց իր հետ կանանցից ամենալավին և... հայդա, գնաց Աղվանատան: Ինձ ասացին, վոր նա ճանապարհին, մինչև օսհման հասնելը, մի քանի անգամ փոխել է իր ձին:

— Չգիտե՞ս, Ահմեդ, ի՞նչ եղավ Ուլիբեկը:

— Ինչպես չգիտեմ. Նա գնացել է հեռավոր դժբաղանքներից մեկը, հավաքել է բազմաչների և հարձակվում է մեր սահմանապահ զորամասերի վրա:

Չայնեթի յերեսը ծամածուլեց:

— Նրան ել կհասենք:

— Իհարկե, ի՞նչ են բազմաչները: ¹⁴⁾ — մի բուռը խաբված մարդիկ: Ի՞նչ ընդհանուր բան ունեն նրանք Ուլիբեկի և նրա նամանների հետ: Միայն բեգերին է ձեռնատու եմիրի իշխանությունը: Տես ինչեր են արել բոլշևիկներն այս կարճ ժամանակամիջոցում: Շատ նոթառուներ են անցկացրել ուսումնարաններ են բացել, վորտեղ մուլաները յերեխաների գլուխը Ղուրանով և մյուս գերիմաստություններով չեն լցնի... Բամբակ մաքրելու համար նոր գործարաններ են կառուցում, իսկ հները ձևավո-

խում են... Դեռ սկիզբն է, Չայնեթ, իսկ հետո ի՞նչ կլինի, — և ուրախության կայծը փայլեց խոսողի աչքերում: Մի մոռանալ, վոր կոմիզդեո վերջացած չէ, վոր հեռավոր դժբաղանքում դորժում են բազմաչները, տգետ մուլաների հետ միացած, վոր դեռ յերազում են եմիրի վերադարձի մասին:

— Միենույն է, այդ բանին նրանք յերբեք չեն արժանանա. — բացական Չայնեթը:

— Իհարկե, չեն հասնի: Մենք պիտի լուսավորենք մեր խավար ժողովրդին, վորին եմիրը և կառավարող չների վոհմակը դիտավորյալ կերպով խավարի մեջ եյին պահում: Տե՛սել ես արդյոք մի գիրք, վոր տպված լինի եմիրի ժամանակ: Իսկ հիմա տասնյակ հազար գրքեր են տարածում ժողովրդի ամենախիտ բնակության վայրերը:

— Դու իրավացի յես, Ահմեդ:

— Արդյոք, մեր կանանցից շատե՞րն են հանել իրենց փարանջեն: Մի՞թե մինչև հիմա խայտառակություն չ իհամարվում բաց յերեսով փողոց դուրս գալը:

— Ճիշտ է, ճիշտ, Ահմեդ, բոլորը միանգամից չի կարելի: Յես համոզված եմ, վոր կդա այնուամենայնիվ մի ուր, յերբ փարանջով յերեւալն ամոթ կլինի...

— Վողջ լինիս, Ահմեդ: Իմ տուն գնալու ժամանակն է:

— Յտեսություն, Չայնեթ:

Մի քանի քայլ անցնելով, Ահմեդը վերադարձավ.

Հսօ՛ւ ես, մեր Ֆայզուլլան, ինչ քաջն ե: Բոլոր դեխլանները նրա կողմն են: Ասում են— պետք չէ մեզ եմիրը, թող մեր յեղբայրներին իսկ լինի մեր առաջնորդը:

— Վոչինչ եր, դարձավ ամեն ինչ,— պատասխանեց Չայնեթը:

Դժվար է ասել, թե Չայնեթի ուղարկած նամակը ինչ միջոցով հասավ Ոչիլ—բեկին:

— Ուղածը տես անիծածի,— կատաղեց Ոչիլ—բեկը, յերբ կարգաց Չայնեթի իրեն ուղղած տողերը:—

«Արի, միասին աշխատենք սովետական իշխանության համար, թող քո գործը, Ոչիլ—բեկ, զնա իմ ճանապարհով»— գրում եր նա:

Ոչիլ—բեկը կարգաց, մի անգամ, յերկու անգամ, և նրա ճակատի յերակն ամեն անգամ կապտում եր, յերբ նա հասնում ըն այդ տողերին:

Ոչիլ—բեկը վոչինչ չպատասխանեց Չայնեթին...

— Կամ յես կկորչեմ նրա ձեռքից, կամ նա՝ իմ: Բայց, յերբե՛ք, յերբեք յես չեմ զնա նրա ուղիով,— հաստատ վճռեց Չայնեթը:

—

Անապատի դեղին գորգը մեկուսացած ղչլաղներով, բամաչների անխնդում ապաստանը դարձավ: Այդ խելացնոր ավադակներին

խմբերը փախչում էին Բուխարայում հայտարարված սովետական իշխանությունից և վոչնչացնում էին ճանապարհին պատահած ամեն ինչ: Կործանված կայարանի շենքերը, չարությամբ քանդած ու թափթփված յերկաթադժերն առաջացող ավազների մեջ, յերկաթադժի և սահմանադժի ծառայողների դիակները ցույց էին տալիս բասմաչների անցած ճանապարհը:

Բասմաչների մի մասն իր անգործությունը զգալով, անձնատուր յեղավ, իսկ մյուսը՝ զնաց հեռու անապատ:

Մի փոքրիկ ղչլաղի մոտ տեղավորվել եր Ոչիլ—բեկի գորախումբը: Փոքրիկ կաթսաները զրնգացնելով, բամաչները ճաչ էին պատրաստում փոքրիկ խարույկների վրա: Վոչ հեռու՝ շները կպել էին նոր քեռթած դառան մորթուն և աղահությամբ պատառոտում էին սուր, սոված ատամներով: Արյան հեռ խառնված թուրք թափում եր նրանց՝ քիչ առաջ չոր յեղուններից՝ տաք ավաղի վրա:

Անապատի այդ փոքրիկ կտորի վրա մարդիկ կորած էին և թվում էին դատապարտված:

— Իսմայի՛յ, դարձավ Ոչիլ—բեկը բասմաչներից մեկին, վոր սրբելով ճարպոտ բերանն իր դեռ խայտաբղետ խալաթի փեշով, ուղեվորվում եր դեպի անապատի փոքրիկ վրանը:

— Հի՞շում ես, յես խոսք եմ տվել քեզ,

պատմելու Ստադիի—իմ սիրելի բանաստեղծը՝
հետ պատահած մի դեպքի մասին: Նրա գրքե-
րից, վոր կոչվում է «Գյուլստան», վոր պարս-
կերեն նշանակում է «վարդերի բուրաստան»,
յես յերբեք չեմ բաժանվում:

— Ինչպես չեմ հիշում:

— Դե՛հ, ուրեմն, լսիր այդ հիանալի
պատմությունը: Մի անգամ, մանուկ հասա-
կում, Ստադիին հոր հետ դնաց մի հանդեսի:
Յերեխան վոր յերբեք չեր տեսել այդքան
բազմություն, կորավ ամբոխի մեջ: Մեծ ահի
և շփոթության մեջ նա սկսեց կանչել հորը:
Հայրը գտավ նրան և բարկանալով ասաց:
«Քանի անգամ ասացի, վոր դու իմ փեշից
բռնես:» Յերեխայի համար դժվար է մենակ
դնալ անծանոթ ճանապարհով: Նույնը, յես եմ
մտածում մեր ժողովրդի մասին. նա կարող է
մոլրվել, կորչել, յեթե զրկվի իր հորից—ե-
միտից: Ի՞նչ կասես դու դրան, Իսմայիլ:

— Դուք իրավացի յեք, ձեր ուղածի
չափ, Ոչիլ—բեկ... Սակայն մինչև յե՞րբ
թափառենք այս ավազներում, վոր մի տեղից
ոգնության հույս չկա: Պարենի պաշարն եւ
վերջանալու վրա յե:

— Ուրեմն դու դժգոհ ես. գոռաց Ոչիլ—
բեկը, բայց նրա ձայնի մեջ վաղեմի պողպա-
տե հնչյունը չկար:

— Դայլ մի լինիր, բայց վոչխար ել մի
լինիր, վոր դայլերը քեզ չուտեն: Դուք

ինքներդ եք այդ խոսքերը հաճախ կրկնել.—
նկատեց Իսմայիլը:

— Իսկ հիմա յես ասում եմ՝ յեղիր դայլ և
միայն դայլ,— տեղից վերկացավ Ոչիլ—բեկը,
բռնեց ինքները սեղմելով:— Ի՞նչ դրության են
մեր փամփուշտները:

— Կգա ժամանակ, վոր բացի ատամներից՝
վոչինչ չի լինի:

— Իսկ դա, մի՞թե քիչ է: Մի՞թե դու չես
կարող անիծած դյավուրների կոկորդը կրծես:

— Յես իմ մասին վոչինչ չեմ ասի, Ոչիլ—
բեկ: Մեր զինվորները հոգնել են...

Նրանք վաղուց կին չեն տեսել... նրանք
ասում են, վոր...

— Թող ամեն մի զժգոհող անձամբ հայտ-
նի ինձ այդ մասին,— տաքացավ Ոչիլ—բեկը:
Իսմայիլը լուռ եր:

— Հիշեցրու նրանց Ղորանի խոսքերը
«Չորս սրբազան ամիսներ անցնելուց հետո,
սպանեք անհավատներին, վորտեղ պատահեք,
կտրեք նրանց ճանապարհը, գերի վերցրեք
նրանց, մինչև բոլորը չփախչեն:»

Որհնվի ալլահը և Մահմեդը՝ նրա մարդա-
բեն—կամաց արտասանեց Իսմայիլը:

— Լսի՛ր,— շարունակեց Ոչիլ—բեկը,—
յես գաղտնի տեղեկություններ ունեմ, վոր
բուլչիկները պատրաստվում են հարձակվել
մեզ վրա: Գիշերը մարդիկ հավաքիր և նրանց
հետ զնա ու դարան մտիր:

Այն ձևովոր գնդի հրամանատարը, վորտեղ Չայնեթը հետախուզողների պետն էր, հրաման ստացավ անմիջապես պարզել բամազների խմբերի դասավորումը, վոր հետո ընդհանուր հարձակում գործելով, ջախջախեն ախույնին:

Գնդի հրամանատարը ձեռքերի մեջ պտտեց սուրհանդակի զորամասի շտաբից բերած ծրարը, վորի վրա գրած էր «ալլյուր» բառը, վոր նշանակում էր թղթի շուրթափուլի հասցնելու կարիքը, իսկ այդ բառի դեմ՝ յերեք խաչ. իսկույն հեռախոսով կանչեց Չայնեթին և հրամայեց մուլթն ընկնելուն պես գնալ հետախուզելու: Վորովհետև ամբողջ զորախումբը ցանկություն հայտնեց մասնակցելու այդ գործին՝ կարմիր բանակայինները վիճակ ողջեցին. դրա հետևանքը այն յեղավ, վոր Չայնեթը յերկու հետախուզների հետ դուրս յեկավ դեպի բամազների բռնած դշաղների կողմը:

Վոչխարի դմակի նման լուսինը մերթ ծածկվում էր, մերթ յերևում մուգ յերկնքի վրա, վորի վրայով անընդհատ լողում էյին, կարծես մեկի կողմից քշվող, անկանոն ամպերի հոտերը:

Դեխկանների աղատ հանրապետությունից փչող քամին հասցնում էր զինվորներին նոր ծնունդ առած առվակների ուրախ կարկաչը, վոչխարի մսի հոտը միշտ բաց աշխանանքի

դռներին, ծաղող ծառերի մետաքսի չշուկը, յերկար կանգնած մնացած ձիերի խրխինջը:

Հետո այդ բոլոր հնչյունները, հոտն ու չշուկները հեռացան և մնաց միայն յուրահատուկ դոփյունը փեց դույզ ամուր քշվող պայտերի, — վոչ, այդ դոփյուն չեր, այլ մի ռոտրոտի խշշոց արևով չափազանց այրած ավազի, վոր արագ սառել էր մուլթն ընկնելուն պես, միայն ալդխշոցն էր յովում թշնամու նման զաղտնի մոտեցող գիշերվա մեջ:

— Գնում ենք, գնում, վոչ մի կերպ չենք կարողանում տեղ հասնել, — նկատեց հետախույզներից մեկը:

— Կարելիյե փախել են ուրիշ տեղ. — հարցրեց յեկրորդը:

— Կամաց, տղանե՛ր, սիրտս դուշակում է, վոր նրանք այտուեղ մոտ են, — նախազգուշացրեց Չայնեթը:

Նրա առաջ գնացող ձին հանկարծ կանգնեց:

Հետախույզները նետվեցին հանելու հրացանները:

Դրանից հետո դուրս յեկող լուսինը պարզեց կանգնելու ստույգ պատճառը՝ ճանապարհը դեպի սարն էր բարձրանում:

Յերբեմն խոսքեր փոխանկելով, գինվերները շարունակում էյին իրենց ճանապարհը:

Հանկարծ նրանց խոսակցությունն ընդհատեց մի հրացանի ձայն: Մոտակա սարերի ձեռքերում դեռ չեր դադարել մի քանի անգամ

կրկնվող արձագանքը, վոր առաջին կրակոցից հետո լսվեց յեկրորդը, յերրորդը և շուտով կարծես ամբողջ ողը լցվեց հրաշանաձգության ձայներով:

Ձեռքերի մեջ սեղմած հրացանը, կարծես չէր ուզում նրանից բաժանվել, ընկալ մեջքի վրա հետախույզներից մեկը: Նրա մարմինը դրոշմվելով լեռան չափիղով, ընկալ սուր քաբերի լայն ատամների վրա, վորոնք մտան փափուկ մարմնի մեջ, կարծես կամենալով թեթեւացնել վայրի գազանների ապագա աշխատանքը:

Չայնեթը կրակեց. կրակեց և մյուս հետախույզը:

Յերբ դատարկ փամփուշտների կապերը վողբալի զրնգոցով մեկը մյուսի հետևից դեպան քարերին, — Չայնեթը ձեռը դրեց նազանին և դեռ բնից չհանած այն, ձիու վտռերը ծալվեցին և Չայնեթն ընկավ:

Մի վարկյանից հետո նա վողնաչարի մեջ սարսափելի ցավ զգաց և գիտակցությունը կորցրեց:

8. ՄԱՀԻՅ ՍԱՐՍԱՓԵԼԻ

Ավելի լավ կլիներ, վոր Չայնեթն ուշքի չգար. սոսկալի տանջանքներ ելին սպասում դժբախտ կնոջը, վոր իր հարեմի անհոգ կյանքը փոխեց կովի ծանրության հետ:

Նրա ուղեղով անցավ փախուստի հիշողու-

թյունները և ընկերներից մեկի ասած խոսքերը, վոր պատասխան եր իր խոսքին.

— Յես մոռացա Գյուլնուլին մնաս բարեվառելու:

— Կնշանակի, վոր դու դեռ կպատահես նրան. — ասաց ընկերն այն ժամանակ...

«Գյուլնուլ, Գյուլնուլ... գուրգուրանքով անցնում եր այդ կարճ խոսքը Չայնեթի մոտից: — Գոնե մի անգամ յերեսդ տեսնելի և մեռնելի... այլևս ինձ բան պետք չեր:

Չայնեթը նորից ուշաթափվեց:

Յերբ նրա գիտակցությունը տեղն յեկավ. Նա կամեցավ վերկենալ: Չափազանց ույժ դործ դնելով, ուշք չդարձնելով վիրավոր վողնաչարի աննկարագրելի ցավին, Չայնեթն արմունկները հենելով ծակող ավազին, վեր կացավ...

Յեվ նորից ընկավ...

Յեթե հիմա սարսափելի փոթորիկ բարձրանար, իր հետ թուցներ վրանը, վոր հագիվ ելին պահում փայտե մեխերը, հենց այն վրանը, վորտեղ բասմաչները գցել ելին Չայնեթի անդգա մարմինը, յեթե ուժեղացած թափով յեկող չոր անապատի դեղնած ավազները կենդանի թաղելին նրան, Չայնեթն այդ կհամարեր ամենամեծ յերջանկությունը:

Տաք քամի յեր փչում չիկացած անապատից, շարժում եր վրանը, տղզում եր մոծակի նման: Քամին լալիս եր անտեր յերեխայի

նման. — այդպես վնդում են շնագայլերը — վու-
նում եր՝ ինչպես բորենի:

Սակայն վրանը կանգնած եր իր տեղում:
Ամենափոքրիկ ավազի հատիկները մտնում էյին
Չայնեթի փռված մարմնի ամեն ծակոտիկնե-
րի մեջ, չլսված պատիժ ստեղծելով նրա հա-
մար:

Վրանի վարագույրը բանալով, ներս մտավ
Ոչիլ-բեկը:

Նա հարբած եր և հազիվ եր կանգնում
վտռերի վրա:

— Գյուլնու՛ւլ. — ձայն տվեց նա: — Վո՞րտեղ
ես չքայել, պառավ...

— Հազիվ զսպելով վրդովմունքը, ներս
վազեց Գյուլնուլը, լսելով կանչողի ձայնը:

— Նայիր սրան, ինչպես քո հարազատ
աղջկան, — դարձավ Ոչիլ-բեկը դողացող կնոջը:
Բարեհաճիր սրան մի փոքր բժշկել, հետո մենք
կտեսնենք: Հա, հա՛, հասկացա՞ր, Գյուլնուլ:
Մի փոքր բժշկել, — և նորից նրա հարազուշակ
ծիծաղը շարժեց փոքրիկ վրանը:

Չայնեթի բաց աչքերը յերկար և ուշադրու-
թյամբ նայում էյին իր գլխավերելքը նստած
կնոջը:

Դժբախտն աշխատում եր պատկերացնել ի-
րեն՝ արթո՞ւն է, թե՞ յերագում:

Յեւ միայն այն ժամանակ, յերբ պառավը
ձեռքը սիրով քսեց Չայնեթի յերեսին, վերջինս
չչնջաց.

— Գյուլնուլ...

Չայնեթի — արյունոտ և ավազի մեջ չորա-
ցած չրթունքներն ուղղվեցին դեպի պառավի
ցամաքած ձեռքը...

Յերբ Ոչիլ-բեկը վորոչեց, վոր Չայնեթն
արդեն ուշքի յե յեկել և կարող է առանց ուրի-
շի պնդության տեղից շարժվել, կամեցավ
տանջանքներով խլել նրանից իրեն անհրաժեշտ
տեղեկությունները:

— Ասա, վո՞րտեղ են կանգնած ձեր սահ-
մանապահ խմբերը: Ճշտությամբ ցույց տուր
նրանց տեղը և մարդկանց թիվը՝ ամեն մի պա-
հակատեղում: Միևնույն ե — յես այդ բոլորը
գիտեմ, միայն ուզում եմ քեզ ստուգել:

Չայնեթը չեր պատասխանում:

— Դե՛հ, յես լսում եմ, — սպառնալով ա-
սաց Ոչիլ-բեկը: Լռության ամեն մի վարկյա-
նը կրերի տանջանքի ժամեր:

— Յես վոչինչ չգիտեմ:

— Չգիտես... Իսմայիլ, կրունկներն այ-
րիր:

Այրած մսի հոտը խառնվեց անասլատի տաք
ողին:

— Յես, սպասում եմ քո պաշտասխանին:
Վո՞րտեղ են պահակատեղերը. մարդկանց
թի՞վը:

— Չեմ ասի. — Յեւ Չայնեթը կծեց չրթունք-
ները՝ սոսկալի ցավը մեղմելու համար:

— Նոսվյալ բուլչեիկուհի: Յես քեզ կստի-
պե՛մ խոսել...

Փոքր ինչ հեռու կանգնած Գյուլնուլը լուռ հետեւում էր կատարվող իրողութեանը: Արտասուքն անուշտ թափվում է նրա մաշված յերեսով...

Արժե՞ արդյոք թվել այն տանջանքները, վոր կրեց Չայնեթը բասմաչների մոտ գերի յեղած ժամանակ:

Քանի—անգամ կանխում եյին նրան վրտքերից. յերբ արյունը տալիս էր գլուխը և նա ծանրանում էր, կարծես կապարով լցված, համրանում եյին յերակները, սիրտը կանգ էր առնում և թվում էր, վոր ահա նա կբաժանվի կյանքի վերջին մնացորդներից:

Ինչպե՞ս յերագում էր Չայնեթը մահվան մասին—այնպես քնքուշ, բոլոր տանջանքներից ազատող էր յերեւում մահը գիշերը, յերբ հոգնած կոպերն իզուր աշխատում եյին փակել ներս ընկած աչքերը:

— Գյուլնո՛ւլ, սիրելի Գյուլնո՛ւլ, — դուրս էր թռչում նրա բորբոքված շրթունքներից: Դու իմ մորից թանգ ես, վերջ տուր իմ տանջանքներին, մեռցրու ինձ, և ալլահը կոգնի քեզ:

Ուշտ չունենալով այդ սարսափելի խոսքերը յսելու, Գյուլնուլը դուրս էր գալիս վրանից: Տաք քամին, սակայն, հանգստություն չէր բերում նրան և պառավը նորից վերադառնում էր Չայնեթի մոտ, վոր անուշտ ընկած էր ավազի վրա:

Նոր—նոր տանջանքների էր յենթարկում խելացնորը Ոչիլ—բեկն անբախտ կնոջը:

Ձգալով իր անխուսափելի կործանումը, այդ բասմաչների խմբի առաջնորդը, վողջ չարությունը թափում էր Չայնեթի վրա, վոր նրա յերևակայութեան մեջ ատելի բոյչեկիկների ներկայացուցիչն էր, վոր գրկել եյին Ոչիլ—բեկին և նմաններին անհոգ կյանքից...

Գուրդուրելով կնոջը, մի անգամ Պուլ—բատխանը խորհուրդ տվեց.

— Թաղիր նրան հողի մեջ, հավատացնում եմ քեզ՝ կխոսի: Հիշում եմ այդպես էր անում դեռ իմ հայրը, յերբ կամենում էր մեղավոր ծառաներից իմանալ նրանց ամենամեծ գաղտնիքները:

Չայնեթին թաղեցին մինչև պարանոցը գետնի մեջ... գցում եյին սառցատուն...

Վռչինչ չոգնեց.

Կանգնեցրին հրադանների առաջ: Ոչիլ—բեկը հրամայեց բասմաչներին.

— Մեկ, յերկու, յերեք:

Հրացան չարձակեցին, բայց ջղերի ստատիկ լարված լինելուց Չայնեթն ուշաթափվեց և յերկաջր ժամանակ չէր կարողանում ուշքի գալ...

—

Անապատից առաջանում եյին ավազները, Բուխարայից կարմիր հեծելազորքը:

— Հասկանո՞ւմ եք, թանգագին րնկեո,— սաղավարտը հանելով, ծաղկավոր թաշկինափով ճակատի թեթև քրտինքը սրբելով, ասաց

հեծելազորքի զնդի հրամանատարն՝ իր կողքին
գնացող ձիավորին. — բասմաչները շարժման
արմատները շատ խոր չեն, յես կասե՞յի՝ այդ
շարժման համար վոչ մի հիմնավոր պատճառ
չկա: Իրանը-դեխականների փոքրիկ խմբակներ
են, վորոնց գլխավորում են զժգոհ բեղերը...
Մեր կողմն անցնող բասմաչների թիվն որեցոր
ավելանում է: Մենք նրանց արձակում ենք
խաղաղությամբ՝ — գնացե՛ք ձեր հարազատ
ղչլաղները, աշխատե՛ք: Այնտեղ նրանք իրենց
աչքերով կտեսնեն և կհամոզվեն, թե ինչ կարո-
ղացանք մենք անել՝ այսքան տարվա շինարա-
րության ժամանակ...

— Այդպես է, այդպես: Իմ կարծիքով՝ նոր
առվակների կարկաչը, այդ՝ միջնախան
յերկրի արյունը, ավելի համոզիչ են քան...

— Իսկ կամենում եք ասել, քան շատ ճար-
տասանների ճառերը:

Յերկուսն ել միաբերան ծիծաղեցին:

Մեկը մյուսի հետևից անձնատուր եյին ի-
նումբասմաչներն ի փառս հաղթողների: Պա-
տառտոված, սոված մարդկանց, հարացած ի-
րենց յերեկվա պետերի վրա, ուղարկում եյին
հարազատ վայրերը:

Չայնեթը, վոր պառկած եր ուշքը կորց-
րած հերթական տանջանքներից հետո, յերկար
ժամանակ չեր կարողանում հավատալ կատար
վածին:

Միայն այն ժամանակ, յերբ նա տեսավ
զենքերը դրած բասմաչներին, վոր անկարգ



կոնտիտ—շտրոտյ (61

• Իգթ շտրոտի—տո՞՞՞՞՞՞՞ (62

• զտմոմդթ—տոտոմոմո (63

• զտմոմոմ—տոտոմոմ (64

: միտմոմոմ մսիտմոմ

վժտոմոմոմոմ վմվյգ վմոմոմոմոմ—զտոմոմոմ (65

: զտոմոմ զտիտոմոմ—յտոմոմ (66

: մմտոմոմոմոմ ռտոմոմոմ—վժտոմ—վժտոմ (67

• վեոմոմոմ—զտիտոմ (68

• ոմոմոմ—յտոմոմ (69

: Նոմոմ—նոմոմ (70

: զնտոմոմոմ կվոմոմ մսիտիտոմ—վնտոմ (71

: ռտոմոմ մոմոմոմ—զտոմ

• մսնի զտոմոմ—յտոմոմ զտոմոմոմ տոմ—ոմ (72

: մմզոմոմոմոմոմ զվմզոմոմոմոմոմ—շտի մսն

: յտոմոմոմ զվմզ ոզոմոմ • տոմոմոմ—մսիտոմ (73

: մնտոմոմոմ վմսիտոմ վմոմոմոմ—մվյգ (74

... մզ վմզիտոմոմ

նվյտոմ ոմ 'տոմոմ ոզմ չոմ 'զմոմ զտոմոմ

'վմզոմոմ վժ չոմ՜՜՜՜՜՜՜ զոմ ոմվ՜՜—մթ

—զոմոմ նզոմոմոմոմոմ—'մոմոմ չոմ զ մզոմ

դ 'մզոմզոմ 'զ ոմոմոմոմոմ մոմզոմ —

: յմզոմոմ զոմոմ զվիտ ոմի 'զվ՜՜՜՜՜՜՜

վի՜՜՜՜ զոմոմ մմզոմ վմոմոմոմ մվյտոմ

: վմոմ վտիտ ոմ մսի 'մթզոմոմ յտոմոմոմ

—'մմզոմ յտիտ մվ մզ յտոմոմ մսի 'զվզ

—տիտոմ վի՜՜՜՜ դ տոմ վզոմի զվմզ յտիտոմ

Յ Ա Ն Կ

	Էջ
1. Կանաչ սանրը	3
2. Դարչնագույն ապստամբութուն	26
3. Դառուգա	61
4. Մահից սալ սափիկի	100

Ն Կ Ա Տ Վ Ա Մ Վ Ի Թ Ա Ա Կ Ն Ե Ր

Տպված է

պեթե և լիմի

- Նշ 3-րդ վերնագիրը-կանաչ սարը — կանաչ սանրը
 » 4-րդ տող 13 ներքեից—Ո՞ր ե—Ո՞ր ե
 » 7-րդ » 13 » վիշն—վիշտն
 » 8-րդ » 9 » քոմին—քամին
 » 13-րդ » 9 » մալը—մալը
 » 14-րդ » 4 » Ի՞նչ դեղեցիկ է տներ են—Ի՞նչ դե-
 դեցիկ տներ են
 » 14-րդ » 3 » մի տեսածով—Իմ տեսածով
 » 17-րդ » 4 վերեից—եղնեմ—կզնես
 » 21-րդ » 5 » Մանառան—Մանարն
 » 21-րդ » 11 ներքեից—տնկարներին—տնկարաններին
 » 22-րդ » 7 » մասնոգետներ—մասնադետներ
 » 22-րդ » 1 » տնկատըրոջը—տնկարանատըրոջը
 » 24-րդ » 15 » բերբեր—բերբերի
 » 33-րդ » 12 » փոյլատակող—փայլատակող
 » 35-րդ » 9 » ճշտուլթյամե—ճշտուլթյամբ
 » 36-րդ » 6 վերեից ասորամբուլթյուն — աստամբուլթյուն
 » 47-րդ » 2 ներքեից կանոնեն—կհանեն
 » 54-րդ » 7 վերեից հնարավոր—հնարավոր
 » 62-րդ » 6 ներքեից Դաուդանին—Դաուդային
 » 81-րդ » 14 վերեից Արեյելքում—Արեյելքում
 » 86-րդ » 8 վերեից նվողալ—նզովալ
 » 88-րդ » 8 ներքեից կողմում եյին—կազմում եյին
 » 104-րդ » 7 » խոնար—խոնարհ
 » 104-րդ » 1 » անմահ տղերը—անմահ տղերը
 » 108-րդ » 9 վերեից արեից և անդ—արեից և այդ
 » 113-րդ » 8 վերեից կորցել եր—կորցրել եր
 » 113-րդ » 11 վերեից—կանաց—կանանց
 » 123-րդ » 3 ներքեից—Յրասլավի—Յարոսլավի
 » 125-րդ » 2 » —Ժե ռվ նրանց թշնամին—Ժե ռվ և նրանց
 թշնամին
 » 134-րդ » 1 վերեից — Ստադի—Ստադի
 » 135-րդ » 4 վերեից—գաստրուսը—գաստրուսը
 » 144-րդ » 11 վերեից—կհամզվեն—կհամզվեն

ՀՀ Ազգային գրադարան



NL0316403

ԳԻՆԸ 1 Ռ. 50 ԿՈՊ.

12599

375

АЛЕКСАНДР ЧАЧИКОВ
ДАЛЕКИЕ СЕСТРЫ

Гиз ССР Армении Эривань